



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

15872

321.9

9-77



ՊՐՈՓ. Վ. ՋՈՐՋԵԱՆ

ԲՆՆՈՒՈՐԱԿԱՆ ՀԱՐՑ


Հեղինակից բոլորապես փոխադրված և լուսագրված
խմբագրությամբ և լուսագրված-բառարաններով

ԱՐՏԱՆԵՍ ԱՐՄԻՆԻԱ



ԲՈՒԿՆԵՐԱԿԱՆ

1. Թէ ինչպէս ծագեց «բանուոր. հարցը».— 2. Բանուոր. հարցը լուծելու փորձեր.— 3. Պրոֆեսորական շարժում.— 4. Սպառնալից կազմակերպութիւններ.— 5. Գործար. օրէնստուութիւն.— 6. Բանուորական ազատագրութիւն.— 7. Աշխատագործ բանուորների հոգատարութեան հարցը.— 8. Սոցիալական մարմիններ.— 9. Բնակարանային սեփորմ.— Յաւելուած:



ԹԻՖԼԻՍ 1906 թ.

26 SEP 2006
15 JAN 2010

Արտի Երանյան
Գրքերի քարտեզ
Բարձրագույն

21.9
77

ՊՐՈՓ. ՎԵՐՆԵՐ ԶՈՄՐԱՆՔ

սճ

ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՀԱՐՑ

Հեղինակի յատուկ քոլլեկցիաներ

Գերման. քարգ.

Հայաստանի Հանրապետության Գրադրամատիկական կենտրոնի Երևանի մասնաճյուղի Գրքերի քարտեզ

ԱՐՏԱՇԵՍ ԱՐԵՂԵԱՆ



ԹԻՖՆԻՍ 1906

Տպարան «ՀԵՐԱՆԻՍ» Մաղաքիան փող. 15.

(128)

13.04.2013

75872

8939000 949400 0010

ՅՈՒՆԵՍԿՈ ԿՈՄԻՏԵ

Միջազգային կրթության և գիտության օրգանիզացիա

Հասցե

Дозволено цензурою. Тифлиси, 7 ноября 1905 г.



8316-56

Ա.Ռ.ՋԻՆԻ ԳԼՈՒԽ

Թէ ԻՆՉՊԷՍ ԾԱԳԵՑ «ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՀԱՐՑԸ»

1. ԱՆԳԼԻՍԿԱՆ ԿԱՊՈՅՑ ԳՐՔԵՐԻՑ.

1840-ական թուականներին անգլիական կառավարութիւնը կազմել տուեց պաշտօնական տեղեկագիրներ (էնքետներ) գործարանական բանուորները, մասնաւորապէս փոքրահասակ բանուորները դրութեան մասին: Այս պաշտօնական փաստաթղթերի մէջ կարգում ենք մենք, ըստ բախտին բանալով մի երես, հետեւալը.—

Լեռնային գործարաններում.

Պատահում են դէպքեր, որ 4, երբեմն 5, 5—6, 6—7, 7—8 տարեկան երեխաներ սկսում են աշխատել այս գործարաններում: Իսկ ս ո վ ու ռ ա բ ա ը երեխաները այստեղ սկսում են աշխատել 8—9 տարեկան հասակից: Լեռնային գործարաններում աշխատող անձերի մի խոշոր մասը 13 տարին լրացրած չէ. նրանց աւելի մեծ տոկոսը կազմում են 13—18 տարեկան պատանիներ:

Ամենափոքրահասակ երեխաների կատարելիք աշխատանքի (դռներին հսկելը) բնութիւնն իսկ պայմանաւորում է, որ նրանք գործարան մտնեն՝ հենց որ աշխատանքը սկսւում է այնտեղ, և թողնեն իրենց աշխատավայրը միայն այն ժամանակ, երբ այնտեղ հանգստի ժամն է հասնում: Դռան մօտ կանգնելու և հըսկելու գրադժուները հազիւ թէ աշխատանք անուանել կարելի լինի. դեռ այն էլ կայ, որ երեխաները սովորաբար խաւարում են կանգնած լինում և բոլորովին միայնակ: Այդ գրադժուները ամենազաժան բանդարդելութեան կընմանէր, եթէ քարածուխ կրող սայլակները դռնէ երբեմն—երբեմն նրանց առջևէով շանցնէին: Կան լեռնային հանքեր, որտեղ աշխատող երեխաների դրութիւնը համեմատաբար պակաս դժնդակ է, պակաս ծանծրալի և ապշեցնող՝ շնորհիւ գլխաւոր անցքերի միջով ներս ցայտող լոյսի: Սակայն կան նաև այնպիսի լեռնային գործարաններ, որտեղ զբաղուող երեխաները անընդհատ բոլորովին միայնակ են մնում խաւարում այնչափ ժամանակ, որչափ որ նրանք այնտեղ մնալ պարտաւոր են: Շատ երեխաներ պատմում են, որ ձմեռուայ մեծագոյն մասում շաբաթներ են անցնում, որոնց ընթացքում նրանք օրուայ լոյս չեն տեսնում—չհաշուած կիրակի և տօն օրերը:

Գործարաններից դէպի գլխաւոր անցքերը տանող ճանապարհով քարածուխի սայլակներ հրելու և բարշելու ծանր աշխատանքը կա-

տարւում են տարբեր հասակի երեխաներ—սկսած վեց տարեկաններից: Այս աշխատանքը, ինչպէս հաւաստիացնում են բոլոր վկաները, պահանջում է փոքրահասակ բանուորների կողմից ֆիզիկական բովանդակ ոյժերի անընդհատ լարում:

Այն քարածուխային հանքերում, որտեղ նաև կին-բանուորներ են աշխատում, կին թէ տղամարդ միանման գործ են կատարում միևնոյն ժամանակամիջոցում: Տղայ թէ աղջիկ, երիտասարդ տղամարդ թէ երիտասարդ կին, մինչև իսկ ամուսնացած և յլի կանայք աշխատում են համարեա մերկ մարմնով, իսկ տղամարդիկ՝ երբեմն բոլորովին մերկ: Ստորերկրեայ աշխատանքի անբարոյականացնող ազդեցութիւնը կանանց վրայ՝ հաստատւում բոլոր վկաների բերանով:

Փոքրահասակ և երիտասարդ բանուորների աշխատութեան ժամանակամիջոցը տեւում է—երբ աշխատանքը իր լիակատար ընթացքի մէջ է լինում—շատ հազուադէպ անգամ տասններկու ժամ, մի քանի տեղեր՝ տասըններեք ժամ, իսկ մէկ տեղ՝ սովորաբար տասնևչորս ժամ և աւելի: Այս լեռնային գործարանների մեծագոյն մասում գիշերային զբաղմունքը սովորական աշխատութեան սխտեմի մի մասն է կազմում և գործադրւում է աւելի կամ պակաս չափով—նայած քարածուխի համար եղած պահանջին: Բոլոր վկայութիւնները միաբերան ցոյց են տալիս, թէ ինչ վա-

սարեր ազգեցութիւն ունէ այս հանգամանքը բանուորների, յատկապէս փոքրահասակ բանուորների ֆիզիկական և բարոյական զարգացման վրայ:

Իսկապէս ասած օրական այսքան ժամ անող աշխատանքը անընդհատ չէ: Զբաղմունքի բնութիւնն իսկ պահանջում է, որ մի քանի ըրպէ տևող հանգիստներ լինեն. բայց և այնպէս խօսք լինել չէ կարող կանոնաւոր հանգըստի մասին: Աշխատութեան ժամանակ միայն բանուորները, լաւ թէ վատ, իրենց սնունդի հոգան են քաշում:

Բոլոր քարածուխային գործարաններում էլ շատ յաճախ պատահում են ըստ ամենայնի սարսուկի դժբախտ դիպուածներ: Թէ մեր յիշատակած տեղեկութիւնները և թէ վիճակագրական տախտակները ապացուցանում են, որ դժբախտ դիպուածներին զոհ գնացող փոքրահասակ բանուորների թիւը սովորաբար այնքան է լինում, որքան չափահաս բանուորներինը, սակաւ անգամ միայն աւելի քիչ: Դժբախտ դիպուածների ամենագլխաւոր պատճառներից մէկը այն է համարւում, որ գործարանային վերահսկողութիւնը չափազանց անբաւարար է լինում: Անգոհացուցիչ է նաև լեռնային գործարանների առողջապահական վիճակը: Չկայ թարմացնող և բաւարար օդափոխութիւն: Բաւարար չափով հոգս չէ տարւում նաև, որ գաղախիտ բաժանմունքներում դիւրութեամբ հրդեհ չբռնկէ: Յաճախակի

կրկնուող ծանր դժբախտ դիպուածներ առաջանում են նաև նրանից, որ օդափոխիչների փակումը համարեա միշտ շատ փոքր երեխաների է յանձնւում: Բազմաթիւ լեռնային գործարաններում չեն անւում նոյն իսկ ամենաանհրաժեշտ միջոցների դժբախտ դիպուածների դէմ: Ինչպէս երևում է՝ բնաւ ծախքեր էլ չեն անւում բանուորների ապահովութեան, ևս առաւել քիչ՝ նրանց յարմարութիւնների համար:

Այս տեսակ աշխատանքը, որ սովորական է այժմ բոլոր լեռնային գործարաններում, առաջացնում է բանուորի ֆիզիկական կազմուածքի կործանում: Հետևանքն էլ այն է լինում, որ լեռնային բանուորը շատ վաղաժամանակ է կորցնում իր մկանների ոյժը. նա շատ աւելի վաղ է դառնում աշխատանքի անընդունակ, քան արդիւնագործութեան ուրիշ ճիւղի բանուոր:

Միևնոյն պատճառներն են, որ բանուորի մէջ մանկութեան և պատանեկութեան հասակում արդէն վատթար և մահաբեր հիւանդութիւնների սազմեր են առաջացնում, որոնք դանդաղօրէն, բայց անդադրում զարգանալով՝ բանուորին մինչև 30—40 տարեկան հասակը ծայրայեղ վտանգաւոր դրութեան մէջ են դնում. այնպէս որ այս դասակարգի մարդիկ սովորաբար 50 տարեկանից յետոյ կորցրած են լինում իրենց կեանքը:

Աշխատաւոր երեխաների դրութիւնը արհեստանոցներում և գործարաններում.

Պատահում են դէպքեր, որ երեք-չորս տարեկան, շատ անգամ էլ հինգ կամ վեց տարեկան երեխաներ արդէն սկսում են աշխատել. իսկ ընդհանրապէս առած եօթ կամ ութ տարեկան հասակից են սկսում աշխատել: Համեմատաբար շատ արհեստանոցներում և գործարաններում աշխատում են նմանապէս մատաղ հասակի տէր աղջիկներ՝ տղաների հետ միատեղ:

Որոշ արհեստանոցներում և գործարաններում աշխատող աղջիկների թիւը նոյն իսկ աւելի է տղաների թուից. իսկ սակաւաթիւ դէպքերում աշխատանքը կատարում է համարեա միմիայն աղջիկների և երիտասարդ կանանց ձեռքով:

Արհեստանոցների մեծագոյն մասը վերին աստիճանի անբաւարար վիճակի մէջ է նաև՝ ինչ վերաբերում է նրանց առողջապահական վիճակին:

Սակաւ դէպքերում միայն աշխատանքի ժամանակամիջոցը տևում է ոչ աւելի քան տասը ժամ, երբեմն տասնութէկ ժամ, աւելի յաճախ՝ տասններկու ժամ. իսկ շատ դէպքերում էլ աշխատանքը տևում է տասնեօրեց, տասնեւեց, նոյն իսկ տասնութ ժամ անընդհատ:

Համարեա ամենուրեք երեխայ-բանուորներն ևս աշխատում են այնչափ, որչափ չափա-

հասները, — երբեմն տասնեւեց, նոյն իսկ տասնութ ժամ անընդհատ:

Մայրաքաղաքում գտնուող զարգացածաւորների և կլին-դերձակների մօտ աշխատող երիտասարդ կանայք բարձր սեզոնի միջոցին, որ տևում է Լոնդոնում չորս ամիս, աշխատում են ընդհանրապէս օրական տասնեօրեց ժամ լարուած դրութեան մէջ: Յաճախ յայտնուող մեծ պահանջի ժամանակ աշխատում են տասընութ ժամ, իսկ շատ խանութներում «սեզոնի» ժամանակ առհասարակ չկայ աշխատանքի ժամերի սահմանափակում: Այսպիսով երիտասարդ կլին-բանուորները հանգստի և քնի համար իրենց տրամադրութեան տակ ունեն ոչ աւելի քան վեց ժամ, յաճախ չորս կամ երեք, և մի քանի դէպքերում միմիայն երկու ժամ. շատ յաճախ աշխատում են նրանք ամբողջ գիշերով: Իրողութիւնը այն է, որ նըրանց աշխատանքը կանգ է առնում միայն այն ժամանակ, երբ արդէն նրանց Ֆիզիկական ոյժերը այլևս ամենեկին ընդունակ չեն լինում գործելու:

Շատ մեծ ու յայտնի արհեստանոցներում և գործարաններում գիշերով չեն աշխատում. իսկ ուրիշներում, ընդհակառակը, գիշերային աշխատանքը սովորական է: Բոլոր վկայութիւնները միաբերան հաստատում են, որ գիշերային աշխատանքը սպանիչ ազդեցութիւն ունէ թէ բանուորների վրայ ընդհանրապէս, և թէ փոքրահասակ բանուորների վրայ մասնա-

ւորապէս. ու այս՝ թէ ֆիզիկական և թէ բարոյական տեսակէտից: Եւ մանրակրկիտ կերպով ապացուցուած բան է, որ նոյն իսկ գործարանատէրերը բնաւ շահ չունեն աշխատանքի այսպիսի վատթար պայմաններից:

Արհեստանոցների և գործարանների մեծագոյն մասում սովորաբար տրուում է բանուորին մէկ և կէսից մինչև երկու ժամ ազատ միջոց ճաշելու համար, որի ընթացքում և առհասարակ աշխատանքը ընդհատուում է և մեքենայի գործը դադար առնում: Մի քանի լեռնային գործարաններում պատահում է սակայն, չնայած հանգստի և ճաշի համար օրէնքով սահմանած միջոցին, որ աշխատանքը միայն կարճ ժամանակով և կամ բնաւ չէ ընդհատուում. այս դէպքում բանուորները իրենց սնունդի հոգսը քաշում են շատ անյարմար ժամերի:

Շատ արհեստանոցներում և գործարաններում, յատկապէս դնդասեղի, գուլպաների և նման գործարաններում երեխաները չեն ստանում լաւ կամ գոնէ բաւարար կերակուր, և ոչ էլ տաք և վայելուչ զգեստ: Շատ երեխաներ ուղղած հարցին պատասխանել են, որ նրանք միայն հաղուադէպ անգամ և կամ երբէք բաւարար չափով կերակուր չեն ստացել. իսկ շատերն էլ ցնցոտիներէ մէջ են ծածկուած: Նմանապէս ընդհանուր դժգոհութիւն կայ, որ սրանք վաելուչ զգեստ չունենալու պատճառով զրկուած են լինում եկեղև-

ցի և կիրակնօրեայ դպրոց յաճախելու յարմարութիւնից:

Այսպիսի գործարաններում աշխատող երեխայ—բանուորների մի որոշ մասը միայն ամուր կազմուածքի տէր է և առոյգ. իսկ ընդհանրապէս առած նրանք սովորական չափով չեն աճում: Նրանց մեծագոյն մասը կազմուածքով շատ անառողջ է լինում. ու այդ՝ շնորհիւ վաղաժամ սկսուող աշխատանքի, անչափ երկարատե զբաղմունքի, թերի և անբաւարար սնունդի և պակաս հանգստի միահամուռ կորըստարեք ազդեցութեան. Այս փոքրահասակ բանուորները մեծ մասով հաշմանդամ են, գունատ, վտիտ և հիւանդոտ: Մի խօսքով դիտողի վրայ նրանք թողնում են ֆիզիկական ոյժերը աւելի ու աւելի սպառող սերունդի սպաւորութիւն:

Այս փոքրահասակ բանուորներին ճարակող հիւանդութիւնները, որոնց նրանք աւելի չափով ենթակայ են քան նոյն հասակի և դիրքի տէր, բայց աշխատելու չստիպուած երեխաներ, պատկանում են անդառութեան օրգանների հիւանդութեան տեսակներին, կամ լինում են հաշմանդամութիւն, ողնաշարի խախտում, մարմնի անդամների կազմալուծում և կամ թոքերի հիւանդութիւններ, որոնց հետեւանքն է ծիւրախտ կամ թոքախտ:

Դաստիարակութիւն:

Տասնևմէկ տարեկան մի աղջիկ պատաս-
խանում է, որ նա յաճախել է թէ ամենօրեայ
և թէ կիրակնօրեայ դպրոց, բայց բնաւ լսած
չկայ մի ուրիշ աշխարհի՝ ոչ երկնքի և ոչ
էլ հանդերձեալ կեանքի մասին: Տասնևեօթ
տարեկան մի երիտասարդ չգիտէր, թէ 2 X 2
որքան է անում. նա չէր ճանաչում իսկ գոր-
ծածութեան մէջ եղող դրամները: Մի քանի
մանուկներ բնաւ լսած չէին Լոնդոնից դատ
մի ուրիշ տեղի մասին, նոյն իսկ Լոնդոնի
շրջակաների մասին: Ուրիշները լսած չեն եր-
բէք իրենց թագաւորի անունը, չգիտեն թէ
նվբեր են եղել Վելլինգտոն, Նելսըն, Բոնա-
պարտ և այլն: Սակայն շատ նշանակալից է
այն հանգամանքը, որ Պօղոս առաքեալի, Մով-
սէս ժարգարէի կամ Սողոմոն թագաւորի ա-
նունները անգամ չլսած փոքրահասակ բան-
ուորները ընդհանրապէս առած լաւ տեղեակ էին,
թէ ով է եղել և ինչ կեանք է վարել աւագա-
կապետ Դիկ Տուրրին, կամ մանաւանդ գող և
աւագակ Զակ Շեպպերդ: Կիրակնօրեայ դպր-
ոց յաճախած դէպքում իսկ խղճուկ երեխա-
ների մտքի շփոթութիւնը սոսկալի է: Օրինակ
մի երեխայ, որ վեց տարի շարունակ կիրակ-
նօրեայ դպրոց է յաճախել, ասում է. «Ես գի-
տեմ թէ ով է եղել Յիսուս Քրիստոս: Նա մե-
ռաւ խաչի վրայ և թափեց իր արիւնը մեր
Փրկչին փրկելու համար»: Տասնևվեց տարեկան

մի ուրիշ երեխայ անդում էր, թէ «Յիսուս վաղ
ժամանակներում Լոնդոնի թագաւոր է եղել»: Իրենց
երեկոյեան ազօթքը ասելիս, ինչպէս
շատերն են անում սովորաբար, երեխաները
արտասանում են հայր-մերի միայն առաջին
բառերը «հայր մեր»,—ու այս է նրանց բոլոր
իմացածը: Եւ որովհետև շատերը իրենց հօր
ձեռքի տակ են աշխատում, ուրեմն և անտա-
րակոյս «հայր» ասելով նրանք իրենց հօրն են
ի նկատի ունենում:

Լեոնային գործարանական շրջաններից մէ-
կի երիտասարդ ազգաբնակութեան վիճակի և
բնաւորութեան մասին միտքը Հօրնի կազ-
մած տեղեկագրին նայելով այնտեղի երե-
խաների մեծագոյն մասը գտնում է բարո-
յականութեան ամենաստոր աստիճանի վրայ՝
բառի ամենաընդարձակ մտքով: Ոչ թէ առան-
ձնապէս աչքի է ընկնում այն, որ նրանք մո-
լի են և ոճրագործ, այլ այն, որ նրանց մէջ
իսպառ բացակայում է բարոյական զգացումը:
Չէ զարգացած նրանց մէջ դէպի ծնողները ու-
նենալիք պարտաւորութեան և սիրոյ զգացու-
մը: Միտքը Հօրն գրում է. «Այս իրողութիւնը
ես վերագրում եմ այն հանգամանքին, որ ե-
րեխաները մատաղ հասակից արդէն աշխա-
տանքի են ուղարկւում. նրանց ծնողները աչք
են տնկում, թէ իրենց երեխաները երբ և որ-
չափ փող պիտի վաստակեն ծնողների համար:
Այսպիսով երեխան բնագոյրաբար զգում է, որ
ծնողները նրան գործ են ածում իբրև սոսկ

մեքենայ, Մշտատե աշխատանքի շնորհիւ կարճ
 ժամանակում պակասում է և ապա միանգա-
 մայն սպառում սէրը դէպի ծնողները: Գոյր
 և եղբայր բաժանւում են իրարից մանուկ հա-
 սակում և յաճախ միայն յետագայում տեղե-
 կութիւն են ձեռք բերում իրար մասին, պատ-
 ճառ որ նրանք ժամանակ անգամ չեն ունեցել
 իրար սեանելու, ճանաչելու: Այդ վաղաժամա-
 նակ աշխատանքը երեխայ բանուորի մատող
 և զգայուն հոգին անմիջապէս մղում է դէպի
 ամենաստոր լպրշութիւն և բիրտ վերաբեր-
 մունք: Մեծապէս վնասում է երեխայի ճշը-
 մարտասիրութիւնը, զգայուն հոգին, մի խօս-
 քով բնաւորութեան բոլոր լաւ կողմերը. ու
 ամեն մի փորձ՝ առաքինի սկզբունքների պատ-
 ուաստելու երեխայի հոգու մէջ՝ հենց սազմում
 իսկ խեղդւում է:

Նոյն շրջանի մի քանի ակնաւոր մար-
 դիկ վկայում են: «Այստեղ մեր շուրջը դուք
 կգտնէք շատ թուով չափահաս և ամուսնացած
 մարդիկ, 40—50 տարեկան, որ Ս. Գրքից մի
 խօսք անգամ չգիտեն. նրանք նոյն իսկ ան-
 կարող են հաշուել իրենց ստացած աշխատա-
 վարձը: Հենց այս մարդիկ են ամենափասա-
 կար տարր կազմողները: Նրանք խմում են
 չափազանց շատ, արբեցողութեան են տալիս
 իրենց ընտանիքի բերանի հացը, ամենակեղ-
 տոտ յիշոյցներ են թափում: Նրանցից մի քա-
 նիսը յայտնում են, որ նրանք պիտի մեռնեն
 ինչպէս մի շուն և գրանով էլ վերջ պիտի

տրուէ իրենց գոյութեան: Երբ նրանք դադա-
 րում են կիրակնօրեայ և ամենօրեայ դպրոց
 յաճախելուց՝ աւելի ու աւելի են դառնում բիրտ.
 այնուհետև էլ նրանք ոչ կարող են հաւատալ
 և ոչ էլ ցանկանում են հաւատ ունենալ: Նը-
 րանց յատուկ են զազրելի սովորութիւններ,
 վարում են լպիրշ խօսակցութիւններ, դիւր են
 զալիս իրար միայն անսանձ մտքերի արտա-
 յայտութեամբ: Նրանք յայտնում են, որ իրենց
 հայրերն էլ իրենց նման հաւատացող չեն եղել,
 վարուել են և ապրել հենց այնպէս, ինչպէս
 որդիները. ու այս ճշմարիտ է. պատճառներն
 էլ նոյնն են, որոնց ենթարկուած են այժմ խեղճ
 մանուկները իրենք»:

Լեռնային հանքերում, արհեստանոցներում և
 գործարաններում աշխատող երեխաների բարո-
 յակամ վիճակի նկարագրութիւնների ամփոփում:

Մեծ թուով և միասին աշխատող այս ե-
 րեխաների մէջ քչերը կպանուեն, որ ապրելիս
 չլինեն բարոյապէս ցաւալի և անկեալ կեան-
 քով: Բարոյական վիճակի այս ստոր աստի-
 ճանը հետեանք է արդէն բարոյական պարտա-
 ւորութիւնների և պատգամների ընդհանուր
 անգիտութեան, բարոյական և կրօնական դաս-
 տիարակութեան բացակայութեան: Այս վիճա-
 կը երևան է զալիս մերթ լպիրշ շարժումնե-
 րով, անվայել և փողոցային խօսակցութիւն-
 ներով, մերթ էլ բիրտ—զբախական անբարո-

13373

1690

յականութեամբ, որ երկու սեռի մէջ էլ յաճախ շատ փոքր հասակից սկսուած է սովորական դառնալ:

Բարոյական հասկացողութեան բացարձակ բացակայութիւնը առաջանում է նրանից, որ, ընդհանրապէս առած, չկայ բարոյական և կրօնական դաստիարակութիւն: Այս դասակարգի մէջ համեմատաբար հազուադէպ բան է, որ երեխաներին վիճակուած լինէր բարոյական, կրօնական ծնողներ ունենալու բախտը, որոնք իրենց երեխաներին այդ ոգով կրթել և դաստիարակել գիտենային: Ընդհակառակը, երեխաների բարոյական ցաւալի վիճակը հետեանք է իրենց ծնողների բարոյական անկման. սրանք իրենց դաւակներին ոչ կարող են բարի օրինակ հանդիսանալ և ոչ էլ կարող են նրանց վրայ բարեկիրթ հսկողութիւն ունենալ, պատճառ որ նրանք իրենք մեծացել են առանց աւաքինի բարքեր իւրացնելու:

— Եւ դիտմամբ մանրամասն տեղեկութիւն տուել անդլիական յայտնի տեղեկագիրներէ եզրակացութիւնների մասին, և դիտմամբ բառացի կերպով յիշատակեցի նրանց՝ առանց ծանօթութիւններով խճողելու: Ես այսպէս վարուեցի՝ համոզուած լինելով, որ բանուորական հարցի տարբեր կողմերը ըմբռնելու համար չկայ աւելի լաւ ուղեցոյց, քան ժամանակակից պրոլետարիատի թշուառութիւնը պատմող յիշած փաստաթղթերի ուսումնասիրութիւնը: Ով գոնէ մի քանի ըսպէով իր վրայ զգաց վերելի սոսկալի մերկացումների

տպաւորութիւնը — իսկ այսպէս պիտի լինի ամեն մի բնական զգացում ունեցող մարդ, — նա ուրեմն անկասկած ձեռք բերեց ամենարնական տրամադրութիւն՝ բանուորական հարցի մանրամասնութիւններին հարկաւոր կարեկցութեամբ հետեւիլու: Սոսկ այն իրողութիւնը, որ մօտ կէս դար առաջ այն ժամանակի ամենաառաջադէմ կուրտուրական երկրում հնարաւոր էին վերոյիշեալ սոսկալի պայմանները, — հենց այդ հանգամանքն իսկ ցոյց է տալիս, թէ սրչափ անհրաժեշտ է լիշած երեւոյթների ու պատճառների լրջմիտ ուսումնասիրութիւնը:

83/6-56

Եթէ հարցնելու լինենք նախ, թէ այն նկարագրութիւնները կարգալիս ինչն է, որ մեզ մեծապէս յուզում է, այն ժամանակ կատանենք մենք, որ ամենից առաջ մեր աչքի առջև բացուող անհատական թշուառութիւնն է, որ մեր կուրծքը լեցնում է բնական կարեկցութեամբ: Մենք ողբում ենք սովամահ մանկահասակ բանուորների վիճակը, որոնք հանքերում և գործարաններում իրենց մտայլ գոյութիւնն են քարշ սալիս: Մենք ողբում ենք՝ տեսնելով փողոցում սողոսկող և գուրատ ու ուրուականի զէմքով հաշմանդամ կերպարանքներ: Մենք կարեկցում ենք անտեսական տափնապի շէմքին խեղճութեան և թշուառութեան ճիրանը նետուող անհաց, սովամահի վտանգուած մարդ — արարածին:

Սակայն ինձ թւում է, թէ սոսկ անհատական թշուառութիւնը չէ, որ ճնշում է մեր կուրծքը՝ կարգալով անդուռն թշուառութեան նկարա-



գրութիւնները: Մեր հոգին սարսափի զգացումով լեցնողը այն գիտակցութիւնն է, որ հասել է վերջին ծայր անկում, որ օրաուր հիմնովին քակուում են մարդկութեան՝ իբրև մի բարոյական ամբողջութեան՝ զսպող—պահպանող հանգոյցները, որ այդպիսով մօտ է կատարեալ վերադարձը դէպի բարբարոսական գրութիւն: Այս է այն բոլորը, ինչ մենք կարգում ենք պաշտօնական ուսումնասիրութեան էջերում:

11. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԳՐՈՒԹՎԱՆ ԲՆՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՅԱՑԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Վերևի ներածական նկատողութիւններից յետոյ կուզէի ընթերցողի համար սխտեմատիկ կարգաբանութեամբ պարզել այն կէտերը, որոնց օգնութեամբ մենք ժամանակակից պրոլետարիատի առանձնայատուկ գրութիւնը, մասնաւորապէս նրա սեփական թշուառութիւնը չափել կարող ենք:

1. Պատմական անհրաժեշտութիւն է, որ գոյութիւն ունենայ պրոլետարիատ այնտեղ, ուր ծագում է տընտեսութեան կապիտալիստական սխտեմը: Պրոլետարիատ ասելով մենք հասկանում ենք ամբողջ կեանքի ընթացքում ազատ, բայց սեփականազուրկ մի դասակարգ, որ ստիպուած է իրեն ապրուստ տուող գործատիրոջ ծառայութեան մէջ մտնել, քանի որ այլպէս նա զուրկ կմնար ապրուստի միջոցներից: Պրոլետարիատը հետևում է կապիտալիզմին իբրև սրա ստուերը. այո, մինչև



անգամ ասել կարելի է, որ նա սուկ պատկերացնում է կապիտալիզմի միւս երեսը: Պրոլետարիատ բառը ինքն ըստ ինքեան չէ բնորոշում մի խրոչճուկ գոյութիւն, թէպէտ և իսկպէս սոյսպիսի գրութեան արտայայտութիւն է նա սկզբնապէս: Պրոլետարիատ բառը արտացոլում է ազգաբնակչութեան որոշ դասակարգի պատմական առանձնայատուկ բնոյթը: Այս պատճառով էլ շատ հնարաւոր բան է, որ ուէ երկրում աւելի աղքատ ժողովրդական խաւեր լինեն, քան պրոլետարիատի որոշ տարրեր: Այսպէս օրինակ կարող է պատահել, որ մի կապիտալիստական ձեռնարկութեան մէջ լու վարձատրուող բանուորը աւելի տանելի վիճակ ունենայ, քան մանր և չքաւոր արհեստաւորը, թէպէտ և առաջինը պատմական նկարագրին նայելով պրոլետարիատ դասակարգին է պատկանում, իսկ վերջինը, չնայած իր չնչին եկամուտին, պէտք է որոշուէ իբրև մանր բուրժուայ (մանր քաղաքացի): Եթէ կամենալու լինենք բոլորովին խուսափել պրոլետարիատ բառի գործածութիւնից, ապա կարելի կլինի նրա փոխարէն ընտրել՝ ազատ, սեփականազուրկ և վարձագընով աշխատող բանուորական դասակարգ (մի փոքր ծանրալուր) արտայայտութիւնը:

Կան, ինքնին հասկանալի է, միքանի կարգ պրոլետարներ: Նախ և առաջ որոշում են գիւղատնտեսական, առևտրական, արդիւնագործական պրոլետարներ, — նայած տնտեսական կեանքի որպիսութեան: Հետևեալում խօսք կլինի միայն արդիւնագործական պրոլետարիատի մասին, ուրեմն և

վարձադնով աշխատող բանուորների մասին, որոնք մեր ժամանակակից տնտեսական կեանքում զբաղւում են հում նիւթ մշակելով և ազնուացնելով: Արդիւնադորձական բանուոր դասակարգի մէջ մենք կրկին որոշում ենք տղամարդ, կին, պատանի և մանկահասակ բանուորներ: Ապա պէտք է որոշել՝ վարժուած և համրակ բանուորներ: Այս վերջին երկու կարգի բանուորներին իրարից դանազանելու համար չկայ մի որոշ յատկանիշ: Ընդհանրապէս վարժուած բանուորների թւում են հաշւում նրանց, որոնք ձեռք են բերել արհեստաւորական կատարելագործութիւն, այս պատճառով էլ նրանք Գերմանիայում յաճախ կոչւում են վարպետի օգնական (քարգահ—Geselle, подмастерье): Այսպէս է մանաւանդ գործարանական արդիւնագործութեանն այն ճիւղերում, ուր կարճ ժամանակ առաջ իշխում էր արհեստը. այսպէս օրինակ դարբնութեան, ատաղձագործութեան, կօշկակարութեան, դարեջրագործութեան մէջ, և այլն: Սակայն կարևոր է նկատել, ինչպէս այդ դեռ մենք հետևեալում կտեսնենք, որ արհեստաւորի գործը չէ դադարում նաև այնտեղ, ուր աշխատանքի հին, արհեստային եղանակը վաղուց արդէն տեղի է տուել տնտեսութեան ժամանակակից եղանակին:

2. Արդիւնագործական պրոլետարիատի կենցաղավարութիւնը պարունակում է իր մէջ նախ այնպիսի գրծեր, որոնք միաժամանակ յատուկ են պրոլետարիատի ընդ խաւերին, կամ նոյն իսկ բոլոր սեփականա-

զուրկ անձերին: Այս գծերից առանձին յիշատակութեան արժանի են հետևեալները:

ա) Գոյութեան անապահովութիւնը, որ հետևանք է նախ անհատական դժբախտութիւնների, ինչպէս են օրինակ հիւանդութիւն, վարակում, դժբախտ պատահարներ աշխատութեան ժամանակ, և այլն: Ուրեմն ազգաբնակչութեան այն բոլոր խաւերը, որոնք օր աշխատում են օր ուտում, ուրիշ խօսքով նրանք, որոնք իրենց ձեռքի աշխատանքով ամեն Աստուծոյ օր այնչափ են միայն վաստակում, որչափ որ նրանք այդ օրը սպառելու պէտք ունեն, — նրանք բոլորը սովի կմատնուեն հենց այն վայրկեանից, երբ յիշատակած պատճառներից ունէ մէկի շնորհիւ այլ ևս հնարաւորութիւն չեն ունենայ իրենց աշխատելու կարողութեանը գործադրութիւն տալ: Աշխատութեան դադարելով էլ անմիջապէս չորանում է ապրուստի աղբիւրը: Այս վիճակի մէջ են եղել սկզբից ի վեր բոլոր սեփականագուրկ, ազատ և իրենց ձեռքի աշխատանքով ապրող ժողովրդական տարբերը: Մի ուրիշ, նաև բոլոր աղքատ շրջաններին յատուկ, ընդհանուր երեոյթ է, որ նրանք քաղցած կմնան, եթէ ունէ բնական պատահարի պատճառով խցուէ նրանց ապրուստի աղբիւրը: Այսպէս է՝ երբ օրինակ չինացի կամ հընդիկ գիւղացին անյաջող հունձի պատճառով վրդւում է իր ամբողջ տարուայ աշխատանքի պտուղներից: Սակայն ժամանակակից պրոլետարիատի բնորոշ յատկանիշը այն է, որ նրա գոյութիւնը վտանդի ենթակայ է ոչ—անհատական պատճա-

ուով, ոչ էլ այդ դրութիւնը հետեանք է բնական պատահարներին, այլ միմիայն տնտեսական կեանքի առանձնայատուկ կազմակերպութեան:

Իրերի այսպիսի վիճակը կարելի է անուանել գոյութեան սոցիալական անապահովութիւն, ինչպէս որ նա մեր ժամանակակից տնտեսութեան մէջ այսպէս կոչուած անպարտ աշխատազրկութիւն անուան տասի ժամանակ առ ժամոնակ կանոնաւորապէս երեան է գալիս: Այս անգործ վիճակը, որի դիմաց ուրեմն առանձին բանուորը միանգամայն անզօր է, և որի համար նա բնութեան գորութիւններին պատասխանատուութեան կոչել չէ կարող, այդ առաջ է գալիս արդիւնագործական նորատեսակ ձեռնարկութիւնից և առեւտրական կեանքի խանգարումներից: Իսկ այս հանգամանքը մեծ չափով իր հետ է բերում տնտեսական կեանքի կապիտալիստական սիստեմը:

բ) Նմանապէս բոլոր պրոլետարների համար բնորոշ է նրանց ունեցած կախուէմը իրենց ապրուստ տուող գործատէրերից Այս վիճակն էլ առաջանում է վարձագնով աշխատելու պայմաններից: Թէպէտ և բանուորը գործատիրոջ հետ պայման կապելով վաճառքի չէ հանում իր ամբողջ անձը, ինչպէս որ էր նախկին դարերում, այլ մատուցանում է նրբան իր աշխատանքի կարողութեան միայն մի մասը՝ որոշ վարձատրութեան փոխարէն՝—բայց և այնպէս բանուորի կախում ունենալը գործատիրոջից բնորոշ է: Այս վիճակը արտայայտուում է նախ նրանով, որ սեփականագուրկ բանուորը ու-

ղէ-չուղէ ստիպուած է գործատիրոջից աշխատանք խնդրել, — հենց իր գոյութիւնը պահպանելու համար: Եթէ արդիւնագործական ունէ ճիւղի բոլոր գործատէրերը համաձայնուեն իրենց անհաճոյ մի բանուորի այլևս աշխատանք չյանձնել — ինչպէս որ այդ մեր ժամանակներում հազուադէպ բան չէ, — ապա այս բանը իսկապէս նշանակում է դատապարտել բանուորին սովամահի: Այս առկախ վիճակը առանձնայատուկ է սեփականագուրկ պրոլետարիատին և չէ հանդիսանում իրրե մի ընդհանուր երևոյթ, որ յատուկ լինէր ժամանակակից հասարակութեան մէջ զիրք գրաւող իւրաքանչիւր անձի:

Արդիւնագործական բանուորի համար մի ուրիշ տեսակ կախում ունենալն էլ այն է, որ նա իր աշխատանքը կատարելու ժամանակ պարտաւոր է անպայման հնազանդուել գործատիրոջ այն բոլոր կարգադրութիւններին, որ անհրաժեշտ կը համարէ նա մտցնել իր ձեռնարկութեան մէջ: Իսկապէս ասած բանուորը կորցնում է իր անհատական ազատութիւնը սկսած այն բողէից, երբ նա ոտք է կոխում գործարանի շէմքը, մինչև այն բողէն, երբ նա նորէն թողնում է գործարանը: Իսկ այն, ինչ ժամանակակից պրոլետարիատի առկախ վիճակի վրայ իր առանձին կիւիքն է դրօշմում, դա այն հանգամանքն է, որ այս առկախ վիճակը բանուորի համար տևում է մինչև նրա մահը: Շատ սակաւ բացառութիւններ հաշուի չառած, որոնք հենց ինքնին իշխող կամոնն են հաստատում, վարձագնով աշխատող բանուորը իր ամ-

բողջ կեանքի ընթացքում ֆուտ է բանուոր: Տըն-տեսութեան նախկին դարերում եղած կազմակերպութիւնների մէջ էլ բանուորի համար գոյութիւն ունէր նման առկախ վիճակ. այսպէս էին օրինակ միջին դարում արհեստաւորների օգնականներն ու աշկերտները: Բայց բանն այն է, որ անցած բոլոր ժամանակաշրջաններում սովորաբար առկախ վիճակը որոշ ժամանակ անցնելուց յետոյ փոխուում էր անկախ վիճակի: Աշկերտը դառնում էր օգնական, օգնականը՝ վարպետ: Ժամանակակից պրոլետարիատի առջև փակուած է ինքնուրոյն դառնալու նման ակնկալութիւն:

3. Ժամանակակից պրոլետարական աշխատանքի մասնակի և ընտրող առանձնայատկութիւնը այն է, որ աշխատանքը ինքը իր էութեան և արդիւնքների տեսակէտից հիմնական կերպարանափոխութեան է ենթարկուել: Այս առանձնայատկութիւնը հանգէս է գալիս դարձեալ մասնաւորապէս գործարանական բանուորների համար: Աշխատանքի կերպարանափոխութիւնը արտայատկ կարելի է մէկ խօսքով, այն է՝ աշխատանքը խոշոր արդիւնագործական կազմի և ժամանակակից տեխնիկայի շնորհիւ անկենդան է դարձած (entgeistet): Նախկին ժամանակների աշխատանքը, էպպէս առած նաև գեղջուկի աշխատանքը մեր օրերում, այն տեսակ էր, որ նա հնարաւոր էր դարձնում բանուոր մարդու կենսական բոլոր ոյժերի գործադրութիւնը: Այս տեսակ աշխատանքը մի որոշ չափով պահանջում է մտքի լարում, թէ հոգեկան և թէ մար-

մնական ոյժերի տարբեր կողմերի գործադրութիւն: Դրա հակառակ ժամանակակից աշխատանքը հասարակական խոշոր արդիւնագործութեան կազմի մէջ պահանջում է բանուոր մարդու ոյժերի միայն որոշ կողմերի գործադրութիւնը. ժամանակակից խոշոր արդիւնագործութիւնը բնորոշուում է նրանով, որ նախկին ժամանակի ամբողջական աշխատանքը այժմ մասերի է բաժանուել: Միևնույն բանուորին յանձնուում է պարբերաբար միևնույն և որոշ պատուէրի կատարելը: Այսպիսով էլ առաջանում է, ինչպէս սովոր ենք ասել, աշխատանքի մասնականացում (Arbeitsspezialisierung): Այս իսկ պատճառով աշխատանքի արտադրած արդիւնքը հանդիսանում է ոչ թէ կենդանի ստեղծագործող անհատի գործ, այլ իբրև մի հիւսուածք առանձին-առանձին գործողութեան: Աշխատանքը անկենդան է դառնում մասաւանդ այնտեղ, ուր մեքենան փոխարինում է ձեռքի աշխատանքին: Այստեղ մարդ-բանուորը հանդիսանում է իբրև սոսկ զարդ մեքենայի, որին նա ծառայում է. իսկ առաջներում, ինչպէս տեսանք, մարդն է եղել մեքենան գործադրողը: Եթէ ուզենանք յատկապէս մեքենայի աշխատանքը բնորոշել, ապա դրա համար ամենալաւ արտայայտութիւնը կլինի՝ միապաղաղ կոչումը. ու այս այսպէս է հենց այն պատճառով, որ մեքենայի շնորհիւ աշխատանքը դառնում է անկենդան, չէ պահանջում մարդու բոլոր ոյժերի և ընդունակութիւնների գործադրութիւն, այլ միևնույն և մշտապէս պահանջուող կարողութեան լարում: Դրա հետ կայ և այն, որ մեքենա-

յի աշխատանքը, համեմատած ձեռքի աշխատանքի հետ, անազնատ է. պատճառ որ գլխաւորապէս սուրբիչ, և ոչ մարդկային ոյժի միջոցով շարժուող գործիքի մեխանիզմը ստիպում է բանուորին մեքենայի բանելու ամբողջ ընթացքում գործադրել իւր ոյժերի մի որոշ մասը միայն: Այսպիսով ուրեմն անկենդան մեխանիզմը ընկճում է կենդանի մարդուն: Մա զո՞ է բերում իր անհատական ազատութիւնը սկսած այն ընդհանր, երբ բըռնադատում է հնազանդուել մեխանիզմի բմահանույթին:

— Ես փորձեցի ժամանակակից մեքենայական աշխատանքի էական կողմերը լուսարանել: Այդ աշխատանքն էլ, տեսանք, ամենուրեք հիմնուած է մասնականացման (սպեցիալիզացիայի) վրայ և ունէ սրա բոլոր առանձնայատուկ կողմերը:

Այս բոլորին կուզէի մի քանի նկատողութիւններ կցել յաճախակի կրկնուող այն անճիշտ դատողութեան վերաբերմամբ, որ լուում է մեքենայի՝ բանուորի վրայ ունեցած ազդեցութեան նկատմամբ: Անդադար կրկնուող կանխակալ կարծիքների դէմ պէտք է առարկել հետեւալը:

1. Մեքենան բնաւ չէ պահանջում ամեն ժամանակ համբալ աշխատանք: Այնպէս որ սխալ կլինէր կարծել, թէ վարժուած բանուորների կատեգորիան նոյնանում է ձեռքով աշխատողների կատեգորիայի հետ, իսկ համբալ բանուորներինը՝ մեքենայ բանեցնող բանուորների հետ: Ընդ հակառակը՝ մեքենայի պահանջած ծառայութիւնը որոշ հանգամանքներում շատ դժուարին է այն տե-

սակէտից, որ նա անհրաժեշտ է դարձնում որոշ նախապատրաստութիւն: Օրինակ՝ ժամանակակից տեխնիկայի այնպիսի հրաշալիքներ, ինչպէս են տաւեր շարող մեքենաներ, թղթի մեքենաներ և այլն, — դրանք բոլորը իրենց գործադրութեան համար պահանջում են վերին աստիճանի ընդունակ և մասնագէտ մեքենավար-բանուորներ, նաև՝ մըշտադրաղ ուշադրութիւն և անսովոր նուրբ հասկացողութիւն մեխանիզմի առանձնայատկութիւններին:

2. Մեքենան բնաւ չէ դադարեցնում արհեստի մասնագիտութիւնը, և, այդպիսով էլ, ինչպէս ասել է մի անգամ Մարքս, ժամանակակից աշխատաւորի արհեստային և մասնագիտական իդիոտիզմը: Յաճախ իշխանաբար հնչում է այն խօսքը, թէ մեքենայի ապագայ կատարելագործումը այն տեղը կհասնէ, որ ամեն ոք մէկ օր կարող կլինի դիւրութեամբ բանեցնել օր. ատաղձագործական մեքենայ, հետեւալ օրը՝ կօշկակարական մեքենայ: Դրա դէմ պէտք է առարկել, որ այս ըմբռնողութիւնը հիմնովին սխալ է, ինչպէս որ այդ առանց այլ ևայլութեան հետևում է 1. կէտի տակ թուած հիմունքներից: Եթէ մէկը վարժուում է որոշ մեքենայ վարելու մէջ՝ նշանակում է, որ նա, գոնէ շատ յաճախ, մասնագէտ է դառնում իւր գործում այն չափով, ինչ չափով ուրիշը՝ մի արհեստի մէջ վարժուելով: Սակայն տարբերութիւնը այն է, որ բանուորական առանձին կատեգորիաները մեքենայի աշխատանքի մէջ՝ որոշել կարելի է ոչ թէ համա-

ձայն նախկին արհեստաւորական կազմակերպութիւններէ, միևնոյն գործի մէջ՝ այլ մի մեքենավար բանուորին միւս մեքենավար բանուորին կցորդելով, կամ թէ տարբեր արհեստներէ մէջ նոր զանազանումներ անելով:

3. Մեքենայի աշխատանքով ամենուրեք աւելորդ չէ դարձնուած ձեռքի աշխատանքը: Այս պատճառով սխալ է կարծել, թէ տեխնիկայի կատարելագործման շնորհիւ սպագայում ուժեղ տղամարդկանց տեղը անհրաժեշտօրէն և ընդհանրապէս կրճատուի և երեխաներ: Այլև տեխնիկայի սահմաններում մնում են բաւականաչափ ղէպքեր, ուր մեքենայի գործադրութիւնը ուժեղ տղամարդու աշխատանք է պահանջում. վերջնէնք օրինակ շոգեմուրճի գործադրութիւնը, խլճուղի հարթելու աշխատանքը, և այլն:

4. Ծիշտ չէ նաև, թէ մեքենան ամեն տեղ և ամեն ժամանակ վատառողջ ազդեցութիւն ունէ բանուորի վրայ: Վատառողջութիւնը, ընդունելով հանդերձ որ նա ժամանակակից գործարանական առաջադիմութեան զուգընթաց երեոյթ է, առաջանում է աւելի ուրիշ պատճառներից, որոնք բնականաբար իսկ և նա գործական կազմակերպութեան զարգացումից: Թող որ ընկերակցական ձեռնարկութիւնների մէջ, ուր բանուորական խմբեր միասին կլրած աշխատում են, առաջանում են նաև փաստակար հետևանքներ՝ շնորհիւ օդի վատառողջութեան, փոշու, կեղտի, ազոտի, գազերի, անչափ տաքութեան կամ ցրտութեան և կամ խոնաւութեան: Իբրև ժա-

մանակակից գործարանական աշխատանքի ընդհանրացած երեոյթ պէտք է համարել այն, որ բանուորը զրկուած է գործարանում ազատ և թարմ օդ շնչելու հնարաւորութիւնից. իսկ նախկին ժամանակներում այդ բանը երբէք յիշած չափով գոյութիւն չէ ունեցել, քանի զեւ բանուորները գործարանի պատերի մէջ չէին պարփակուած: Իբա վրայ պէտք է աւելացնել և այն, որ բազմաթիւ ղէպքերում ժամանակակից աշխատանքը ղէմ է գնում ամեն բարեկերթ սովորութեան և ամօթխածութեան, պատճառելով երկու սեռի բանուորների միասնական գործավարութիւն՝ յաճախ շատ կասկածելի պայմանների մէջ: Բաւական կըլինի յիշատակել այստեղ գործարանական կապիտալիզմի անցեալ շրջաններում ընդհանրացած մի անբարոյական սովորութիւն. այն է, որ հանքային գործարաններում յաճախ միատեղ աշխատել էին տալիս կիսամերկ տղամարդկանց և կանանց:

Այս կորստաբեր հետեանքը, որ առաջացնում է ժամանակակից աշխատանքը բանուորի համար, առաւել ճակատագրական է դառնում նրանով, որ տեխնիկայի կերպարանափոխութեան շնորհիւ մեծ չափով մեծանում է նաև կիսն և փոքրահասակ բանուորների թիւը:

Աւելի էժան վարձագնով աշխատող կանանց և երեխաների զբաղմունքը հետեանք է մասամբ մեքենայի ներմուծութեան, իսկ զլիւսւորապէս՝ նախկին ժամանակի ամբողջական աշխատանքը աւելի ու աւելի մասնականացնելուն:

Աշխատանքի այս նոր եղանակը ունեցաւ մի

շարք ճակատագրական հետևանքներ անհատի և հասարակութեան կեանքի համար: Իբրև ամենամեծ իրողութիւն ժամանակակից առաջադիմութեան՝ ես համարել եմ այն, որ աշխատանքի բնաւորութեան կերպարանափոխութեան շնորհիւ աշխատանքը ինքը դադարել է բանուորի համար մի օրհնութիւն և բարիք լինելուց: Աշխատանքը յիշուի օրհնութիւն և բարիք է միայն այնչափ ժամանակ, որչափ որ ամբողջ մարդը ապրել և աշխատել կարող է: Բայց հենց որ նախկին ամբողջական աշխատանքը խորտակուեց ու բանուորը համայնացրած աշխատանքի մէջ մի անկենդան մասնական գործոն դարձաւ, մանաւանդ հենց որ աշխատանքի մէջ հակառողջապահական և այլազան անպատշաճութիւններ երևան եկան, — այդպիսով էլ անհրաժեշտաբար աշխատանքը դարձաւ բանուորի համար մի բեռ, տանջանք և ցաւ, որից բնաւ օրհնութիւն բղխել չէր կարող: Այս հիմամբ էլ աշխատանքի տեղութեան հարցը դրուեց բոլորովին նոր հողի վրայ: Երբ, վերոյիշեալ հանգամանքների շնորհիւ, հաստատուեց այն հայեացքը, թէ մարդկային արժանապատուութիւնը պահպանել կարելի է միայն գործարանական աշխատանքից դուրս, ապա և բնականապէս երևան եկաւ այդ տեսակ աշխատանքի տեղութիւնը իջեցնելու հրամայողական անհրաժեշտութիւնը: Մարդկանց մեծամասնութիւնը կորցնում է իր կեանքի հաստատուն յենարանը, երբ նա ակամայից ստիպուած է լինում մշտապէս զբաղուել ունէ աշխատանքով:

Այս հիմամբ էլ ակներև է, որ ժամանակակից տընտեսութիւնը զժուարացրել է խոշոր մասսաների համար գոյութեան հնարաւորութիւնը:

Այս զժուարացումը հանդէս է դալիս յատկապէս նրանով որ ժամանակակից աշխատանքը անչափ լարում է տղամարդու ոյժերը, որ նա մանաւանդ կին մարդուն և երեխային տնից դուրս հանելով նրանց գործարան է նետել և այդպիսով էլ խախտել ընտանեկան կեանքի հիմքերը: Եւ որովհետև սովորական մարդը միմիայն ընտանիքի մէջ հնարաւորութիւն ունէ իր զազանային բնաւորութիւնը զսպելու, ապա և ընտանեկան հիմքերի խախտումը կամ կազմալուծումը նշանակում է բնաւորութեան բրտութիւն, անասնացում, վերստին անկում բարբարոսութեան գիրկը:

Ժամանակակից գործարանական աշխատանքի այս յարակից երևոյթները իրենց աւերիչ հետևանքներով անսահման են դառնում մանաւանդ նրանով, որ նոր ժամանակի անտեսական կեանքի կերպարանափոխութեան հետ միասին առաւել աննպաստ կերպարանք է ստացել արդիւնագործող բանուորի արտաբոյժ գործարանական կեանքը: Ամենից առաջ յիշատակելի է այն, որ մեր ժամանակի կուրտուրական պետութիւնների մէջ մարդիկ աւելի ու աւելի կուտակում են մեծ քաղաքներում և արդիւնագործական կենդրոններում: Այստեղ նրանք իրենց խցիկներում ամենակզրնական անձաւորակ մարդկանց ռընըսանսն են ներկայացնում, տարբերութիւնը միայն այն է, որ նրանք զուրկ

են օգի, լոյսի և կենդանի բնութեան հաղորդակցութիւնից, այն ինչ վերջինները այսչափ զուրկ չէին: Բայց ամենից առաջ կարևոր է նկատողութեան առնել այն, որ մարդկանց այս նորատեսակ համախմբումների շնորհիւ նրանց գոյութիւնը խախտու է զարձել: Գիւլում, ընտանիքում, տոհմի մէջ, արհեստաւորական միութիւնների մէջ զարերի ընթացքում կազմակերպուած համայնական մանր խմբակցութիւնների փոխարէն առաջ են եկել մասնաւոր անհատների կոյտեր. անյօզ, անհաղորդակից իրար հետ, նրանք այժմ տաղնապով նորէն ջանում են գլուխ բերել օրգանական խմբակցութիւն: Անհատների գոյութիւնը խախտուելով՝ տաղալուել է նրանց մինչև այժմ պահող հոգևոր և բարոյական յենարանը: Այժմ դեռ գուշակել կարելի չէ, թէ այս անկերպարան զանգուածից ապագայում ինչ կդոյանայ:

III. «ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՀԱՐՅԻ» ԾԱԳՈՒՄԸ.

Պաշտօնական տեղեկութիւնների հաստատած և վերև յիշատակած գոյութիւն ունեցող մեծածաւալ թշուառութիւնը դեռ բաւական չէր լինի պարզելու համար այն, թէ ինչու ծագեց, «բանուորական հարց»: Ակնյայտ է, որ բանուորական հարց ծագել չէր կարող ընաւ, եթէ ազգաբնակչութեան լայն խաւերում գիտակցութեամբ չվերարերուէին իշխող թշուառութեանը, եթէ չընդունուէր նրա օրհասական բնաւորութիւնը, եթէ,

վերջապէս, իրերի վիճակը չհամարուէր բարեփոխութեան կարօտ և հնարաւոր բան:

Այս գիտակցական վերաբերմունքը զարթեցնելու համար անհրաժեշտ էին նորէն մի շարք բարեփոխութիւններ: Վերջին դարի ընթացքում վերածնուեց մարդկային հոգին. իսկ այդ եղաւ մասամբ շնորհիւ տնտեսական յեղաշրջման: Ինքը բանուորը, որ ամենից առաջ ենթակայ էր մեծածաւալ և կորստաբեր թշուառութեան, ինքը իրեն ազատել էր շինականի կամ համքարական մանր-քաղաքացու դիրքից: Հաղորդակցութեան կատարելութեան և կրթութեան տարածուելու շնորհիւ բանուորը աւելի սքառես աչքով սկսեց քըննադատութեան առնել իր վիճակը, մանաւանդ իր կենցաղը: Միաժամանակ ուրեմն բանուորի մէջ արուեստական ճանապարհով զարթեց թշուառութեան լուծը ջախջախելու ձգտոււմը և ընդունակութիւնը: Եւ եթէ բննադատելու, դժկամակերու ընդունակութիւնը սկսեց նաև գործադրութիւն գտնել՝ դրան նպաստեցին ժամանակակից հասարակական կեանքի ուրիշ երևոյթներ ևս, — մասնաւորապէս գործատէրերի ձեւքում կուտակուած հարստութիւնների և բանուոր զասակարգի չքաւորութեան մէջ եղած հակապատկերը: Չքաւորութեան և հարստութեան մէջ հակադասակեր գոյութիւն ունէր նաև առաջ. իսկ նորը այժմ այն է, որ մի կողմում արագ կերպով դիզոււմ է հարստութիւն, իսկ միւս կողմում էլի արագ կերպով տարածու է իր թևերը սև թշուառութիւնը: Այսպէս՝ ամենախարճատես մարդու համար անգամ

գիւրութեամբ աչքի պիտի դարնէր աճող հարբստութեան և ծաւալուող թշուառութեան մէջ եղած պատճառական յարաբերութիւնը: Սակայն ընդհանուրի կողմից ճանաչուած և գոյութիւն ունեցող բանութեան հարցի ծագման համար բաւական չէր լինի միմիայն ճնշուած բանութիւն հոգեկան և Ֆիզիկական ըմբոստութիւնը: Դրա համար հարկաւոր էր նաև հասարակական ուրիշ խաւերի գիտակից աջակցութիւնը: Ու այն հանգամանքը, որ բանութիւնը դրութիւնը մի պրոբլեմ դարձաւ աւելի ու աւելի նաև ուրիշ՝ ոչ-բանութեան շրջանների համար, այդ հետևանք էր սնտարակոյս այն ընդհանուր մարդասիրական գաղափարների յաղթանակի, որոնք քարոզուեցին մասնաւորապէս 18-րդ դարում և պետական սահմազրութիւններով կամ իրաւական ճանապարհով ընդունելի համարուեցին սկզբունքով: Այդ գաղափարների առաջին պահանջն էր՝ բոլոր մարդկանց հաւասարաբեռ լինելը, անձնաւորութեան ու նրա արժանապատուութեան յարգութիւնը վեր համարելով արդարութեան մնայած բոլոր պահանջներին: Մէկ կողմից, ուրեմն, դադարաւորապէս մարդիկ յայտարարում էին հանրամարդկային իրաւունքների անձեռնմխելիութիւն, այն ինչ միւս կողմից «աէալ» մարդիկ ժխտում էին մարդաւայել գոյութեան ամենատարրական պահանջներին արդարացի լինելը: Այս երկու հակընդդէմ հասկացողութիւնների ընդհարումն էր, որ առիթ տուեց «աշխատաւոր դասալարի» վիճակը ընդհանուր քննութեան ենթարկելու: Այս-

պիտով ուրեմն ոչ միայն բանութեանը իրենք, այլ նաև րազաքագէտներ, գիտնականներ և ուրիշներ անհրաժեշտաբար ընդունեցին բանութեան հարցի գոյութիւնը: Ուրեմն մենք կարող ենք «բանութեան հարցը» հետևեալ արտայայտութեամբ ձևակերպել: Այն բոլոր խնդիրների (պրոբլեմների) համագումարը, որոնք ծագում են աշխատաւոր գաղափարների ունեցած վիճակից ժամանակակից հասարակութեան մէջ, և որոնք իրենց լուծման են դիմում մասնաւորապէս վարչական՝ և օրէնսդրական ճանապարհով՝ կոչում ենք բանութեան հարց: Բանութեան հարցը ուրեմն հարցնում է ինչ միջոցներ կան և ինչպէս կարելի է նրանց գործադրել՝ պրոլետար դասակարգի համար մարդաւայել կեանք ստեղծելու համար: Այս հարցը կարող ենք մենք և այսպէս ձևակերպել. ինչպէս է հնարաւոր մի հասարակութիւն, որի մէջ կապիտալիզմն է իշխող տնտեսական սիստեմը:

ՐԱՐՈՐԳ ԳՒՈՒՆ

ԲԱՆՈՒՈՐՄԻԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒՓԵԼԿԻ ՓՈՐՁԵՐ

Նախընթաց երեւներում ուրուագծած հարցերի վերաբերմամբ եղել են տարբեր տէսակէտ յայտնողներ: Յուզուած հարցերին տրուել են տարբեր պատասխաններ: Մենք կարող ենք նախ ուսումնասիրել հայեցակէտի ներքոյ կապակցօրէն ամ-

փոփել սոցիալական հարցի մի շարք ըմբռնու-
մեր:

1. Իբրև առաջին սոցիալական ուսույլիայ հանդիսանում է լիբերալ ուսույլիան: Լիբերալիզմը, որին, իր տնտեսական քաղաքականութեան նայելով, նաև մանչեստրականութիւն անունն են տուել, իր գոյութեան սկզբից սկսած և յետոյ էլ տարբեր տեսակէտներ է յայտնել բանուորական հարցի վերաբերմամբ: Տնտեսական լիբերալիզմի այն թէորիտիկները և պրակտիկները, որոնք այդ ուղղութեան սկզբնաւորութեան միջոցին նրա տնտեսական քաղաքականութեան սկզբունքները ծրագրեցին, աշխատելով պարզաբանել իրենց մարտի վարդապետութիւնը, ժխտում էին ընդհանրապէս բանուորական հարցի գոյութիւնը անգամ: Այս ըմբռնուժը անկասկած ամենից լաւ համապատասխանում է լիբերալիզմի հասարակական և տնտեսական փիլիսոփայութեան ներքին էութեանը: Այս փիլիսոփայութիւնը մշակուեց 18-րդ դարում Փրանսիայի և Անգլիայի առաջնակարգ թէորիտիկներին ձևորով: Իբրև նրա անհրաժեշտ ելակէտ համարուում էր *ordre naturel*-ը— իբրև ընտանիքի ընթացքը, որին ենթակայ են թէ հասարակական և թէ տիեզերական երևոյթները: Այն ժամանակի օպտիմիստ մետաֆիզիկայի ոգու համաձայն նրանք բոլորը խորապէս համոզուած էին, թէ իբրև ընտանիքի ընթացքը անհրաժեշտաբար պիտի առաջացնէ ներդաշնակութիւն և երջանկութիւն այդ ընթացքին ենթակայ ամբողջութեան իւրաքանչիւր առանձին մասի մէջ. ըստ որում իբրև

ընտանիքի ընթացքը համարուում էր Աստուծուց սահմանուած, իսկ Աստուած բարի է: Այդպիսով այդ հասկացողութեան համաձայն հարկաւոր էր լուրջայտնագործել իբրև ընտանիքի ընթացքը, ցոյց տալ հասարակական կեանքը կառավարող օրէնքները: Իսկ այս, ասում էին, արդէն երևան են հանել 18-րդ դարի իմաստասէրները: Նրանք հաւատացած էին, թէ հասարակական կեանքի հիմնական օրէնքն է՝ տնտեսական ոյժերի ամբողջական և ազատ զարգացումը, անհատական շահերի անսահման գործադրութիւնը: Նրանք նոյն իսկ չէին կատարածում այս հայեացքի ճշմարիտ լինելու մէջ: Հասարակական կազմը, մասնաւորապէս աշխատաւոր դասակարգերի գրութիւնը, որ հետեանք էր անհատական շահերի ազատ մրցման, համարուում էր կատարեալ և անսխալ: Կարևոր էր համարուում միայն փայլուն դոյներով պատկերացնել Անգլիայի արդիւնագործական շրջաններում իշխող պայմանները և նրանց գերազանցութիւնը ցոյց տալ: Այս հարցով են զբաղուել 19-րդ դարի առաջին կէսի շատ հեղինակներ: Այս ուսումնասիրութիւնների ցոյց տուած հետեանքն էլ այն էր լինում, որ իբր թէ իշխող պայմանները փառաւոր են, իբր թէ այսպէս էլ պէտք է լինէին նրանք. չէ՞ որ նրանք համապատասխանում էին իրերի ընտանիքի ընթացքին: Ապա՛ նրանք պնդում էին, թէ անկարևոր է միանգամայն իշխող պայմանները փոփոխութեան ենթարկել, ինչպէս որ անպտուղ պիտի անցնէր նաև ամեն մի փորձ՝ նման պայմաններ ստեղծելու: Սրբապղծութիւն

էր համարուում մտածել անգամ ուրորմած Առու-
ծոյ ձեռաց գործը թիբի համարել, բարձրագոյն
արարչագործութիւնը սրբագրել յանդգնել:

Սրանք են մանչեստրական վարդապետու-
թեան հիմնական գծերը, որչափ որ նա հաւատա-
րիմ մնաց իր փիլիսոփայական ծագմանը: Կաս-
կած չկայ, որ մենք այստեղ գործ ունենք հաս-
րակական կեանքի մի յայտնի և բարդ լուսա-
բանութեան հետ: Յետնորդ սերունդները գծուծ
ըմբռնողութիւնը ազարտեց նախկին անխառն
վարդապետութիւնը և ջանաց սկզբնական մետա-
ֆիզիկ մտքերը մատչելի դարձնել սովորական
բանկիրի հասկացողութեանը: Դեռ մեր օրերում
էլ կարելի է երբեմն հանդիպել այս ուամիկ-լիբե-
րալ ըմբռնողութեան հետևողներին. սրանք գոհա-
նում են այն գեհնիկ համոզմամբ, թէ բաղաբա-
ցիական հասարակութիւնը ինքը իր միջից մի-
ջոցներ պիտի հայթայթէ հասարակական կազմի
իրական վերքերը բուժելու համար: Իսկ թէ ին-
չի՞նչ այս այսպէս պիտի լինի՞ դրա մասին նրանք
խօսք չեն ասում:

Սոցիալական հարցերի լիբերալ կշռագատու-
թիւնը կարելի է այժմ յայտարարել իբրև ջրուած
ըմբռնողութիւն: Լիբերալ ըմբռնողութիւնը ծըն-
ւում և մեռնում է հասարակական կազմի վերա-
բերմամբ եղած այն հաւատի հետ, թէ նա իրերի
բնական, այդ պատճառով և ներդաշնակ, ընթաց-
քին է համապատասխանում: Իրականութիւնը ցոյց
է տալիս այս ըմբռնողութեան անճշտութիւնը հենց
նրանով, որ գոյութիւն ունեն նաև չափազանց

թշուան պայմաններ, իսկ այդ ժխտել կարելի
չէ այսուհետև: Այդ հայեացքը մերժուած է հենց այն
բանով, որ անտեսական երևոյթներին զիտակցօ-
րէն ձեռնամուխ լինելով հազարաւոր դէպքերում
հասարակական պայմանները աշկարայ կերպով
բարելաւուել են:

2. Լիբերալ ուտոպիայի երկուորակ քոյրն
է սոցիալիստական ուտոպիան: Սրա ելա-
կէտն էլ նոյնն է, ինչ լիբերալ ուտոպիայի
ելակէտը: Այս ուտոպիան ևս ըստ էութեան
հիմնուած է ordre naturele-ի հաւատի վրայ, —բա-
րոզելով բնական և ներդաշնակ հասարակական
աշխարհ: Այս ուղղութիւնը շեղուած է լիբերալ
հասկացողութիւնից նրանով, որ նա իրերի բնա-
կան ընթացքը չէ նկատում անհատական շահերի
ազատ մրցման մէջ: Ընդհակառակը նա ընդու-
նում է, որ 18-րդ դարում լիբերալ սեֆորմնե-
րի շնորհիւ ստեղծուած իրերի ընթացքը դարձաւ
թշուառութեան աղբիւր: Ուրեմն սոցիալիստները
տարբերում են լիբերալներին ըստ էութեան նը-
բանով, որ նրանք իրերի բնական ընթացքը ներ-
կայից փոխադրում են, որ իրերի բնական ընթաց-
քին էմբռնում են, որ իրերի բնական ընթաց-
քի էութիւնը աշխատանքի ծրագրուած, որոշուած
կազմակերպութեան մէջ է կայանում: Այսպիսով
բնական հարցը կլուծուէ միայն այն ժամանակ,
երբ կիրականանայ հասարակական կեանքի իդէ-
ալական վիճակը, ուր վերացած կլինեն այլազան

և հակընդդէմ շահերը, ուր կիշխէ կատարեալ ներ-
դաշնակութիւն:

Այս ըմբռնողութիւնը, նման լիբերալ ըմբռն-
ողութեան, ուսուցիական է այն պատճառով, որ
նա ևս հիմնուած է ոչ թէ ոէալական աշխարհի
ձանաչողութեան, իրականութեան ճշգրիտ գնա-
հատութեան վրայ, այլ այն հաւատի վրայ, թէ
հնարաւոր է մի կատարեալ և ներդաշնակ հասարա-
կական աշխարհ: Իսկ այս հաւատի առաջ, ինք-
նին հասկանալի է, լուծեան է դատապարտուած
գիտական իմացականութեան և գործնական խոր-
հրդածութեան ձայնը:

3. Իբրև մի միջնորդ ուղղութիւն պիտի հա-
մարել այն ուսուցիան, որին ես պահպանողա-
նողական — յետագիմական (կոնսերուատիւ
— ոէակցիոններ) անունը տալ կուզէի: Այս ասելով
ես նկատի չունեմ այն ձգտումները, որոնք նպա-
տակաղբել են բնաջինջ անել ժամանակակից ար-
դիւնագործութիւնը. ցանկանում եմ մասնանիշ
անել այն հայեացքի վրայ, որի համաձայն կա-
պիտալիստական դարպացումը մի անշեղ իրողու-
թիւն է, որն այլ ևս հնար չէ վերացնել աշխար-
հիս երեսից: Հետեւալն է պահպանողական — յի-
տագիմական ուսուցիայի տարածուած հասկացու-
ղութեան էութիւնը:

Նա ընդունում է առանց այլևայլութեան այն
ֆլասնները և շարիքները, որոնք արդիւնք են կա-
պիտալիզմի, մասնաւորապէս ժամանակակից ար-
դիւնագործութեան՝ բանուոր դասակարգի համար:
Այս ուղղութեան հետևողները հաւատացած են

նաև, թէ հնար է վերացնել այդ շարիքները: Այս
նպատակով նրանք ձգտում են գործադրութիւն
տալ այնպիսի սկզբունքների, որոնք յատուկ էին
անցած — դնացած սնտեսական շրջաններին: Նը-
րանք ուզում են ֆէոդալականացնել արդի ար-
դիւնագործութիւնը. նրանց իզէալն է մի լուսա-
ւորուած գործատէր դասակարգ, որի հանդէպ բա-
նուորական դասակարգը նախկին վաստալների
համապատասխան դիրք պիտի բռնէ: Գործատէրը
չպիտի լինի մի անսիրտ վաճառական, նա իր
բանուորների վրայ չպիտի նայէ իբրև ապրանքի
վրայ. չպիտի ջանայ նրանց ոյժերը հնար եղա-
ծին չափ հարստահարել: Գործատէրը պարտաւոր
պիտի լինի բարոյականացնել աշխատանքի պայ-
մանները, պիտի յարգէ բանուորի անձնաւորու-
թիւնը, իր և բանուորի մէջ պիտի աշխատէ մար-
դավայել յարաբերութիւն ստեղծել: Գործատէրը
պիտի դառնայ մի captain of industry (արդիւնագոր-
ծութեան հրամանատար), — ինչպէս որ արտայայ-
տել է Թոմաս Կարլայլ, ամենահանձարեղ ներկայա-
ցուցիչը ոէակցիոններ ուսուցիայի. այդ հրամանա-
տարը պիտի լինի մի այնպիսի ղեկավար, որը իր
անձնական գերազանցութեան միջոցով մասսաները
կազմակերպել և նրանց ուղղութիւն տալ կարողա-
նայ: Եւ եթէ, այսպիսով, աշխատանքի պայմանները
սկզբունքով զրկուեն իրենց զուտ առևտրական
բնաւորութիւնից և բարոյական հիմքերի վրայ
զրուեն, այն ժամանակ բնականօրէն պիտի հետեւ
և այն, որ գործատէրը ըստ կարողութեան պիտի
ձգտէ սեփական նախաձեռնութեամբ աշխատան-

քի պայմանները բարելաւել յօգուտ բանուորի: Գործատէրը ամեն ժամանակ հոգս պիտի քաշէ իր բանուորի հոգևոր և մարմնաւոր բարիքի համար: Այս նկատմամբ նա իր ձեռնարկութեամբ բերած օգուտով պիտի հիմնէ այլ և այլ բարեգործական հաստատութիւններ—օթեւաններ, բնակարաններ և խանութներ, ակմբանոցներ, մանկական պարտէզներ, ապաստարաններ, խնայողական և հիւանդների կասսաներ, և այլն: Իր բանուորի համար գործատէրը կառուցանել կտայ առողջապահական և ճաշակաւոր բնակարաններ, նրանց համար կազմակերպել կտայ զուարճական և արգասաւոր զբոսայիտներ, և այլն: Այս բոլոր ջանքերի բնական հետևանքն էլ այն կլինի, ասում են նրբանք, որ բանուորը գործատիրոջ վրայ կսկսէ նայել իբրև իր բաքերարի, անգամ իբրև հօր վրայ: Մրա հետ միասին բանուորը կհրաժարուէ իր անձնաւորութեան ազատ կատարելագործումից, իր անձնական շահերին հետամուտ լինելուց. նա դուրս չի գայ գործատիրոջ զծած շրջանակից, անտրտունջ կծառայէ իր հրամանատարին:

Կարելի է համաձայնել, որ այս ուղղութեան մարդկանց ձեռքով սպազայի համար գծագրած յարաբերութեան եզանակը բարեացակամ տիրոջ և համեստ վաստալի մէջ՝ ամենից աւելի համապատասխանում է բանուորի ճշմարիտ շահերին. ըստ որում սպազայում էլ ընդ միշտ իշխող կլինի այն, որ մարդկանց ահագին փոքրամասնութիւնը ծառայելու մէջ կ'գտնէ իր ճշմարիտ երջանկութիւնը: Բայց և այնպէս յիշած ըմբռնողու-

թիւնը ուտոպիայ պիտի անուանել այն պատճառով, որ ի վերջոյ նա ևս հաշուի չէ առնում մարդու բնաւորութիւնը՝ ինչպէս որ նա կայ, ինչպէս որ նա կազմակերպուել է: Այս ուղղութեան վերջնական ծրագիրն էլ նպատակ ունէ կառուցանել մի հասարակական շէնք՝ զուրկ հիմքերից: Յիշած ըմբռնողութիւնը կազում է նախ հենց այնպատճառով, որ ցանկալի համարուած և նախաժտածուած վերոյիշեալ տեսակի գործատէրերի բացակայութիւնը զգալի է. իսկ առանց այդպիսիների խօսմ իրականանալ կարող չէ արդիւնագործական Ֆէոդալիզմը և պատրիարխալիզմը: Նոյնն ենք տեսնում նաև, երբ մենք բաղաքականութեան մէջ լուսամիտ դեպոստիզմի և արսոլիտիզմի իդէալն ենք քննութեան առնում: Այս իդէալը ջախջախում է հենց այն իրողութեամբ, որ առնուլազըն այնչափ անտարբեր և չարոզի միապետներ կան, որչափ բարի միապետներ,—եթէ ոչ աւելի: Սպասել՝ թէ սոցիալական պայմանների բարեփոխութիւնը լուսամիտ և բարեացակամ գործատէրերի ազատակամ ձեռներէցութեամբ պիտի իրականանայ՝ կնշանակէ գոյութիւն ունեցող դրժընդակ պայմանների բարելաւումը մինչև «գայլի գատիկ» յետաձգել: Չէ որ փորձը ցոյց է տըւել, որ չնչին թիւ են կազմում այն գործատէրերը, որոնք կապիտալիստական ձեռնարկութիւնները, որոնք կապիտալիստական ձեռնարկական նպատակներից զուրս այլ ձգտումների ցանկութիւն էլ ունենային: Իսկ ով ուսումնասիրել է մարդու բնաւորութիւնը, նա կարիք էլ չունէ սպասելու,

որ այս խօսքը փորձով էլ հաստատուէ: Սոցիալական հարցի լուծումը պատրիարխալիզմի միջոցով՝ ուսույթական է հենց նրա համար, որ չեն գտնուի երբէք այնպիսի և այն թուով գործատէրեր, որոնց օգնութեամբ կարելի լինէր իրագործել պատրիարխալիզմի իդէալները: Կրկին աստիճանի ուսույթական է այս ըմբռնողութիւնը այն պատճառով, որ ներկայ ժամանակի—առաւել ևս ապագայի—բանուոր դասակարգը այլ ևս չէ կառուցուած պատրիարխալիզմի ցանկացած եղանակով կառավարուել գործատիրոջից: Բանուոր դասակարգը այլևս ցանկութիւն չունէ բարերարութիւն ընդունել այն մարդուց, որը նոյն կերպ կարող է և մերժել այդ բարերարութիւնը: Ընդհակառակը, ժամանակակից բանուորը իր իրաւունքներին տիրանալ է ջանում. և, անկախ գործատիրոջ բարեսացականութիւնից, նպատակադրել է իրագործել իր վիճակի բարեփոխութիւնը: Այստեղ չենք ուզում ամենեին հետազննել այն, թէ արդեօք բանուոր դասակարգի մէջ իշխող այս հայեցակէտը նրա համար օգտաբեր է թէ ոչ: Մենք ցանկացանք այստեղ միայն իրողութեան վրայ մասնանիշ անել: Այսպէս ուրեմն, բանուորներ ընդհանրապէս չենք ընթացքի շնորհիւ ապագայում ըրի կխորտակուեն պատրիարխալիզմի դեռ մինչև օրս պահուած վերջին բեկորները:

Այսօր կան միայն փշրանքներ յիշած հին ուսույթիաների: Դժուար թէ այժմ գտնուէ մի խելացի մարդ, որ պահանջէ բացարձակ ազատութիւն անտեսական կեանքում, որ դէմ լինի պե-

տութեան ամեն մի միջամտութեան աշխատանքի պայմաններում: Այսպէս և դժուար թէ գտնուէ մի խելամիտ սոցիալիստ, որ հաւատացած լինի, թէ երկնքից յանկարծակի վայր պիտի իջնէ մի ներդաշնակ հասարակական կեանք: Նաև շատ քչերը կգտնուեն, որոնք բանուորական հարցի լուծումը հնարաւոր համարեն միայն պատրիարխալիզմի միջոցով:

Հակառակ այս բոլոր ուղղութիւններին՝ օր աւուր աւելի մեծաթիւ հետևողներ էլ գտնում մի ըմբռնողութիւն, որը նմանապէս հանդիսանում է իբրև մի կոմպրոմիսս նախկին հակընդդէմ հայեցակէտերի: Սոցիալ-ուեֆորմականներն հայեցակէտն է, որ բոլոր կուլտուրական երկիրներում իր ոտի տակ հաստատուն հող է գտնում, և ճրի էութիւնը կարելի է հետեւեալ կէտերում ամփոփել:

I. Սոցիալ-ուեֆորմականները ընդունում են, որ կապիտալիստական անտեսութեան հետ կապուած են անթիւ չարիքներ բանուոր դասակարգի համար:

II. Այս չարիքների բարձումը կարևոր է համարուած ոչ միայն նրանց ներքոյ հեծող բանուորների շահերը ի նկատի ունենալով, այլև ամբողջ ժողովրդի շահերը, նմանապէս կուլտուրայի անխափան զարգացման տեսակէտից:

III. Չարիքների բարձումը հնարաւոր կլինի միայն՝ ընդունելով պատմականօրէն առաջացած դրութեան գոյութիւնը, հանդերձ պետական ուժալից կառուցողների արժանի գնահատութեան, որոնց

ազդեցութեան տակ է առաջացել ներկայ ժամանակի հասարակական կազմը: Չարիքների վերացումը ուրեմն նոյնանիշ է պատմականօրէն առաջացած հասարակական պայմանների օրգանական բարեփոխութեան: Այս իսկ պատճառով այս ըմբռնողութիւնը ընդունուած է իբրև սոցիալ-ոսփորմական ըմբռնողութիւն:

Վ. Մեր արդի հասարակական կազմը վերափոխել և դրա հետ բանուորին ընկճող չարիքները վերացնել կ'ընէի է կամ բանուոր պասակարգի անձնական ձեռներէցութեամբ և կամ օրէնստուութեան և կառավարութեան եղանակը փոփոխութեան ենթարկելով: Անձնական ձեռներէցութեան վրայ հիմնուած բանուորական ձգտումները մի հին տերմինօլոգիայով կոչուած են՝ ինքնօգնութիւն. իսկ օրէնստուութեան և կառավարական փոփոխութիւնների վրայ հիմնուած ջանքերը՝ պետական օգնութիւն:

Այս գաղափարը իրագործելու համար սոցիալական ոսփորմի կողմնակիցները բոլոր կուլտուրական երկիրներում միացել են և նպատակ դրել խօսքի և գրի կազմակերպուած ազիտացիայով նըպաստել իրենց գաղափարների տարածուելուն: Չարագացման հենց նորագոյն ֆազի յատկանիշը այն է, որ սոցիալական ոսփորմի պահանջները հաւանութիւն են գտնում քաղաքական այլազան բանակներում. նաև քաղաքական տարբեր կուսակցութիւնների հետևողները խմբուած են զուտ սոցիալ-քաղաքական միութիւնների շուրջը: Անգլիայում գոյութիւն ունէ այս նպատակով այսպէս

կոչուած Fabian Society. իսկ միւս երկիրներում միայն վերջին ժամանակները կազմակերպուեցին համապատասխան ձգտում ունեցողները՝ արդի-նագործական օրէնստուութեան միջազգային ընկերակցութեան սեկցիաների մէջ (այս մասին տես 5-րդ գլուխ): Գերմանիայում «սոցիալական ոսփորմի ընկերակցութիւնն» է (Gesellschaft für die soziaee Reform), որ ձգտում է վերոյիշեալ գաղափարները իրագործել: Սա հիմնուեց 1901 թուականի յունուարի 6-ին և այսօր արդէն հանդիսանում է իբրև կենտրոն յառաջագէմ և սոցիալ-քաղաքական գաղափարների: Գերախտաբար սոցիալ-դեմոկրատիական կուսակցութիւնը իր անտալտ վերաբերմունքով մինչև օրս ինքը իրեն հեռու է պահել քաղաքացիական սոցիալ-ոսփորմին յարելուց: Մօտակայ ապագայի գործը պիտի լինի վերացնել այն վերջին անվտանգութիւնը, որ կայ սոցիալական ոսփորմի երկու քաղաքացիական և սոցիալիստ ուղղութիւնների մէջ:

«Սոցիալական ոսփորմի ընկերակցութեան» նպատակը պարզուած է նրա ծրագրի հետևեալ կէտերով:

«Սոցիալական ոսփորմի ընկերակցութիւնը» ձգտում է.

1. Խօսքի և գրի միջոցով նպաստել Գերմանիայում սոցիալական ոսփորմի իրագործմանը՝ բանուորական հարցի սա մասում:

Իբրև էական մասեր այս ոսփորմի համաբուած է նա.

ա) Անընդհատ օրէնստուծիւն յօգուտ բանուոր դասակարգի:

բ) Նպաստել բանուորներին՝ պրոֆեսսիանալ միութիւնների և ընկերակցութիւնների միջոցով բարելաւել իրենց գրութիւնը:

II. Իբրև «արդիւնագործական օրէնստուծիւն միջազգային դաշնակցութեան» գերմանական սեկցիայ՝ նպատակ սրա ամեն ձգտումներին օրինական բոլոր միջոցներով (հմտ. գլ. 5-րդ):

«Սոցիալական ռեֆորմի ընկերակցութիւնը» ձգտում է հասնել իր նպատակին.

1. Ընկերակցութեան ճիւղեր հիմնելով (տեղական մարմիններ):

2. Կազմակերպելով դասախօսութիւններ և կուրսեր կրթիչ բովանդակութեամբ:

3. Թուօցիկներ, բրոշուրներ և այլ թերթիկներ տարածելով:

4. Ուղարկելով պ'տիցիաներ կառավարութիւններին, օրէնսդրական և վարչական մարմիններին:

5. Հրաւիրելով կոնգրեսներ (ընդհանուր հաղումարներ) միութեան նպատակների մասին խորհրդակցելու համար:

Հետևեալ ուսումնասիրութեան 3-րդ և 4-րդ գլուխները խօսում են այսպէս կոչուած «ինքնօգնութեան» միջոցների մասին: Իրանք են՝ պրոֆեսսիոնալ-բանուորական և սպառողական ընկերութիւններ: Իսկ 5-րդ և հետևեալ գլուխները խօսում են սոցիալական ռեֆորմի մասին նեղ մըտքով, այսինքն՝ օրէնստուծիւն և աղմինխտարա-

ցիայի սահմաններում իրազործելի այն ռեֆորմների մասին, որոնք գործարանական և այլ տեսակ բանուորների շահերին են համապատասխան համարուած:

ԵՐՐՈՐԳ. Գ. Լ. ՈՒՆ

ՊՐՈՖԵՍՍԻՈՆԱԼ-ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ *)

I. ՊՐՈՖԵՍՍԻՈՆԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԻՆԸ

Պրոֆեսսիոնալ (արհեստակցական, գործակցական) կազմակերպութիւնների համար եւրոպական լեզուներում կան հետևեալ արտայայտութիւնները. — գերմաներէն՝ Gewerkvereine Gewerkschaften կամ Fachvereine. անգլիերէն՝ Trade Unions, ֆրանս. syndicats ouvriers, իտալ. Società operaie (di resistenza): Այս կազմակերպութիւնների միջոցով միևնոյն գործով կամ արհեստով ըզբաղուող վարձու բանուորները, միացած իրար հետ, պաշտպանում են իրենց դասակարգային շահերը: Այդ կազմակերպութիւնները պատկանում են մեր ժամանակում բարձր ծաղկման հասած

*) Հմտ. հեղինակի «Dennoch! Aus Theorie und Geschichte der gewerkschaftlichen Arbeiterbewegung», Jena 1900 աշխատութիւնը:

միութիւնների շարքին: Նրանք էապէս տարբերուում են հին ժամանակների համքարութիւններից (Zunft, цехъ): Այս ընկերութիւնները, որոնց մ կազմակերպուել է արդի բանուորական դասը կոչել են նաև «բանուորական արհեստակցութիւններ»՝ ցոյց տալու համար նրանց յարակցութիւնը կամ նոյն իսկ ծագումը հին արհեստաւորական միութիւններից: Սակայն այս ըմբռնողութիւնը ընդունելի է միայն ծանրակշիռ սահմանափակումներով. ըստ որում հենց այն, ինչ արդի բանուորական միութիւնները տարբերում է անցեալի արհեստաւորական համքարութիւններից, կազմում է արդի բանուորական միութիւնների էական կողմը: Եթէ մենք բանուորական միութիւններ, սահմանեցինք իբրև պրոֆեսսիոնալ կազմակերպութիւններ, ապա հարկաւոր է անմիջապէս աւելացնել նաև այն, որ նրանք ամեն բանով չեն համապատասխանում հին արհեստաւորական կազմակերպութիւններին: Հին արհեստաւորական միութիւնները պահանջում էին իրենց անդամներից որոշ չափով նման նախապատրաստութիւն, գործի հասկացողութիւն, յաճախ նաև հաւասար ծանօթութիւն ընկերական գաղափքների, հաւասար հրահանգում, նման վիճակ: Ամեն մի արհեստ սահմանափակում էր որոշ չափով, ամեն մի արհեստ ունէր իր սեփական շահերը, իր պատիւը:

Կապիտալիստական ձեռնարկութիւնը ջախջախել է այս բոլոր պայմանները: Նա անդադար կործանում է դարևոր արհեստներ և ձեռնարկ տա-

լիս արդիւնաբերութեան նոր եղանակների: Այն ինչ առաջ մի միութիւն էր կազմում՝ այժմ բաժան բաժան է արւում. այն, ինչ բաժան բաժան էր՝ միացւում է այժմ: Այսպէս ուրեմն աւերւում է հին արհեստաւորական գործառնութիւնը: Մրափոխարէն կցորդւում են իրար նախկին և բոլորովին տարբեր արհեստների աշխատանքներ: Այս միջոցով գլուխ եկած միութիւնները ընականաբար չեն կարող անջատուած մնալ, ինչպէս էին նախկին արհեստաւորական միութիւնները: Ես ի նկատի ունեմ օրինակ նորագոյն ժամանակում յաճախ կազմակերպուող այսպէս կոչուած «արդիւնագործական միութիւնները», ինչպէս են՝ փայտահատների, մետաղագործների, շինարարական բանուորների միութիւնները և այլն, որոնցով առաջուայ անջատ-անջատ արհեստաւորները այժմ միացել են մի կազմակերպութեան մէջ:

Սակայն ժամանակակից պրոֆեսսիոնալ բանուորական միութիւնները միւս կողմից ունեն աւելի մեծ նշանակութիւն բան սոսկ պրոֆեսսիոնալ միութիւններ. նրանք տարբերում են հին «համքարութիւններից» նաև նրանով, որ նրանց մէջ չեն ժողովում ունէ պրոֆեսսիոնալ անդամները: Մէջ ասած միութիւնները վարձու բանուորների կազմակերպութիւններ են, ուրեմն և այնպիսի արհեստակիցների կազմակերպութիւններ, որոնք իրենց ամբողջ կեանքի ընթացքում միատեսակ գործով են զբաղւում, մշտապէս կատարում են ձեռքի աշխատանք և սովոր-

բարար չեն անցնում ձեռնարկութեան կազմակերպողների կամ ղեկավարների շարքը: Երբեմնի արհեստակցական կապը խզուած է: Իւրաքանչիւր ձեռնարկութեան մէջ, որտեղ իշխում է կապիտալիստական արդիւնագործութիւն, գոյութիւն ունեն իրարից խիստ անջատ երկու խմբակցութիւններ— գործատէրերի խմբակցութիւն, որին յաճախ յարում են խոշոր ձեռնարկութիւնների բարձր պաշտօնեաները, և բանուորների խմբակցութիւն: Միևնոյն ձեռնարկութեան մէջ գործում են միաժամանակ և՛ միլիոնատէր մարդիկ և՛ սեփականազուրկ բանուորներ: Այս է հենց տարբերութիւնը նախկին կարգերից: Նախկին ժամանակներում քարզանք համարում էր իբրև ապագայ վարպետ, իսկ վարպետը՝ երբեմնի քարզան. իսկ մեր օրերում գործատէրերի և բանուորների միջև տարածում է մի անանցանելի անջրայկոտ նրանցից իւրաքանչիւրը ծնունդ է իրարից միանգամայն տարբեր սոցիալական դասակարգերի: Մեր ժամանակի պրոֆեսսիոնալ բանուորական միութիւնների ընտրող յատկանիշներից մէկն էլ այն է, որ սրանք իրենց անդամները թուում ընդունում են միայն վարձու բանուոր մարդկանց: Հին ժամանակներում անջատում էին առանձին առանձին պրոֆեսսիաները իրարից, գոյութիւն չունէր միևնոյն արհեստի մարդկանց զանազան առանձնացումներ. իսկ այժմ՝ միևնոյն արհեստի սոցիալական տարբեր խմբակցութիւնները առանձնանում են իրարից, այն ինչ տարբեր գործակցութիւնների, բայց դասակարգակից

խմբակցութիւնները իրար ձեռք են մեկնում և միութիւն հաստատում: Ուղղահայեաց խմբակցութեան փոխարէն ծնունդ է առել հորիզոնական խմբակցութիւն: Եւ եթէ մենք ըստ այսմ բընորոշել կամենանք ժամանակակից բանուորական միութիւնները, ամենից առաջ պիտի շեշտենք, որ նրանք հանդիսանում են իբրև վարձու բանուորների միութիւններ, այսինքն՝ դասակարգակից մարդկանց խմբակցութիւններ. ապա թէ կարող ենք և յարակցել, թէ նրանք այնպիսի միութիւններ են, որոնց մէջ ընդունում են արհեստակից մարդիկ:

Ուրեմն ներկայիս բանուորական միութիւնները վարձու բանուորների դաշնակցութիւններ են: Այս միութիւնները ձգտում են օգտակար հանդիսանալ վարձու բանուորներին, այս ըստ ամենայնի ժամանակակից ժողովրդական դասակարգին: Այս դասակարգի մարդկանց համար են ուզում դառնալ նրանք կեանքի ուղեցոյց, նրանց մխիթարիչ և բարեկամ, օգնական և խորհրդատու կեանքի առաջացրած ամեն մի լուրջ դիպուածում: Այդ միութիւնները ջանում են այնտեղ տարածել իրենց գործունէութիւնը, ուր անհատը անկարող է զօրութիւն և ձեռներեցութիւն ցոյց տալ:

Այսպէս ուրեմն՝ բանուորական միութիւնները ձգտում են պաշտպանել վարձու բանուորների շահերը, այնևս՝ որ անհրաժեշտաբար տեւանցնել պէտք է — կապիտալիստական տնտեսութեան սխտեմի շրջանակում:

Այս սահմանափակումն է, որով որոշակի

տարբերում է վերոյիշեալ բանուորական շար-
 փումը սոցիալիստական բանուորական շարժումից:
 Իսկ այս վերջին շարժման վախճանական նպատա-
 կը լինելով հանդերձ ամենից առաջ նախ պրո-
 լետարիատի շահերի պաշտպանութիւնը՝ ձգտում է
 կապիտալիստական տնտեսութիւնը փոխարինել
 սոցիալիստական տնտեսութեամբ: Տղէտ է և ան-
 բարեմիտ այն անձնաւորութիւնը, որ չի ուզում
 ընդունել, թէ յիշած երկու ուղղութեան բանուո-
 րական շարժումների մէջ եղած այս տարբերու-
 թիւնը հիմնական է, իրական և բնորոշ: Անտա-
 րակոյս, պրոֆեսսիոնալ և սոցիալիստական բա-
 նուորական շարժումները ունեն շատ համայն և
 ընդհանուր կողմեր: Սակայն սոցիալական երե-
 ւոյթների մասին իսպառ պարզ հասկացողութիւն
 չունենալ կնշանակէ, եթէ մէկը իր գիտողութիւն-
 ները անելիս ամենից առաջ նկատի չառնէ այդ
 երկու տեսակ շարժումների էական տարբերու-
 թիւնները:

Պրոֆեսսիոնալ-բանուորական միութիւնները
 բնորոշելով իբրև արհեստակից և դասակարգակից
 մարդկանց խմբակցութիւններ՝ մենք նկատի չենք
 առնում նրանց կատարած գերը բանուորների ըն-
 տանեկան և ընկերական կեանքում: Ինչ խօսք,
 որ չնչին չէ նրանց ունեցած նշանակութիւնը այս
 սահմանում. սակայն այս չէ նրանց էական կողմը:
 Այդ միութիւնների էութիւնն է պաշտպանել բան-
 ուորների շահերը: Այս պաշտպանութիւնը երե-
 ւան է գալիս 1. բանուորի և նրա ընտանիքի հոգա-
 տարութեամբ, երբ բանուորը ակամայից զուրկ է

մնում աշխատանքից և վաստակից, և 2. բանուորի
 հողատարութեամբ, երբ նա աշխատանք ունէ և,
 այսպիսով, ընդունակ է վաստակ անելու:

Այսպիսի ֆունկցիան իր մէջ է առնում նը-
 պաստամատոյց ընկերութիւնների կամ օժանդա-
 կիչ կասսաների գործունէութիւնը: Այս կազմա-
 կերպութիւններից են ստանում բանուորները նը-
 բաժան՝ փոխով կամ մթերքներով՝ հիւանդութեան,
 ինտալիլութեան, դժբախտ պատահարների, ծե-
 բութեան և մահուան դէպքերում: Այս կասսաների
 անդամների համար հնարաւոր է դարձնում այն-
 պիսի օժանդակութիւն, որ բարձր է անճառի ոյ-
 ժերից: Հենց այս նպատամատոյց կասսաների
 ֆոնկցիան է եղել, որչափ զիտենք, բանուորա-
 կան պրոֆեսսիոնալ միութիւնների սկզբնական
 և մատածր միակ ֆունկցիան: Այս է եղել յաճախ
 այն շաղկապող օղակը, որ միացրել է ժամանա-
 կակից բանուորական պրոֆեսսիոնալ միութիւն-
 ների հետ նաև այլ գոյնի բանուորական միու-
 թիւններ:

Չնայելով որ նպատամատոյց կասսաները
 անցեալում, բայց նաև ներկայում, առաջնակարգ
 դեր են խաղացել շատ նշանաւոր և խոշոր բան-
 ուորական միութիւնների մէջ, բայց և այնպէս
 նրանք չեն կազմում այս միութիւնների իսկա-
 կան էութիւնը: Հիւանդութեան, դժբախտ պատա-
 կան հարների, մահուան և այլ դէպքերում իրենց ան-
 դամների նպատող կասսաներ կարող են գոյու-
 թիւն ունենալ և գոյութիւն էլ ունեն թէ բան-
 ուորների և թէ ոչ—բանուորների համար:

Անդլիայի Friendly Societies, Իտալիայի società di mutuo soccorso անունով կազմակերպութիւնները այսօր էլ նպաստում են թէ վարձու բանուորների և թէ մանր պաշտօնեաների, գիւղացիների և կամ արհեստաւորների: Եթէ բանուորները նպաստ ընդունողների մէջ ամենամեծ տոկոսն են կազմում, այդ ցոյց է տալիս միայն այն, որ նրանք առաւել չափով կարիք ունեն կասսաների նպաստին: Բանուորական կամաւոր ապահովագութեան փոխարէն եւրոպական երկիրներում հետզհետէ հաստատուում է պետական ստիպողական ապահովագրութիւն, որով գործատէրերը կամ հասարակական իշխանութիւնները օրէնքով պարտաւորուում են նպաստել վաստակի անընդունակ բանուորներին: Ինչ յետագայում մենք քննութեան կառնենք այն, թէ որչափ մեծ յառաջադիմութիւն է այս հանգամանքը թէ բանուորական շահերի տեսակէտից մասնաորապէս և թէ կուլտուրական շահերի տեսակէտից ընդհանրապէս: Այստեղ հարկաւոր է շեշտել այն իրողութիւնը, թէ վաստակազուրկ բանուորների հոգատարութիւնը համայնական — օրինական ճանապարհով է ապէս ցածրացրել է բանուորական միութիւնների նշանակութիւնը իբրև նպաստամատոյց կազմակերպութիւններ: Սակայն միւս կողմից աւելի և աւելի մեծ նշանակութիւն է ստանում բանուորական միութիւնների յատուկ ֆունկցիան:

Այս յատուկ ֆունկցիան, ընդհանրապէս ասելով, կայանում է նրանում, որ բանուորական

միութիւնները ձգտում են բարելաւել բանուոր մարդկանց աշխատանքի պայմանները: Այս տեսակէտից բանուորական միութիւնները նպատակադրում են նախ ազդել շուկայի պայմանների վրայ յօգուտ բանուորների: Այսպէս են վարւում այն նկատմամբ, թէ բանուոր մարդու աշխատանքի կարողութիւնը, հնուց սկսած, հանդիսանում է շուկայում իբրև սոսկ ապրանք, որի արժէքով բանուորը իր ապրուստն է հոգում: Բանուորը կամովին վաճառում է, կամ աւելի ճիշտը ասած, վարձու է հանում իր աշխատանքի կարողութիւնը: Կապիտալիստ գործատիրոջ հետ պայման կապելով բանուորը որոշ վարձագինով նրա արամագրութեան տակ է դնում իր աշխատանքի կարողութիւնը՝ իբրև «ապրանք»: Ինտոլութիւնը ցոյց է տուել, որ աշխատավարձի բանակը — այլապէս՝ աշխատանքի կարողութիւնը գործադրելու համար պահանջուող հատուցումը — կախուած է աշխատանքի շուկայի վիճակից, այսինքն՝ առաջարկի և պահանջի յարաբերութիւնից: Եթէ երկու կապիտալիստ վազեն մէկ բանուորի յետեւից — ինչպէս որ արտայայտել է արդէն Ռիկարդոն, — այն ժամանակ աշխատանքի պայմաններն էլ կդառնան յօգուտ բանուորի. ընդհակառակը, եթէ երկու բանուոր մէկ կապիտալիստի յետեւից վազեն՝ աշխատանքի պայմանները կդառնան անպաստ բանուորների համար: Այսպիսով ուրեմն բանուորները պէտք է միշտ ձգտեն առաջարկի և պահանջի թուական — բանակական յարաբերութիւնը անգագար յօգուտ իրենց կերպաւորել, հե-

տեապէս նաև՝ բանուորական աշխատանքի չափազանց մեծ առաջարկի առաջը առնել: Այս բանին հասնելու համար նախ հարկաւոր է, որ տարածական համաչափութեան մէջ գրուեն աշխատաւոր ոյժերը: մէկ վայրում երբ զանգործ աշխատաւորներին պէտք է տեղափոխել մի ուրիշ վայր, որտեղ սակաւ աշխատաւորներ կան: Սրա համար հարկաւոր է տեղեկութիւններ ձեռք բերել աարբեր վայրերի շուկաների մասին. իսկ այս կարելի է՝ կազմակերպելով տեղեկատու մարմիններ: Այս է բանուորական միութիւնների առաջին և տարրական գործունէութիւնը: Եթէ մենք տեղեկանում ենք, թէ Ա. քաղաքում կարիք է զգացւում տասը գերձակի, եթէ դիտենք նաև, թէ Բ. քաղաքում անգործ են մնացել այդ թուով կամ աւելի գերձակներ, — դրանով արդէն արած ենք լինում առաջին քայլը վերացնելու համար այն ճընշումը, որ առաջացրել են տասը անգործ մնացած գերձակները իրենց բնակավայրի աշխատանքի շուկայի վրայ ինչ խօսք, որ անհրաժեշտ է սրա վրայ աւելացնել և այն, որ գերձակների օգուտը պահանջում է նաև գործնականապէս հնարաւոր դարձնել տասը անգործ գերձակին Բ. քաղաքից տեղափոխել Ա. քաղաքը, որտեղ նրանք գործ գտնել կարող են: Սրա համար անհրաժեշտ է անգործ գերձակներին տալ պահանջում ճանապարհածախքը:

Գործառոյց-տեղեկատու և ճանապարհածախք հայթայթող մարմինները կարևոր են այն ժամանակ, երբ հարկաւոր է համաչափ դարձնել տարբեր վայրերի աշխատաւորների առաջարկները. իսկ եթէ

ամենուրեք առաջարկը մեծ լինի պահանջից՝ այդ դէպքում յիշած միջոցները կդառնան աննպատակ: Այս դէպքում տարածական համաչափութեան փոխարէն հարկաւոր կլինի առաջացնել ժամանակի համաչափութիւն՝ յօգուտ բանուոր դասի: Հարկաւոր կլինի աւելորդ բանուորների առաջացրած ճնշումը հեռացնել և այսպիսով աշխատանքի շուկան յօգուտ աշխատաւորների կերպաւորել: Սակայն ճնշումը կարելի կլինի հեռացնել միայն այն ժամանակ, երբ աւելորդ բանուորական ոյժերը չեն առաջարկուի ի գործադրութիւն, ստանալով ապրուստի միջոց իրենց անգործութեան միջոցին: Այս էլ կատարում է աշխատազուրկներին նպաստող մարմինների ձեռքով, որոնք և հանդիսանում են բանուորական միութիւնների հարեւորագոյն մասերից մէկը: Այս դէպքում նուազատ է տրուում այն բանուորներին, որոնք աշխատել կարող են և կցանկանային աշխատել, բայց պարտաւորում են չաշխատել գործի մէջ հող ընկերների շահերը նկատի առնելով: Սրանով է տարբերում էապէս օժանդակութեան այս եղանակը գործազուրկի միջոցին տրուող օժանդակութիւնից և հանդիսանում է իբրև մի միջոց շուկայի պայմանները բարելաւելու, այսինքն առաջարկը և պահանջը համաչափ դարձնելու:

Սակայն ժամանակի ընթացքում փորձառութիւնը և խորհրդածութիւնը ցոյց տուին, որ առաջարկի և պահանջի համաչափութեամբ դեռ ամեն բան վերջացրած չէ լինում: Դիւրութեամբ համոզուեցին մարդիկ, որ աշխատանքի պայման



ները կերպաւորել չէր կարելի աւտոմատիկ կամ մեքենական եղանակով, ինչպէս մի ժամացոյց կամ մեխանիզմ: Շուկայի արտաքին համաչափ վիճակ չէլ — օր. երբ առաջարկը և պահանջը իրար ծածկում են — կարող են բանուորի համար տարբեր հետևանքներ առաջանալ: Ապրանքի շուկայից վերցրած համեմատութիւնը պէտք է հաստատէր այս կարծիքը: Ինչպէս է որ, օրինակ, սեղանագործը պատրաստում է շարաթական որոշ թուով սեղաններ, չէ արդիւնահանում չափից աւելի կարասիք, այլ միշտ յարմարում է եղած պահանջին, բայց և այնպէս նա ստիպուած է լինում միշտ ցածր գնով վաճառել պահանջողին իր ապրանքը: Ինչո՞ւ է այս այսպէս. — որովհետև կարասիք արտադրող արհեստաւորը կուրի մէջ հանդիսանում է իբրև աւելի տկար կողմ, այն կուրի մէջ, որտեղ որոշում են վաճառքի պայմանները: Իհտող մարդը տեսնում է, որ այս պայմանների որոշումը չէ կարելի ընդունել իբրև անկենդան մարմինների առաջ բերած գործ, այլ իբրև մի կուր, որ մղում է կենդանի, հակընդդէմ շահերի տէր մարդկանց մէջ: Այսպիսով ուրեմն բացում են բանուորական միութիւնների առջև ըստ ամենայնի նոր պերսպեկտիւներ: Այդ միութիւնները իրենց միակ կոչումը չեն տեսնում այլևս շուկայի պայմանները որոշելու մէջ, այլ բանուորների և գործատէրերի մէջ մղուող կուում առաջինին թուութիւնը հանդիսանալու: Եթէ մինչև այժմ այդ միութիւնները շուկան յօզուտ բանուորների կերպաւորել էին ջանում՝ այժմ կու-

չուած են նրանք սրանց կուում ոյժերը ամրապնդելու:

Այս նկատմամբ հարկաւոր համարուեց ամենից առաջ ծանօթանալ բանուորական դրութեան թոյլ կողմերի հետ՝ պայման կապելու ժամանակ: Այս էլ կարճ ժամանակում յաջողուեց լիովին: Այժմ երեխան անգամ գիտէ, որ աշխատանքի Այժմ երեխան անգամ գիտէ, որ աշխատանքի պայմանները որոշելու կուում բանուորը աւելի թոյլ կողմ է հանդիսանում այն պատճառով, որ նա ստիպուած է իր բանուորական ոյժը աւելի շուտափոյթ կերպով գործադրելու, քան կապիտալիստը իր կապիտալը. նաև՝ որ այս դրութեան մէջ աւելի շուտ մրցուեցն է առաջանում բանուորների քան կապիտալիստների մէջ: Ասենք վերջին վերջոյ երկու կողմն էլ հաւասար չափով ստիպուած են իրար անտես չառնել, եթէ կամենում են գոյութիւն պահպանել: Օրինակ թէ կարասիքի պահեստի տէր կապիտալիստը և թէ կարասիք պատրաստող արհեստաւորը, երկուսն էլ չեն կարող իրենց գոյութիւնը շարունակել առանց մէկմէկու: Այս է իրերի յայտնի և տարօրինակ վիճակը, որից և բղիււմ է բանուորական միութիւններին առաջին հոգսը. այն է՝ բանուորին ընդունակ դարձնել կուուի ելքին սպասելու:

- Այս էլ բնութանում է երկուսի.
- 1. Հոգս տանել, որ սպասել ցանկացող բանուորի թողած գործը ուրիշը չզրաւէ:
 - 2. Հոգս տանել, որ սպասող, ուրեմն և վաստակից զրկուող, բանուորը ապրել կարողանայ:
- Այս երկու կազմով է բնորոշում ամեն մի

բանուորական միութեան՝ իբրև կուուղ կազմակերպութեան՝ հիմնական նշանակութիւնը: Միանգամայն պարզ է հետեւելը. յիշած նպատակները իրագործելու համար անհրաժեշտ է, որ բանուորները իբրև առանձին-առանձին անհատներ միանան և խմբովին առաջ ընթանան: Երբ մի գործարանի, մի քաղաքի և կամ մի շրջանի բանուորներ միահամուռ ոյժերով են պահանջներ դնում, այն ժամանակ նրանք աւելի էլ մեծ հաւանականութիւն ունեն բաւարարութիւն ստանալու: Սրտնից գատ բանուորական միութիւնները պիտի աշխատեն, որ ուրիշ տեղերից աշխատել ցանկացող բանուորներ չգան «չուն հեռու պահել»,—այս է մեր ժամանակի պրոֆեսսիոնալ բանուորական շարժման նշանաբանը. նախ, որ ազատ մնացած զբաղմունքը ուրիշը չգրաւէ. երկրորդ՝ ընկերակցական կասսաներ հիմնելով համերաշխաբար հրնարաւոր դարձնել կամաւ անգործ մնացած բանուորներին ապրել, կուուել և ելքին սպասել: Այն դէպքում, երբ այս սպասողական դրութիւնը կանխամտածուած և ծրագրուած է լինում, առում ենք, թէ տեղի է ունեցել գործազուլ:

Ոմանք անուանել են բանուորական միութիւնները գործազուլի կազմակերպութիւններ: Սակայն այս այսպէս է այն մտքով, ինչ մտքով որ ժամանակակից գործը պատերազմի կազմակերպութիւն անուանել կարելի է: Ինչպէս որ սպասողիութեան նպատակը չէ պատերազմ, այնպէս էլ բանուորական միութիւնների նպատակը չէ գործազուլ: Երկուսն էլ հանդիսանում են

իբրև սոսկ միջոց նպատակի՝ զօրեղանալու համար: Առանց անհեթեթ լինելու կարելի է նոյն կերպ յիշած երկու կազմակերպութիւններն էլ անուանել խաղաղութեան կազմակերպութիւններ: Այս էլ այն նկատմամբ, թէ իրար դէմ կանգնած երկու հակառակորդների մէջ այն ժամանակ միայն հնարաւոր է «խաղաղութիւն», այսինքն կուուի յուզմունքի ձնշում, երբ երկու կողմն ևս ամենամեծ չափով պատրաստուած են ճակատամարտի: Ինչ խօսք, որ բանուորական միութիւնները հանդիսանում են ոյժի կազմակերպութիւններ, և ինչ խօսք, որ նրանց կուուի ամենաազդու միջոցը գործազուլն է:

Սակայն նրանք այս միջոցը կամովին կարող են փոխարինել ուրիշ միջոցով, եթէ լինի այսպիսի յարմարաւոր միջոց: Իբրև այսպիսի փոխարինող միջոց ժամանանակի ընթացքում հանդէս է գալիս խմբական պայմանագրութիւնը: Այսպէս են կոչել աշխատանքի պայմանների կանխական կարգաւորումը կազմակերպուած բանուորների և կազմակերպուած գործատէրերի մէջ՝ մի արդիւնագործական հիմնարկութեան սահմանում: Արդարև, եթէ նոյն նպատակը՝ աշխատանքի ամենանպաստաւոր պայմաններ՝ իրագործել կարելի է առանց քացարձակ ընդհարման, որ երկու կողմի համար էլ աւերիչ է, եթէ գործազուլի ահաբեկող ուրուականը ինքնին բաւական է բանուորի ոյժը ծայրագոյն ստիճանին հասցնելու համար, ապա ուրմն թեթևամիտ և յամառ քայլ կլինէր բանուորների կողմից՝ այնուամենայնիւ

գործադուլի դիմել նպատակին հասնելու համար։ Այս նկատմամբ հիմնուել են այնպիսի կազմակերպութիւններ, որոնց կոչել են «գործադուլից խուսափող և խաղաղարար մարմիններ»,—մի արտայայտութիւն, որ ըստ ամենայնի ճշգրիտ չէ և արտայայտում է նրանց աւելի արտաքին կողմը։ Այս մարմինները նպատակն է երկու կողող կուսակցութիւնների մէջ համաձայնութիւն կայացնել։ Այս համաձայնութիւնները վերաբերում են գլխաւորապէս աշխատանքի տեղութեան կարգաւորմանը (մաքսիմալ աշխատանքի օր) և աշխատավարձի չափին։ Բանուորական կազմակերպութիւնների այս նոր տեսակը, որ Անգլիայում արդէն ծաղկեալ վիճակ ունէ, առաջադէմ քայլեր է անում նաև միւս երկիրներում։ Կարելի է ասել, որ նա է աշխատավարձի սոցիալականացումից ապագայ եզրանակը։

II. ՊՐՈՖԵՍՍԻՈՆԱԼ-ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻ ՆՆԵՐԻ ԳՈՆԱԿՐ ԵՒ ԳՈՐԾՈՒԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՄ.

Նիւ-Եորկի աշխատանքի բիւրոն, հիմնուելով պաշտօնական տեղեկագրիչների և բանուորական դաշնակցութիւնների հրատարակութիւնների վրայ տալիս է սովորաբար Եւրոպայի և Հիւսիսային Ամերիկայի կազմակերպութեամբ բանուորական միութիւններին ընդհանուր

վիճակագրութիւնը։ Նորագոյն վիճակագրութիւնը տեղի է ունեցել 1903 թ. սեպտեմբերին, որի համաձայն բանուորական միութիւնները առանձին-առանձին երկիրներում ունեն նետեալ թըւով անդամներ։

Միացեալ Նահանգներ և Կանադա	(սեպ. 1903) 2,500,000
Մեծ Բրիտանիա և Իրլանդիա	(դեկտ. 1902) 1,915,506
Գերմանիա (դեկտ. 1902)	1,092,642
Ֆրանսիա (յունուար 1902)	614,204
Իտալիա (օգոստ. 1902)	480,689
Աւստրիա (դեկտ. 1902)	166,488
Դանեմարք (յունուար 1902)	101,964
Բելգիա (1902)	83,677
Շուեդիա (յունուար 1902)	69,009
Շուեյցարիա (1899)	49,034
Սպանիա (յունուար 1903)	46,896
Հոլլանդիա (մարտ 1903)	17,062
Նորուեգիա (յունուար 1902)	14,450
Ռենգարիա (յունուար 1902)	8,222

Բրիտանական բանուորական միութիւնների անդամներից մօտ 10, 000 հոգի գտնուում են գաղթավայրերում, գլխաւորապէս Միացեալ Նահանգներում, այս պատճառով էլ վերջիններս կրկնակի են հաշուի առած։ Իտալիայի բանուորական միութիւնների անդամների թիւը, շնորհիւ գիւղատընտեսական բանուորական կազմակերպութիւնների կազմալուծուելուն, երկու տարուց ի վեր իջել է 250,000-ի։

Անդլիայի բանուորական պրոֆեսիոնալ միութիւնները (Trade Unions): Բանուորական պրոֆեսիոնալ միութիւնների կլասսիկ հայրենիքը Անգլիան է: Այստեղ է առանից առաջ սկիզբ գրուել բանուորական շարժմանը (ամբողջ 19-րդ դարը լի է տրեդ-իւնիոնների պատմութեամբ): Անգլիայում են ձեռք բերել բանուորական կազմակերպութիւնները իրենց ամենամեծ զօրութիւնը: Թէպէտ Միացեալ Նահանգների բանուորական միութիւնները վերջին տարիներում իրենց անդամների թուով սկսում են գերազանցել անգլիական տրեդ-իւնիոններին, բայց և այնպէս նրանք չեն կարող մրցել վերջինսների ուժեղ և ներգաշնակ կազմի հետ: Բոլոր երկիրների, նաև Միացեալ Նահանգների, բանուորական կազմակերպութիւնները իրենց լաւագոյն կողմերը վերցրել են անգլիական տրեդ-իւնիոններից:

1901 թ. վերջին գոյութիւն ունեցող անգլիական տրեդ իւնիոնների թիւը հասնում էր 1236-ի, ունենալով ընդամենը 1.922,780 անդամներ, իսկ 1900 թ. վերջին կային 1252 ընկերութիւններ՝ ընդամենը 1,910,614 անդամներով:

Տրեդ-իւնիոնների ընդհանուր թուի $\frac{2}{3}$ մասից աւելի (68%) պատկանում են տեքստիլ (մանուսֆակտուրային) արդիւնագործութեան, մետաղագործութեան, մեքենագործութեան, շինարարական աշխատանքների և հանքագործութեան ճիւղերին: Միմիայն հանքագործութեամբ և քարտաշուծեամբ զբաղուող անդամների թիւը հասնում է 514,536-ի որ անում է

Բանուորական միութիւնների բոլոր անդամները 270/0-ը: Ստորև նշանակուած աղյուսակը կարգէ բանուորական միութիւնների, լատիպէս նրանցից 100 նշանաւորների, աստիճանական դարգայութիւնը:

Թուական	100 նշանաւորազօյն բանուորական միութիւններ		Մնացած բանուորական միութիւնները		Բոլոր բանուորական միութիւնները միասին	
	Անդամների ընդհանուր թիւը	Աճում (+) նուստում (-) 0/0-ով	Անդամների ընդհանուր թիւը	Աճում (+) նուստում (-) 0/0-ով	Անդամների ընդհանուր թիւը	Աճում (+) նուստում (-) 0/0-ով
1892	895,487	—	607,811	—	1,503,298	—
1895	906,308	—0.9	502,178	—3.9	1,408,486	—2.0
1898	1,034,790	—2.0	614,671	+10.2	1,649,461	+2.2
1901	1,161,226	+0.7	761,554	+0.6	1,922,780	+0.6

100 նշանաւորագոյն բանուորական միութիւնները դրամական վիճակը. *)

Քուական	Անդամները ընդամենը մարտական վերջում	Մ Ո Ի Տ Ք		Ե Լ Ք		Առձեռն դրամագրութի մարտական վերջին
		ընդամենը	ամեն մի անդամին	ընդամենը	ամեն մի անդամին	
1892	895,187	Ֆ. ստեղծ.	շիւղ. պեններ	Ֆ. ստեղծ.	շիւղ. պեններ	1,605,067 35 շ. 10 1/4 պ.
1895	903,308	1,167,535	32 շ. 9 1/4 պ.	1,426,613	31 շ. 10 1/4 պ.	1,733,122 38 շ. 3 պ.
1898	1,034,790	1,555,639	34 շ. 3 3/4 պ.	1,389,207	30 շ. 8 պ.	2,679,567 51 շ. 9 1/2 պ.
1901	1,161,226	1,912,072	36 շ. 11 1/2 պ.	1,489,244	28 շ. 6 1/4 պ.	4,161,916 71 շ. 8 1/4 պ.

*) 1 ֆունտ ստեղծելու = 20 շիւղիկ. 1 շիւղիկ = 12 պեններ: Մէկ ֆունտ ստեղծելու = 10 ստեղծ. 1 շիւղիկ = 50 կող. 1 պեններ = մտա. 4 կող.

Յիշած միութիւնները ունեցել են հետեւեալ ծախքերը.

Քուական	Փորձագրութի համար		Նպատակաւորագրութի և այլ կարգաբանութի.		Վարչական և այլ ծախքեր	
	ընդամենը (ֆունտ ստեղծելու)	բոլոր ծախքերի մասին	ընդամենը (ֆունտ ստեղծելու)	բոլոր ծախքերի մասին	ընդամենը (ֆունտ ստեղծելու)	բոլոր ծախքերի մասին
1892	389,919	27,3	781,010	55,0	252,624	17,7
1895	196,686	14,2	940,591	67,7	251,927	18,1
1898	313,434	21,1	869,863	58,4	305,947	20,5
1901	204,517	12,3	1,072,272	64,8	378,845	22,6
Տարբ. մարտական ընդամենը միջին թիւով	293,552	19,4	919,301	60,3	299,310	19,8

Գերմանիայի բանուորական կազմակերպութիւնները: Գերմանիայի բանուորական պրոֆեսսիօնալ միութիւնները իրենց ծագումը առնում են մեզնից մօտաւորապէս մէկ սունդ առաջ: Պատահական և աննշանակ խմբակցութիւններ հաշուի չառնելով՝ կարելի է 1868 թուականը համարել նրանց սկզբնաւորութեան տարին: Գերմանական բանուորական միութիւնների ինքնատեսակութիւնը կայանում է նրանում, որ քաղաքական տարբեր կուսակցութիւններ աշխատում են նրանց իրենց կողմը քաշել, իւրաքանչիւրը նրանցից ցոյց տալով իրեն բանուորական շահերի պաշտպան: Այս հանգամանքը նուազեցնում է Գերմանիայի բանուորական շարժման նշանակութիւնը, պատճառ որ նրանք չեն կարողանում անհրաժեշտ համաձայնութեան դալ: Ապագայի գործը պիտի լինի բանուորական միութիւնները «չեզօքացնել», այսինքն՝ նրանց ինքնուրոյն զարձնել քաղաքական կուսակցութիւնների հանդէպ:

Ներկայումս Գերմանիայում գոյութիւն ունեցող կազմակերպութիւններն են.

ա) Սոցիալ—դեմոկրատիական բանուորական միութիւնները (Gewerkshafte n), որոնք կոչւում ին «ազատ» բանուորական միութիւններ: Սրանք էլ բաժանւում են երկու մասի. 1. կենտրոնական միութիւններ, որոնք ենթարկւում են «Գերմանիայի սոց.—դեմոկր. բանուորական միութիւնների գլխաւոր յանձնաժողովին», և 2. տեղական կազմակերպութիւններ:

բ) Առաջադիմական կամ ազատամիտ

Հիրշ-Պունկերեան բանուորական միութիւնները (Gewerkvereine):

գ) կենտրոնի (կաթօրիկ) կուսակցութեան (թէև անունով համայնական-քրիստոնէական) պատկանող «քրիստոնէական բանուորական միութիւնները»: Սրանք ևս բաժանւում են երկու մասի. 1. նրանք, որոնք ենթարկւում են «Գերմանիայի քրիստ. բան. միութիւնների ընդհանուր գաշնակցութեանը», և 2. «անկախ» (քրիստոնէական) բան. միութիւններ:

դ) Անկախ ընկերակցութիւններ:

Հետևեալ աղիւսակից տեսնում ենք մենք, թէ ամեն մի միութիւն որչափ «կազմակերպուած» բանուոր անգամներ ունէ:

	Անդամների թիւը		Աճում կամ նուազում 1902 թ.
	1902	1901	
Կենտրոնական միութիւններ.	733,206	677,510	+ 55,696
Տեղական կազմակերպութիւններ.	10,090	9,360	+ 730
Հիրշ-Պունկերեան բանուոր. միութիւններ	102,851	96,765	+ 6,086
Քրիստոն. բանուոր. միութիւններ	84,652	84,667	— 15
Անկախ (քրիստ.) բանուոր. միութիւններ	105,248	90,412	+ 14,836
Ազատ ընկերակցութիւններ	56,595	49,651	+ 6,944
Ընդամենը . . .	1,092,642	1,008,365	+ 84,277

Հետևեալ կարևոր թուերը վերաբերում են այլ և այլ կազմակերպութիւնների.

ա) Ազատ բանուորական միութիւններ: Կենտրոնական միութիւններից ամեն մէկի ունեցած ոյժի և ֆինանսական դրութեան մասին կարող են տեղեկացնել մէջ հետևեալ թուերը:

Ստորև նշանակած թուերից երևում է, թէ ինչ բաների համար է ծախսուել տասը միլիոն մարկ փողը:

1902-ին ծախսուել են հետևեալ բաների համար	Կազմակերպութիւններ	Մարկ *)
Միութեան օրդան	60	798,480
Ազիտացիայ	59	390,588
Գործազուլ սևփական ձեռնարկ	48	1,888,983
Գործազուլ ուրիշների ձեռնարկ	40	41,346
Իրաւաբանական պաշտպանութ. «Յատուկ» նպատ	50	93,485
«Յատուկ» նպատ	38	250,661
Ճանապարհածախք	41	709,778
Աշխատազուրկներին նպատ	27	1,593,022
Հիւանդներին նպատ	18	793,878
Ինուալիդներին նպատ	5	154,398
Ուրիշ տեսակի նպատաներ	50	250,129
Աշխատանքի միջնորդութիւն	11	5,450
Գրադարաններ	15	7,065
Ուրիշ նպատակների համար	55	293,114
Ժողովներ և համաժողովներ	52	144,733
Գլխաւոր յանձնաժողովին տուած	58	75,755
Դատարանական ծախքեր	13	1,863
Ռոճիկներ	58	250,415
Վարչութեան ծախքեր	58	267,739

*) 1 մարկ = մօտ 48 կոպ.

Կենտրոնական միութիւնների հետ համեմատած Հոյժն ոյժ են ներկայացնում տեղական կազմակերպութիւնները, որոնց անդամները թիւը 1902-ին միմիայն 10,090-ի էր համու. մի թիւ, որ ունէին նրանք արդէն 10 տարի առաջ: Հետևեալ աղիւսակն էլ ցոյց է տալիս, թէ բանուորական «միութիւնները վերջին տարիներում որչափ զարգացել են և ծաղկել:

Կոմիտայ	Միութեան թիւը	Սրանցից կին բանուորներ	Տեղական կազմակերպութիւններ	Ընդամենը	Կենտրոնական միութիւնները և դրանցից միութիւնները (մարկ)
1892	56	4,355	7,640	244,737	646,415
1895	53	6,697	10,781	269,956	1,640,437
1898	57	13,481	17,500	511,242	4,373,313
1901	57	23,699	9,360	686,870	8,798,333
1902	60	28,218	10,90	743,296	10,253,559

բ) Հիւրընկերական բանուորական միութիւնների կազմը 1902 թուականի վերջին ունէր հետեւեալ թուով անդամներ և կարողութիւն:

Տեղակական կազմակերպութիւնների ընդհանուր թիւը հասնում էր 1,992-ի, որից միմիայն մեքենագործ և մետաղագործ բանուորական կազմակերպութիւններ՝ թուով 659, (40,288 անդամներով): Բոլոր կազմակերպութիւնների անդամների ընդհանուր թիւն էր 102, 581:

Այս բոլոր կազմակերպութիւնների կարողութիւնը այսչափ էր: Բանուորական ընկերութիւնների կազմաներում կար 1, 289, 223 մարկ և 62 ֆեննիգ. հիւանդների և թաղման կազմաներում կար 1, 258, 704 մարկ. յատուկ թաղման կազմաներում՝ 672, 736 մարկ և 33 ֆեննիգ: Ընկերութիւնների ընդհանուր կարողութիւնն էր 3, 220, 969 մարկ և 95 ֆեննիգ: Հիւրընկերական բանուորական միութիւնների գլխաւոր սլոբ կազմում են մեքենագործ բանուորները, որոնք և կազմում են բոլոր անդամների երկու հինգերորդական մասը, ունենալով ընդհանուր կարողութեան համարեա կէսը (1,476,308 մարկ և 92 ֆեննիգ): Այս կազմակերպութեան գլխաւոր գործունէութիւնը տարածուած է նպաստատաւոր ձեռնարկութիւնների շրջանակում: Հիւանդների և թաղման կազմաների գումարը կազմում է ընդհանուր կարողութեան համարեա երկու երրորդրդական մասը:

գ) Հետեւեալ թուերից ստանում ենք մենք տեղեկութիւն «քրիստոնէական» բանուորական

միութիւնների ծաւալման և ֆինանսական դրութեան մասին: Նախ «ընդհանուր գաշնակցութիւնը»: Սրան ենթարկուած են 977 տեղակական կազմակերպութիւններ: 1903 թուականի ապրիլի 1-ին դրանց անդամների թիւը հասնում էր 84,652-ի: 1902 թուականի ապրիլի 1-ից սկսած այդ անդամների թիւը աճել է 5,575-ով: Նաշնակցութեան ընդհանուր մուտքն էր 466,909 մարկ և 96 ֆեննիգ. իսկ ընդհանուր ելքը՝ 328,455 մարկ և 85 ֆեննիգ: 1900 թուականի դեկտեմբերի 31-ին ընդհանուր կազման ունէր 335,085 մարկ և 76 ֆեննիգ:

Ընդհանուր գաշնակցութեանը չմասնակցող կազմակերպութիւններ: Տեղական կազմակերպութիւնների թիւը հասնում էր 945-ի: 1903-ի ապրիլի 1-ին դրանց անդամների թիւը հասնում էր 105,248-ի. իսկ 1902-ի ապր. 1-ից սկսած անդամների թիւը աճել է 8,580-ով: Ընդհանուր մուտք ունեցել են 356,954 մարկ և 23 ֆեննիգ: Ընդհանուր ելք՝ 305,263 մարկ և 65 ֆեննիգ: 1900-ի դեկտ. 31-ին կազմաներում կար 237,563 մարկ և 8 ֆեննիգ: Այս բոլոր թուերը ընդհանուր գաշնակցութեան թուերի հետ գումարելով ստանում ենք: Տեղակական կազմակերպութիւններ՝ թուով 189, 1922. անդամների թիւը 1903-ի ապր. 1-ին՝ 189, 900. 1902-ի ապր. 1-ից սկսած այդ թիւը՝ աճել է 14,155-ով: Ընդհանուր մուտք՝ 823,864 մարկ և 18 ֆեննիգ. 1900-ի դեկտ. 31-ին կազմանում կար 572,648 մարկ և 8 ֆեննիգ:

«Քրիստոնէական» բանուորական կազմա-

կրբպութիւնների համար ընտրուէ և այն, որ նրանք շատ արագ կերպով աճել են: Ամենահին կազմակերպութիւնները հիմնուել են 1890-ական թուականների կէսերին, իսկ շատերը հիմնուել են միմիայն վերջին տարիներում: Այս կարճ ժամանակամիջոցը նկատի ունենալով՝ նրանց անդամների թիւը շատ խոշոր է, համարեա երկու անգամ աւելի, քան Հորշ-Պունկերեան ընկերութիւնների անդամների թիւը, չնայելով որ վերջին տեսակի ընկերութիւնները 35 տարուց ի վեր գոյութիւն ունեն:

Ի հարկ է, քրիստոնէական բանուորական միութիւնները ունեն և մի ուրիշ առանձնայատկութիւն: Նրանց անդամների թուի աճման հետ զուգընթացաբար չէ աճել նաև նրանց ֆինանսական կարողութիւնը: Տարակոյս չկայ, որ այս ընկերութիւնները Գերմանիայի բանուորական կազմակերպութիւնների մէջ ամենաաղքատն են, ու այդ պատճառով էլ՝ ամենաթոյլը:

Հետևեալ աղիւսակով կարելի է մի գաղափար կազմել այդ ընկերութիւնների ֆինանսական դրութեան մասին. սակայն այդ աղիւսակը վերաբերում է միմիայն «ընդհանուր դաշնակցութեանը» մասնակցող քրիստոնէական բանուորական միութիւններին:

Մ	Ո	Ի	Տ	Ք	Ե	Լ	Ք	Միջոց զոմոս	
								Պիտոտոտոս, գոյիւթմի շվմառ գվմդո, -գոմոտոմգ	մարդ
Անգամ-նեբի միւսուագ վճարները	Անգամ-մակցական վճարները	Քացակի վճարները	Ուրիշ եկամուտները	Գործարար	Գործարար	Քաղաքային	Քաղաքային	Միջոցտոտոս - մի վիտո - գո շվմառ	Մարդ
7,575 մարդ	394,555 մարդ	21,873 մարդ	37,149 մարդ	88,626 մարդ	33,986 մարդ	5,499 մարդ	50,482 մարդ	5,585 մարդ	

Բանուորական միութիւնները՝ վերջին տասնամակի բնթայքում գրուել են ըստ գործերից մէկն է բանուորական սեկթոր տարի տարի հիմնուել: Գերմանիայի առաջին բանուորական սեկթորաբար հիմնուեց Նիւրնբերգում 1894-ին: Նա նոյառակապիւ էր «Արգիւնագործական գատարանների կառուութեան սահմանում ծագող անհամաձայնութիւններին վերջ տալու նպատակով բանուորական կոմիտէի ստեղծման, զորքան պատահարների ծերութեան և կնուարութեան վեպրում կամ ապահովագրութեան մասին տեղեկութիւններ տալ: Գործարանական օրէնստութեան, ընկերութիւն-

ներ հիմնելու, ժողովներ գումարելու իրաւունքի, նաև գործարանական վերահսկողութեան վերաբերող հարցերում խորհրդատու լինել: Սեկրետարիատը այս հարցերի վերաբերեալ գանգատներ է ընդունում և ջանում է նրանց նպատակայարմար եղանակով լուծելու: Բանուորական սեկրետարիատները այսպիսով հանդիսանում են նախ իբրև տեղեկատու մարմիններ բանուորների համար: Սրան կից նրանք սիրալիր կերպով ստանձնում են սոցիալական վիճակագրութիւն կազմելու աշխատանքը: Այդ սեկրետարիատներից մի բանիսը յանձն են աւնում նաև հանդիսանալ իբրև բանուորների ներկայացուցիչներ՝ դանազան պաշտօնաւաններում: Այսպիսի սեկրետարիատներ են հիմնել «ազատ» բանուորական միութիւնները, բողոքական և կաթոլիկ բանուորական խմբակցութիւնները: Իրեն ունեցած մեծ նշանակութեան համեմատ «ազատ» միութիւնները ունեն նաև աւելի մեծ մասնակցութիւն բանուորական սեկրետարիատներում: 1904 թուականի սկզբին գործում էին արդէն 41 բանուորական սեկրետարիատներ՝ հիմնուած յիշած կազմակերպութիւնների ձեռքով: Իրանց թւում կարևորագոյն նշանակութիւն են ստացել Ֆրանկֆուրտի (Մայնի վրայ), Նիւրնբերգի, Կէօլնի և Բրեմենի բանուորական սեկրետարիատները:

III. ՊՐՈՖԵՍՍՈՆԱԼ-ԲԱՆՈՒՐՈՒԹԱԿԱՆ ՇԱՐԺՍԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ.

Կարևոր է որոշել, թէ որոնք են այն սահմանները, որոնց շրջանակում բանուորական միութիւնները իրենց դասակարգային շահերը պիտի պաշտպանեն: Հասարակութիւնն էլ կարող չէ անտարբեր վերաբերմունք ցոյց տալ այս հարցին: Ընդհանրութիւնը անտարբեր ֆնալ կարող չէ երբօր. որևէ վայրում հոցթու խնկրի և նրանց գործաւորները մէջ եղած սոսկ աննշան թիւրիմացութիւնից է ծագել գործադուլ և այդպիսով կանգ առել այնտեղ ապրուստի ամենամանրածիշտ միջոցի հայթայթումը, և կամ երբ նման պատճառով կանգ է առել լրագիրների հրատարակութիւնը, ընդհատուել է երկաթուղային և քաղաքային հաղորդակցութիւնը և կամ քաղաքը զուրկ է ֆնացել լուսավառութիւնից՝ որովհետև դազի բանուորները գործադուլ են արել, և այլն: Այսպիսի դէպքերը գործադուլ են արել, և այլն: Այսպիսի տարուի, որ քերում անհրաժիշտաբար հոգս պիտի տարուի, որ գործատէրերի և գործաւորների մէջ ծագած անհամաձայնութեանը հնար կղածին չափ շուտով վերջ տրուի: Այս բանը կարելի է գլուխ բերել օրինակ մի հրապարակային միջնորդ դատարանի պարտաւորիչ վճիռներով: Սակայն հանրային տագպարտաւորիչ վճիռներով: Սակայն հանրային տագպարտաւորիչ սոյնաման դէպքեր տեղի են նապ առաջացնող սոյնաման դէպքեր տեղի են ունենում պրոֆեսսիոնալ - բանուորական միութիւնների մէջ շատ սակաւազէպ անգամ. ու այս՝ միայն գործադուլների ժամանակ: Բանուորական միութիւնների ֆնացած բոլոր գործառնութիւն-

ների մէջ սովորաբար բնաւ տեղի չէ ունենում հանրային շահերի փաստում: Գործադուլներից ծագող փասաբեր հետևանքներն էլ սովորաբար վերաբերում են միմիայն գործադուլի ենթարկուած արդիւնագործութեան և ոչ նաև այլ շրջանների: Եւ հաստատ իրողութիւն է, որ պրոֆեսսիոնալ-բանուորական միութիւնները փրկաբար հետևանքներ ունեն սչ միայն բանուորների, այլ նաև մի ամբողջ ժողովրդի ընդհանուր կուլտուրական շահերը ի նկատի ըստ անելով. ըստ այսմ էլ հրապարակային իշխանութիւնները, օրէնստուութիւնը և կառավարութիւնները լաւագոյն գործ կատարած կլինեն, եթէ իրենց գործակցութեամբ նպաստեն բանուորական շարժման յարատև առաջադիմութեանը:

Եթէ ևս բանուորական շարժման սահմաններն եմ ցանկանում գծել, այս գէպքում ես ի նկատի ունեմ այդ միութիւնների յիրաւի սահմանափակ ծաւալը, նրանց իրական կարողութիւնը: Նոյն իսկ Անգլիայում, որտեղ բանուորական կազմակերպութիւններ մէկ դարից ի վեր գոյութիւն ունեն, և մի քանի տասնեակ տարիներից էլ սկսած սրանք անխափան ընդարձակուելու հնարաւորութիւն ունեն, այնտեղ անգամ հազիւ թէ արդիւնագործական բանուորների մէկ հինգերորդ մասը մասնակցութիւն ունէ յիշեալ կազմակերպիւնների մէջ: Միև երկիրներում ընդհանուր բանուորական թուի աւելի փոքր տոկոսն է կազմակերպուած: Օրինակ Գերմանիայում հազիւ $\frac{1}{8}$ -ը: Այսպէս ուրեմն առ այժմ աշխատաւոր դասա-

կարգի մի որոշ և ընտրեալ մասը միայն մասնակից է բանուորական կազմակերպութիւնների բարիքներին: Կարելի է և յոյս տածել, թէ բանուորական կազմակերպութիւնները ապագայում աւելի մեծ թուով բանուոր անդամներ ձեռք կբերեն, սակայն կասկած չկայ նաև, որ երկար ժամանակ պիտի անցնի, մինչև որ բանուորական շատ աւելի մեծաթիւ մասսաներ կազմակերպուեն: Միևնոյն ժամանակ շատ հաւանական է, որ որոշ զբաղմունքի տէր բանուորներ ընդ միշտ էլ կհանգիստանան կազմակերպուելու անընդունակ: Վերջիններիս թուին են պատկանում մանկահասակ բանուորները, կին բանուորների մեծագոյն մասը, նաև հաժարեա բոլոր տնայնագործները. սրանց թուին է պատկանում վերջապէս բանուորական դասի ամենաստորին խաւերի՝ այսպէս կոչուած անվարժ բանուորների մի խոշոր տոկոսը:

Բայց ընդունենք թէ բանուորական միութիւնները հնարաւորութիւն են տալիս իրենց կազմակերպուած անդամներին գերծ մնալ վարձու աշխատանքից բղձող ամենատեսակ շարիքներից. բայց հետևողական լինելու համար պիտի ընդունել, որ մնացած և ազայժմ չկազմակերպուած ու բանուորների մեծագոյն մասը կազմող մարդկանց շահերի պաշտպանութեան համար ուրիշ միջոցներ պիտի որոնել: Չէ որ կարելի չէ ընդհանրութեան $\frac{4}{5}$ կամ $\frac{7}{8}$ մասը կազմող և չկազմակերպուած բանուորներն միխթարել ապագայի յոյսով, երբ ամբողջ բանուորական դասը կազմակերպուած կլինի:

Միւս կողմից էլ ի նկատի պիտի առնել այն հանգամանքը, որ բանուորական միութիւնները իրենց անդամների համար իսկ միմիայն սահմանափակ չափով օժանդակիչ մարմիններ հանդիսանալ կարող են: Բանուորական միութիւնները սեփական ոյժերով դժուար թէ կարողանան ձեռք բերել բանուորներին ապահովող և ընդհանուր ընտանոցութիւն ունեցող պայմաններ, ինչպէս օրինակ՝ առողջապահական, բարոյական և նման պայմաններ՝ որոնք վերաբերում են ամբողջ երկրին կամ որոշ տեսակի արդիւնագործութեան: Այդ միութիւնները սեփական օժանդակիչ կասսաներով մասամբ միայն իրենց անդամներին ապահովել կարող են հիւանդութեան, դժբախտ պատահարների, ինուալիդութեան, ձերբութեան դէպքերում:

Վերջապէս մատնանիշ պէտք անել և այս հանգամանքի վրայ: Ասենք թէ շատ դէպքերում բանուորական միութիւնները սեփական նախաձեռնութեամբ կարողացան աշխատուոր դասի համար բարեփոխութիւններ ձեռք բերել—օր. աշխատավարձի քանակը, աշխատանքի տեղութիւնը սահմանելով. բայց այս բոլորը իրական հետեանքներ ունենալ կարող են միայն այն ժամանակ, երբ նրանց օգնութեան հասնէ պետական պարտաւորիչ օրէնստուութիւնը, այլ խօսքով՝ այսպէս կոչուած պետական օգնութիւնը: (Staatshilfe): Եթէ պետական օգնութեան շնորհիւ իրագործուած չլինէր գիշերային աշխատանքի, երեխաների, մասամբ նաև կանանց և կիրակնօրեայ աշխատանքի

սահմանափակում, այն ժամանակ աշխատանքի շուկայի պայմանները աւելի վատթար կլինէին բանուոր դասի համար, քան այժմ. ու կասկածելի իսկ կլինէր, թէ արդեօք բանուորական միութիւնների դործունէութիւնը նոյն արդիւնքը կունենար, ինչ այժմ ունէ: Խելահաս միտքը այս պատճառով էլ ասում է.— բանուորական միութիւնները վերին աստիճանի օգտարէր հաստատութիւններ են թէ իրենց՝ բանուորների համար և թէ միաժամանակ հանրութեան համար: Այդ միութիւնների առաւել առաջադիմութիւնը ցանկալի է և արժանի ձեռնտուութեան:

Սակայն նրանց գործունէութիւնը ֆուտ է սահմանափակ, նրանք այսուհետև էլ երկար ժամանակ կունենան միայն սահմանափակ թուով բանուորներ. միւս կողմից էլ՝ նրանք օժանդակել կարող են իրենց անդամներին սահմանափակ չափով, այն ևս՝ միմիայն պետական պարտաւորիչ օրէնստուութեան օգնութեամբ: Այս հիմունքներն են, որոնք բանուորների ինքնօգնութեան հետ միևնույն անհրաժեշտ են դարձնում նաև պետական օգնութիւնը: Այսպիսով ուրեմն սոցիալական ուփարմը իրագործուել կարող չէ միմիայն բանուորական մարմինների միջոցով, այլ նաև հասարակական շահերի ներկայացուցիչների՝ պետութեան և համայնքի ձեռնտութեամբ:

ՉՈՐՐՈՐԴ ԳՆՈՒՆ

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ

Մինչ պրոֆեսսիոնալ կազմակերպութիւնները սահմանուած են էապէս նրա համար, որ բարձրացնեն բանուորի եկամտաւրը,—ընկերական խմբակցութեան մի ուրիշ տեսակը ձգտում է նուազեցնել աշխատաւորների ծախքերը. այսինքն՝ սպառողական ընկերութիւնները: Այս հաստատութիւնների ունեցած մեծ նշանակութիւնը մեր ժամանակում արդէն լիակատար գնահատութեան է արժանացել բոլոր երկիրների աշխատաւորների կողմից: Թէպէտև սպառողական ընկերութիւնները չեն հիմնուում, բանուորական միութիւններին նըման, բացառապէս բանուորական շահերին ծառայելու համար, բայց և այնպէս պարագաները այնպէս են դասաւորուած, որ այդ հաստատութիւնները ամենամեծ չափով աշխատաւոր տարրերին են օգտակար հանդիսանում: Չէ որ բանուոր մարդիկ են, որոնք իրենց չնչին և անապահով եկամուտների շնորհիւ ամենքից առաջ պահանջ ունեն իրենց անհրաժեշտ կարիքները մի այնպիսի կազմակերպուած հաստատութեան միջոցով հոգալու, ինչպիսին որ հանդիսանում են սպառողական ընկերութիւնները:

Երբ սպառողները (գնողները) միացեալ ոյժերով են ապրանք գնում և բաշխում՝ այդ դէպքում նրանք ունենում են հետեւեալ առաւելութիւնները:

1. Ապրանքները գնում են աւելի էժան գնով: Հետեւեալ օրինակը պարզապէս ցոյց է տալիս, թէ որչափ մեծ է սպառողական ընկերութիւնների ցոյց տուած օգուտը: Երկու բանուորական ընտանիքներ արել են հետեւեալ անային ծախքերը:

Սպառողական ընկերութեան խանութում.

- 1. ընտանիքը շաբաթական գնել է 6,19 մարկի ապրանք.
- Ու ընտանիքը շաբաթական գնել է 8,97 մարկի ապրանք:
- Ուրեմն 1. ընտ. 1 տարում գնել է 321,88—17,70 (51/20%)
 զեղջ) = 304,18 մարկի ապրանք:
- Իսկ Ու. ընտ. 1 տարում գնել է 466,04—25,65
 (զեղջ) = 440,79 մարկի ապրանք:

Մասնաւոր խանութում.

- 1. ընտանիքը շաբաթական գնել է 7,30 մարկի ապրանք.
- Ու ընտանիքը շաբաթական գնել է 10,24 մարկի ապրանք:
- Ուրեմն 1. ընտ. 1 տարում գնել է 379,60 մարկի ապրանք:
- Դրանից հանելով սպառողական ընկերութ. մէջ արած տարեկան ծախքը — 304,18 մարկ

մնում է 1 տարուայ ընթացքում
 խնայած փող՝ 75,42 մարկ

Իսկ Ու. ընտանիքը 1 տարում ծախք
 ունեցել է 532,18 մարկ

Դրանից հանելով սպառողական ընկերութեան խանութում արած տարեկան ծախքը — 440,79 մարկ

մնում է 1 տարուայ ընթացքում
 խնայած փող՝ 91,69 մարկ

2. Սպառողական ընկերութիւնների մեծագոյն մասը ընդունել է անգլիական առաջին սպառողական ընկերութեան սիստեմը, որի համաձայն

սպառողական ընկերութիւնները խանութները ապրանք վաճառում են տեղական սովորական գր-նով և միայն տարուայ վերջը գոյացած զուտ ար-դիւնքը բաժանում են անդամների մէջ: Այսպիսով էլ սպառողական ընկերութիւնները իրենց անդամ-ների համար հանդիսանում են իբրև մի տեսակ պարտաւորիչ խնայողական կասսա-ներ: Ընկերութեան անգամը տարուայ վերջին սաւանում է մի որոշ կանխիկ գումար, որով նա կարող կլինի խոշոր գնումներ անել: Օրինակ-1901/1902 առևտրական տարուայ վերջին Մաքսո-նիայի սպառողական ընկերութիւնների գաշնակ-ցութեան 121,000 անդամներին բաժանուեց 3 1/2 միլիոն մարկ զուտ արդիւնք, որ անում է ամեն մէկին՝ 29,50 մարկ:

3) Բոլոր սպառողական ընկերութիւնները վաճառում են միայն կանխիկ վճարով. այդպի-սով սպառողական ընկերութեան անգամը ընդ միշտ ազատւում է ապառիկ գնելու քայ-քայիչ սովորութիւնից, որով չբաւոր ըն-տանիքներ շատ յաճախ փերեզակների ճանկն էին ընկնում և ի վեջոյ ընդ միշտ կործանում ի-րենց անտեսական կեանքը:

Սպառողական ընկերութիւնները նպաստե-լով բանուորների առւածախքի կանոնաւորելուն՝ միաժամանակ կարգի տակ են դնում նրանց աւ-բողջ տնային անտեսութիւնը. այսպիսով էլ այդ ընկերութիւնները հանդիսանում են իբրև առա-ջին պայման բանուորական միութիւնների նպա-տակները իրագործելու: Այս նկատմամբ Մեծ Բրի-

տանիայի արեգ-իւնիոնները և սպառողական ըն-կերութիւնները ցոյց են տալիս համերաշխ գոր-ծունէութիւն, աշխատելով ձեռք ձեռքի տուած՝ որտեղ նրանք կարող են: Ուրիշ երկիրներում ևս, մանաւանդ Գերմանիայում, արդէն նկատելի է սոյ-նանման գործունէութիւն: Սրան արգելք է հան-դիսանում սակայն այն հանգամանքը, որ բանուո-րի գրութիւնը զուտ անտեսապէս բարելաւելու հարցերը խճուղում են քաղաքական-կուսակցական նկատումներով: Սակայն տարակոյտ չէ այ, որ Գեր-մանիայի բանուորական դասն ևս բունել է այն ճանապարհը, որով ընթացել է անգլիական բան-ուորութիւնը՝ մեծամեծ յաջողութիւններ ունենա-լով: Այս հետեցնել կարելի է այն իրողութիւնից, որ Գերմանիայի սպառողական ընկերութիւնները ծաղկումը զուգահեռաբար ընթանում է բանուո-րական միութիւնների առաջադիմութեան հետ, ձեռք բերելով աւելի ու աւելի թուով անդամներ:

Իսկ թէ ինչպիսի հսկայական առաջադիմու-թիւն են ունեցել անգլիական սպառողական ըն-կերութիւնները՝ այդ ցոյց է տալիս հետևեալ տախտակը:

Քուսական	Տեղիկութիւն- տուած ընկե-րութիւնների քանակը	Տեղիկութիւն- տուած ընկե-րութիւնների քանակը	Կապիտալ (Ֆունտ ստերլինգով)		Վաճառ- քից մուտք
			սեփական	փոխ առած	
1892	1,420	1,126,880	12208,677	1,327,441	32344,534
1895	1,417	1,274,994	14123,685	1,654,344	33900,674
1898	1,436	1,535,575	17426,410	2,252,987	42581,503
1901	1,438	1,793,167	21965,994	3,326,591	52761,171

ՀԻՆԿԵՐՈՐԳ ԳՂՈՒՆ

ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ՕՐԷՆՍՍՏԻՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ՕՐԷՆՍՍՏԻՈՒԹԵԱՆ ԷՆՈՒԹԻՒՆԸ
ՆԻ ԱՐԳԻՒՆՔՆԵՐԸ.

Գործարանական օրէնստուութիւն ասելով մենք հասկանում ենք այն բոլոր օրէնքների գումարը, որոնցով մեր ժամանակուսում աշխատանքի պայմանները կապելու միջոցին որոշ սահման է դրուում պայմանագրութեան մասնակից մէկ կամ միւս կողմի անձնական քմահաճոյքին: Գործարանական օրէնստուութիւնը այսպիսով նեցուկ է դառնում բանուորին՝ երբ նա աշխատանքի մէջ է: Այդ օրէնստուութիւնը իր հոգատարութեան տակ է առնում բանուորին միայն այն դէպքերում և այնչափ ժամանակ, քանի դեռ նա յիրաւի վրադնուցի տէր է: «Գործարանական օրէնստուութիւն» արտայայտութիւնը ունէ լոկ պատմական նշանակութիւն: Նա ծագում է առել այն հանգամանքից, որ ժամանակակից բանուորական պահովագրութիւնը սկզբնապէս վերաբերում էր միմիայն գործարանական բանուորներին:

Գործարանական օրէնստուութիւնը պարունակում է հետևեալ կէտերը.—

ա) Մանկահասակ, պատանի և կին բանուորներին ընդհանրապէս կամ որոշ դէպքերում արգելւում է դրադուել մի քանի տեսակ աշխատանքների վ. օր. երբ աշխատելու պայմանները հակառողջապահիկ են: Մանկահասակ և պատանի բանուորների տարիքի սահմանը

հաստատուն է, այլ տարբեր է զանազան երկիրներում: Գերմանիայում մանկական հասակը տեւում է մինչև 13 կամ 14 տարեկան ժամանակը՝ երբ երեխան ազատուում է պարտաւորապէս զըրոց յաճախելուց. պատանի հասակը տեւում է 14-ից մինչև 18 տարեկան ժամանակը:

բ) Թոյլատրելի աշխատանքի տեղում թեալ սահմանափակում զբաղմունքի տէր անձերի համար: Այս օրէնքները կարգի տակ են դնում այն, ինչ մենք մտքսիմալ (ամենպէրկարարատե) աշխատանքի օր ենք առում, կիրակնօրեայ հանգիստ, գիշերային աշխատանք:

գ) Գործարանական օրէնստուութիւնը պարունակում է իր մէջ նաև երկրորդ և կարգ որոշումներ, որոնք վերաբերում են մահաւանդ գործարանական առողջապահութեան և գործարանական բարոյականութեան, նաև աշխատելու միջոցին տիրող պարտաւորիչ կարգ ու կանոնին: Այդ օրէնստուութիւնը վերաբերում է վերջապէս աշխատավարձի վճարման ձևին ու եղանակին: Այս տեսակ որոշումների շարքին է պատկանում նաև այսպէս կոչուած Truck—արգելումը, այսինքն՝ բանուորին ցանկացած իրով, օրինակ սեփական գործարանի արտադրութիւններով, փոխանակ փողով, վարձատրելու արգելումը: Կապիտալիզմի սկզբնական շրջանում պատահում էր, որ բանուորների շարաթական աշխատավարձը ոչ թէ փողով էին վճարում, այլ օրինակ մի հովանոցով կամ նման իրով. բանուորն էլ ստիպուած պիտի լինէր այդ իրը շարձարուելով շուկայում

ծախել և փող դարձնել:

Գործարանական օրէնստուութեան անհրաժեշտութիւնը ճանաչուած է այժմ համարեա բոլոր շրջաններում: Վիճելի է համարուած միայն այն, թէ որչափ ընդարձակել պէտք է այդ օրէնստուութիւնը: Բայց և այնպէս արժէ լսել և հերքել այն պատճառարանութիւնները, որոնք մեր օրերում իսկ երբեմն-երբեմն արուած են գործարանական օրէնստուութեան դէմ, երբ հարց է յարուցուած ընդարձակելու այդ օրէնստուութիւնը այս կամ այն ուղղութեամբ:

Հետեւալներն են գործարանական օրէնստուութեան դէմ յարուցուած գլխաւոր պատճառարանութիւնները.

1) Գործարանական օրէնստուութիւնը իբր թէ դիպչում է բանուորի անհատական ազատութեան: Սակայն այս պատճառարանութիւնը ջրուած է հենց նրանով, որ նա առաջ չէ բերուած ամենին բանուորներին կողմից, որոնց անհատական ազատութեան իբր թէ դիպչում են, այլ ընդհակառակը բոլորովին ուրիշ, այնպիսի շրջաններից, որոնք ազատ օրէնքների դէմ են լինում սովորաբար: Բաւական է հենց այն, որ իրենք բանուորներն են պահանջում գործարանական օրէնստուութիւն:

2) Ասում են՝ գործարանական օրէնստուութիւնը վայրենացնում է ամբոխը, որովհետեւ երեխաներին ընդհանրապէս, մեծերին նաև կիրակի օրերը աշխատել արգելելով, և կամ ամենօրեայ աշխատանքի տեղութիւնը սահմանափակել-

լով, բանուորները ունենում են չափազանց շատ ազատ ժամանակ, որից նրանք լուսապէս օգտուել կարող չեն: Այս պատճառարանութեան դէմ նախ հարկաւոր է որոշակի շեշտել, թէ գործարանական աշխատանքը ինքը ընդհանրապէս առած մխիթարութիւն չէ բանուորի համար, որովհետև նա անկենդան է դարձրուած և անբարոյականացրած, չունենալով կրթիչ ազդեցութիւն: Սակայն արդար դատելով՝ այս պատճառարանութեան մէջ կայ որոշ ճշմարտութիւն: Յիրաւի գոյութիւն ունէ այն վտանգը, թէ բանուորը իր ազատ ժամանակը կարող է ոչ թէ օգտակար կերպով գործադրել, այլ անօգուտ: Սակայն հարկաւոր է միայն հոգ տանել, որ այդպէս չլինի: Պէտք է բանուորներին հրահարաւորութիւն տալ օրինակ յարմարաւոր բնակարաններ ունենալու, որ նրանք իրենց ազատ ժամանակը ժարգավայել շրջապատում անցկացնեն. պէտք է նրանց հնարաւորութիւն տալ հեշտ ճանապարհով գիտական և գեղարուեստական երկեր ձեռք բերելու և իրենց կրթութեան մասին հոգալու. պէտք է յարմարութիւն տալ բանուորին իր ժամանակը փոխանակ գարեջրատներում՝ բարեկերթ և ազնուացնող ընկերական շրջաններում անցկացնելու:

3. Գործարանական օրէնստուութիւնը, ասում են, նուազեցնում է բանուորներին սեփական վաստակը: Օրինակ՝ երեխաներին աշխատել արգելելով պակասում է նրանց ծնողների եկամուտը: Այս պատճառարանութիւնն էլ որոշ աստիճան ճիշտ է: Բայց և այնպէս նա հիմ-

նաւոր չէ: Առաջին՝ երեխաներին աշխատել արգելելով կարող է չափահասներին վարձը բարձրանալ. եթէ նոյնիսկ այսպէս էլ չլինէր՝ հիմք չկայ թոյլատրելու երեխաներին գործարանական աշխատանքով զբաղուելու: Աւելի լաւ է այքատներին խնամատարութիւն հիմնել, քան թոյլ տալ որ ամբողջ հասարակութեան ամենաթանկագին բանը՝ մատաղ սերնդի կենսական ոյժերը սպանիչ կերպով ջլատուեն: Աշխատանքի տեղութեան սահմանափակումն էլ կարող է վնասակար չլինել: Օրինակ գործարանատէրերը ստիպուած կլինեն աւելի թուով բանուորներ պահել. իսկ այս նշանակում է աշխատանքի շուկան յօգուտ բանուորների կերպաւորել: Բանուորական կազմակերպութիւնները միացած ոյժերով կարող են դիմադրել ամեն տեսակ որոշումների, որոնք ձգտում են, աշխատանքի տեղութիւնը իջեցրած գէպքում, նուազեցնել նաև աշխատավարձը: Վերջապէս յաճախ պատահում է, որ աշխատանքի տեղութեան կրճատումով բարձրանում է բանուորի աշխատելու կարողութիւնը: Այսպիսով ուրեմն բանուորը աւելի քիչ ժամեր աշխատելով կարող է վաստակել այնչափ փող, որչափ առաջ՝ աւելի երկար աշխատելով:

4. Գործարանական օրէնստուութեան դէմ յարուցած ամենահիմնաւոր պատճառարանութիւնը վերջապէս համարւում է այն, թէ նա երկրի արդիւնագործութիւնը արտասահմանեան մրցման դէմ անընդունակ է գարձնում: Սրա դէմ նախ այն պիտի ասել,

որ արդարացի անվստահութեամբ պիտի վերաբերուել այդ պատճառարանութեան, քանի որ նա դարձեալ միայն գործարանատէրերի կողմից է յարուցւում: Իսկ սրանք նմանում են առակի մէջ յիշուող այն հովուին, որ անգագար անհիմն կերպով օգնութիւն էր ազադակում՝ թէ գայլը գալիս է. և թէ ինչպէս վերջը նրա ազադակին այլևս ոչոք ուշադրութիւն չդարձրեց, երբ յիրաւի գալը եկաւ ու նրան էլ պատասպատառ արաւ: Այսպէս նաև՝ շահագրգռուած գործատէրերը ողբ ու ազադակ են բարձրացրել ամեն անգամ, երբ խօսք է եղել նրանց շահագործական ազատութիւնը թէկուզ ամենափոքր և չնչին չափով սահմանափակելու: Երբ խօսք կար փոքրիկ երեխաներին անգլիական բամբակի գործարաններից դուրս բերելու՝ ազադակ բարձրացրին, թէ այդ արգիւնագործութիւնը կորուստի կմատնուի, եթէ նա զրկուի թէկուզ ամենափոքր երեխաների աշխատանքից: Դեռ երկու տարի առաջ էլ նոյն ազադակը բարձրացրին իտալական մետաքսագործները, երբ խօսք կար գոնէ միայն իննը տարեկանից փոքր երեխաներին գործարաններում աշխատել արգելելու:

Բայց և այնպէս պատճառարանութիւնը ինքը այնչափ կարևոր նշանակութիւն ունէ, որ արժէ նրան անկողմնապահ քննութեան ենթարկել: Արգիւնագործութիւնը յիրաւի կկործանուէր այն դէպքում, երբ գործարանական օրէնստուութեան շնորհիւ արգիւնահանութիւնը տեխնիկապէս անկարելի դարձնուէր: Այսպիսի հետևանք կա-

րող է տուաջանալ սակաւ դէպքերում. օրինակ՝ գիշերային կամ կիրակնօրեայ աշխատանքի արգելումով այն գործարաններում, որտեղ անհրաժեշտ է մշտապէս վառած պահել գործարանի հնոցը: Այսպիսի դէպքերում կարելի է որոշումներ կայացնել, որ բանուորների մէկ մասը, փոխ առ փոխ, միշտ զբաղուէ աշխատանքով: Իսկ եթէ որեւէ արդիւնագործութիւն պարզապէս վտանգ է սպառնում բանուորների կեանքին՝ այդ դէպքում պէտք է վերջ տալ նրան անյապաղ:

Սակայն գործարանական օրէնստուութեան դէմ յարուցուող զլլաւոր պատճառաբանութիւնը այն է, թէ երեխաների և կանանց էփանապին աշխատանքի, նաև աշխատանքի տևողութեան սահմանափակումով արդիւնահանական ծախքերը (Produktionskosten) այնչափ շատանում են, որ արդիւնագործութիւնը անընդունակ է դառնում մրցման ու այդպիսով էլ անտեսապէս անհնարին է դառնում նրա գոյութիւնը:

Այս սովորական պատճառաբանութեան դէմ պէտք է առարկել հետեւեալը.

ա) Այս պատճառաբանութիւնը կարող է վերաբերել միայն այն տեսակ արդիւնագործութեան, որի դէմ յիշուի գոյութիւն ունէ արատասահմաննան մրցում: Սակայն շատ տեսակի արդիւնագործութիւն մենաշնորհ է դարձած—ինչպէս են սնունդի միջոցները, լուսավառութեան, հաղորդակցութեան միջոցները, և այլն:

բ) Ծիծաղելի է այն պատճառաբանութիւնը, թէ գործարանական օրէնստուութեան շնորհիւ

մեծանում են արդիւնահանական ծախքերը: Հաշուած է, որ 13 կամ 14 տարեկանից փոքր երեխաներին աշխատել արգելելով՝ Գերմանիայի գործարանական օրէնստուութիւնը (1891 թ.) ամենատարածուած մանուֆակտուրային արդիւնագործութեան պատճառել է միմիայն $\frac{1}{2}$ (մէկ երրորդ) տոկոս յաւելում ընդհանուր աշխատավարձի:

գ) Վերջապէս փորձը ցոյց է տուել, որ աշխատանքի տևողութեան կրճատումը մեծ մասամբ ունեցել է այն հետեանքը, որ աւելացել է բանուորների աշխատելու եռանդը: Նոյնիսկ եթէ գործարանական օրէնստուութեան շնորհիւ բարձրանում է աշխատանքի գինը՝ այդ չէ նշանակում յամենայն դէպս, թէ արդիւնագործութիւնը դրանով կորստի է մատնուում. չէ՞ որ մեծ մասամբ այդ թանգ գները ի վերջոյ սպառողներն են վճարում: Ընդհանրապէս կարելի է հաստատ տեսլ, որ գործարանական իւրյացի օրէնստուութեան, մանաւանդ աշխատանքի տևողութեան կրճատման, շնորհիւ շատ յաճախ արդիւնահանութեան տեխնիկան կատարելագործուում է: Այս պատճառով էլ աւելի հիմք ունենք գործարանական օրէնստուութիւնը օրհնարեր գործ համարելու: Միայն թէ նրան պիտի յարմարեցնել տեղի և ժամանակի պայմաններին:

II. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ
ՕՐԷՆԱՍԻՌՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՄԱՐ.

Այն հոգսը, թէ գործարանական օրէնստու-
թեան շնորհիւ մի երկրի արդիւնագործութիւնը
տրտասահմանեան մրցման դէմ անընդունակ կը-
դառնայ, այդ հոգսը հէնց սկզբից զարթեցրել է
նաև այն միտքը, թէ միջազգային համաձայնու-
թիւններով հնարաւոր է գործարանական օրէն-
ստութիւնը հաւասարապէս տարածել բոլոր գոր-
ծարանական երկիրներում: Այս ուղղութեամբ ըս-
կըսել են աշխատել անցեալ դարի քառասնական
թուականներից եւրոպական այլևայլ երկիրնե-
րում: Սակայն այս բոլոր ջանքերը մնում էին
ապարդիւն: Անյաջող ելք ունեցաւ նաև Վիլհելմ
II-ի 1890 թ. փետրուարի 4-ի շրջաբերական-
հրակէրով Բերլինում մարտի 15-ից մինչև 29-ը
տեղի ունեցած գործարանական օրէնստուութեան
միջազգային համագումարը:

Միջազգային գործարանական օրէնստու-
թեան գաղափարը նոր համակրութիւն ձեռք բե-
րեց 1897-ին: Այս թուականին Յիւրիխում և
Բրիւսսելում տեղի ունեցած միջազգային գործա-
րանական օրէնստուութեան երկու կոնգրեսները
փոխադարձ համաձայնութեամբ վճիռ կայացրին՝
նախ ջանք թափել հիմնելու միջազգային գործա-
րանական օրէնստուութեան մի բիւրոյ, որի գործը
պէտք է լինէր միջազգային գործարանական օրէն-
ստութեան գաղափարը տարածել:

Յիւրիխի կոնգրեսը ծրագրել էր հիմնել
տալ մի պաշտօնական, զանազան երկիրների կա-
ռավարութիւնների կողմից հաստատուած, բանու-
րական բիւրոյ. իսկ Բրիւսսելի կոնգրեսը ծրա-
գրել էր նախ հիմնել մասնաւոր նախաձեռ-
նութեամբ մի միջազգային հաստատու-
թիւն և ապա թէ պետութիւններին յարել տալ
այդ հաստատութեան: Վերջին ծրագիրը աւելի
յաջողութիւն գտաւ: Այդ միտքը շուտով իրականու-
թիւն ստացաւ նաև նրանով, որ 1900-ին Պարիզի
համաշխարհային ցուցահանդէսի ժամանակ հիմ-
նւեց «Association internationale pour la legislation du
Travail»-ը: Այս «գործարանական օրէնստուութեան
միջազգային դաշնակցութիւնը» սեկցիաներ ունէ
բոլոր գործարանական երկիրներում: Գերմանական
սեկցիան, ինչպէս յիշուեց, կոչւում է «սոցիալա-
կան ռեֆորմի ընկերակցութիւն»: Այդ դաշնակ-
ցութիւնն է այն կենտրոնական վայրը, որտեղ
քննւում և իրագործւում են սոցիալական ռեֆոր-
մի գաղափարները՝ ժամանակակից մտքով: 1901
թուականին հիմնուեց նաև մի «աշխատանքի մի-
ջազգային բիւրոյ», որի նիստը գտնւում է Բազե-
լում: Սրա առաջին կոնգրեսը տեղի ունեցաւ Կեոլ-
նում երկու տարի առաջ:

III. ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ՕՐԷՆՍՏԻՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅՑ ՎԻՃԱԿԸ.

Գործարանական օրէնստուութիւնը ծագում է առել զանազան երկիրներում զանազան թուականներէ, այս կերպ.

- 1813 Բելգիա
- 1813 Ֆրանսիա
- 1815 Շուեյցարական կանտոններ
- 1839 Պրուսական թագաւորութիւն
- 1840 Բաւարական թագաւորութիւն
- 1840 Բաղենի մեծ-հերցոգութիւն
- 1843 Իտալիա (Լոմբարդիա, Վենետիկ)
- 1845 Ռուսիա
- 1849 Սարսոնական թագաւորութիւն
- 1860 Նորուեգիա
- 1861 Վիւրտեմբերգի թագաւորութիւն
- 1864 Շուեդիա
- 1873 Դանեմարքիա.

Այժմ զանազան երկիրներում գոյութիւն ունեցող գործարանական օրէնստուութիւնները հիմնովին տարբերում են իրարից: Ամենից աւելի առաջագէմ են այս մտքով՝ Շուեյցարիան, Աւստրիան, Մեծ-Բրիտանիան: Գերմանիան, որ մի առժամանակ յետ էր մնացել, հաւասարուեց առաջագէմ երկրներին 1891-ի յուլիսի 1-ի գործարանական օրէնքով և նրանից յետոյ՝ հրատարակուած մի շարք օրէնքներով (մանաւանդ 1902-ի մարտին հրատարակուած «երեսմաների պաշտպանութեան օրէնքով»):

Գերմանական պետութեան մէջ ներկայումս գոյութիւն ունեցող գոր-

ծարանական օրէնստուութեան գլխաւոր որոշումներն են հետեւեալները.

1. Ընդհանուր բնաւորութիւն ունեցող որոշումներ: Բոլոր ձեռնարկութիւնները պարտաւորապէս պիտի ունենան իրենց կանոնները, որոնք և կպցրուած պիտի լինեն բոլորի համար տեսանելի տեղում: Գործատէրերը պարտաւորուած են իրենց ձեռնարկութիւնը այնպէս յարմարեցնել և կարգի տակ դնել, որ բանուորները ապահով լինեն վտանգից: Արգելուած է, չհաշուած որոշ բացառութիւններ, վարձատրել բանուորներին աղբանքով (Trucksystem): Պարտաւորիչ է կիրակնօրեայ հանգիստը, բացառութեամբ մի քանի անհրաժեշտ արդիւնագործական ճիւղերի. այս վերջին դէպքում էլ տրուած է բանուորներին առանձին վարձ: Եւ ուրիշ նման որոշումներ:

2. Մանկահասակ, պատանի և կին բանուորներին վերաբերող յատուկ օրէնստուութիւն: Գործարաններում և նման ձեռնարկութիւններում արգելուած է խրատօրէն աշխատել 13 տարեկանից փոքր երեխաներին և դպրոց յաճախող (ուրեմն և համարեա բոլոր) ու 14 տարեկանից փոքր երեխաներին. իսկ դպրոց չյաճախող երեխաները կարող են աշխատել ամենաշատը 6 ժամ. 14—16 տարեկան պատանիները՝ 10 ժամ. սակայն բոլորին էլ հաւասարապէս արգելուած է աշխատել զիշերները (երեկոյեան 8¹/₂-ից մինչև առաւօտեան 5¹/₂ ժամը, նաև կիրակի և տօն օրերը: Հանգստի մի-

լողներ.—6 ժամ աշխատողներին համար՝ 1 ժամ հանգիստ, աւելի երկար աշխատողներին՝ 2 ժամ: Կին բանուորներին արգելոււմ է աշխատել զիշերները, իսկ ցերեկները ոչ աւելի քան 11 ժամ: Ծննդկան կին բանուորներին 4—6 շաբաթ ժամանակով արգելոււմ է աշխատել:

1903 թ. մարտի 30-ին հրատարակուած (իսկ գործադրութեան մէջ մտած 1904-ի յունուարի 1-ից) «երեխաների պաշտպանութեան օրէնքի» պրինցիպիական մեծ նշանակութիւնը կայանում է մանաւանդ նրանում, որ նա առաջին անգամ իր պաշտպանութեան տակ է առնում երեխաներին՝ ընդդէմ սըրանց շահագործուելուն՝ իրենց սեփական ծնողների կամ նրանց փոխարինող անձերի ձեռքով: Մի քանի տեսակ աշխատանքներով (օրինակ ամեն տեսակ շինարարական աշխատանք, ներկարարութիւն և այլն) երեխաներին զրազուել արգելող օրէնքը նոր է հրատարակուած: Այնպիսի ձեռնարկութիւններում, որտեղ առաջ արգելուած էր աշխատել օտար երեխաների, այժմ արգելոււմ է աշխատել նաև գործատէրերի՝ իրենց երեխաներին: Այնպիսի ձեռնարկութիւններում, որոնց համար գոյութիւն չունէ երեխաներին աշխատել արգելող օրէնք, չեն կարող 12 տարեկանից փոքր օտար երեխաներ աշխատել, իսկ սեփական երեխաներ՝ 10 տարեկանից փոքր: Ամեն տեղ էլ արգելոււմ է աշխատանքը երեկոյեան ժամը 8-ից մինչև առաւօտեան ժամը 8-ը օտար երեխաների համար 12 տարեկանից փոքր, սեփական երեխաներին՝ 10 տա-

րեկանից փոքր: Արգելոււմ է աշխատեցնել օտար երեխաների 3 ժամից աւելի օրական, իսկ դպրոցական արձակուրդերի ժամանակ՝ 4 ժամից աւելի:

Վերջապէս հարկաւոր է մատնանիշ անել նաև այն հանգամանքի վրայ, որ երկու տեսակ գործարանական օրէնստուութիւն կայ—թղթի վրայ և իրականութեան մէջ:

Գործարանական օրէնստուութիւնը իրագործել կարելի է միայն անկախ, վստահելի և գործին լաւատեղեակ անձերի միջոցով: Այսպիսով ուրեմն զգալի է դառնում վերահսկիչ մարմինների, այսպէս կոչուած գործարանական ինսպեկտորների անհրաժեշտութիւնը: Գործարանական ինսպեկտորների պաշտօնը ծագել է Անգլիայում: Այսպիսի պաշտօն վարողների թիւը այնտեղ հասնում է այժմ 138-ի, որոնց թւում կան մի քանի կանայք. Պրուսիայում այդպիսի պաշտօնեաների թիւը հասնում է 220-ի, իսկ ամբողջ Գերմանիայում 300-ից աւելի:

ՎՅՅԵՐՈՐԴ ԳՂՈՒՆ

ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

I. ԸՆԳՆԱՆՈՒՐ ՀԱՅՆԱՅՔ.

Օրավարձով ապրող ժամանակակից բանուորի առանձնայատուկ զրութիւնը այն է, որ նա ամեն օր համարեա միայն այնչափ է աշխատում,

որչափ որ անհրաժեշտ է նրա օրական ապրուստը հայթայթելու համար: Այս դրութեան անխուսափելի հետևանքն էլ այն է, որ բանուորը թշուառ և նեղ դրութեան մէջ կընկնէ հենց այն բոլորէին, երբ նա ունէ պատճառով անընդունակ դառնայ վաստակ ունենալու: Այսպիսի դրութեան մէջ կընկնէ բանուորը այն ժամանակ, երբ նա օքինակ մի դժբախտ պատահարի շնորհիւ անհատապէս հնար չունենայ իր աշխատելու կարողութիւնից օգտուել: Օրինակ՝ կարող է պատահել, որ բանուորին դժբախտութիւն պատահէ, — աշխատելու միջոցին ենթարկուէ բուժելի կամ անբուժելի հիւանդութեան: Բանուորը, որոշ ժամանակ անցնելուց յետոյ, կդառնայ ինուալիք: Այսպիսի պատահարների շնորհիւ վտանգի է մատնուում ոչ միայն աշխատաւոր անհատի կեանքը, այլ նաև նրա վաստակով ապրող ընտանիքի անդամների կեանքը:

Քանի զեռ ժամանակակից սոցիալական քաղաքականութիւնը չ'կար՝ վաստակի անընդունակ բանուորները հնարաւորութիւն ունէին հետևեալ միջոցներով օժանդակութիւն գտնել:

1. Մասնաւոր ապահովագրութիւն, որ յիրաւի ոչ փոքր չափով գործադրուում էր կազմակերպուած բանուորների օժանդակիչ կասսաների միջոցով: Սակայն այս մասնաւոր օժանդակութեան սահմանները շատ նեղ էին, նրանից օգտուում էին միմիայն բանուորները, այն էլ համարեա միայն հիւանդութեան դէպքում: 1880-ական թուականների սկզբին, երբ Գերմա-

նիայում մուտք գործեց սոցիալական քաղաքականութիւնը, ապահովագրուած էին միայն 1-ից մինչև 1¹/₂ միլիոն բանուորներ, այն էլ համարեա միայն հիւանդութեան դէմ: Հարկաւոր է այս միայն համեմատութեան մէջ դնել ստորև նշանակած ստիպողական ապահովագրութեան ունեցած ծաւալի հետ՝ տեսնելու համար թէ որչափ չնչին է եղել մասնաւոր ապահովագրութիւնը: Այժմ Գերմանիայում համարեա 10 միլիոն բանուորներ ապահովագրուած են հիւանդութեան դէմ, համարեա 20 միլիոն՝ արդիւնագործական աշխատանքում առաջացող դժբախտ պատահարների դէմ և համարեա 13 միլիոն էլ՝ ինուալիքութեան և ծերութեան դէմ:

2. Աշխատելու անընդունակ դարձած դէպքում ապրուստի միջոց ճարելու երկրորդ հնարաւորութիւնն էլ առաջները այն էր, որ արդիւնագործական պատահարների ժամանակ մասնաւոր իրաւական ճանապարհով բանուորը կարող էր գործատիր ոջից վնասի հատուցուում պահանջել: Այս դէպքում ուրեմն գործատէրը պարտաւորուում էր դժբախտացած բանուորին նիւթական հատուցում տալ, եթէ հաստատուէր, թէ դժբախտութեան համար բանուորը յանցաւոր չէ եղել: Սակայն փորձը ցոյց տուեց, որ այս միջոցն էլ անբաւարար է. բանուորները մեծ մասով ձեռք չէին ընկնում կարևոր հատուցումը:

3. Աղքատների խնամատարութիւն, որ իսկապէս անպատուաբեր դրութեան մէջ էր

դնում խեղճ, դժբախտացած և վաստակի անընդունակ բանուորին:

Մեծ յառաջադիմութիւն էր, որ պետութիւնը իր հեղինակաւոր ձայնով միջոցներ ձեռք առաւ վաստակի անընդունակ բանուորների խնամատարութեան համար: Պետութիւնը այս նպատակին հասաւ կամ նրանով, որ ստիպեց գործատէրերին հատուցում տալ վաստակի անընդունակ դարձած բանուորներին (հատուցում արգիւնագործական պատահարների ժամանակ) և կամ նրանով, որ նա ներմուծեց պետական պարտաւորիչ ապահովագրութիւնը (Zwangsversicherung): Գերմանական պետութիւնն էր, որ առաջին անգամ պարտաւորիչ ապահովագրութեան միջոցով ապրուստի միջոցներ հայթայթեց վաստակի անընդունակ բանուորների համար: Այս միջոցները աղքատներին տրուող ողորմութեան բնաւորութիւն չունեն բնաւ: Գերմանական պետութեան ձեռքով իրականացրած և դարագլուխ կազմող բանուորական ապահովագրութեան օրէնստուութիւնը ստեղծեց կազմակերպութեան այնպիսի եղանակներ, որոնք ապագայում օրինակ կարող են դառնալ բոլոր միւս ինդուստրիական երկիրների համար և արդէն իսկ մասամբ դարձել են (Աւստրիա):

II. ԲԱՆՈՒՈՐՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ:

Գերմանիայում գոյութիւն ունեն հետեւեալ կազմակերպութիւնները, որոնք ծառայում են վերոյիշեալ նպատակին:

Ա. Ապահովագրութիւն հիւանդութեան դէմ:
Բ. Ապահովագրութիւն դժբախտ պատահարների դէմ:
Գ. Ապահովագրութիւն ինուալիզութեան և ծերութեան դէմ:

Ա. Ապահովագրութիւն հիւանդութեան դէմ: Բանուորների պետական պարտաւորիչ-ապահովագրութիւնը հիւանդութեան դէմ Գերմանիայում ներմուծուեց 1883 թուականի յունիսի 15-ի օրէնքով: Այս օրէնքին աւելացաւ նախ 1885 ի մայիսի 28-ի օրէնքը, որ վերաբերում է հոգային և անտառային աշխատանքներով զբաղուող մարդկանց ապահովագրութեանը՝ հիւանդութեան և դժբախտ պատահարների դէմ: Մրան հետեւից ապա 1892-ի ապրիլի 10-ի օրէնքը, որով և հին օրէնքին տրուեց նոր ըմբռնում և նոր աւնուն՝ «Հիւանդների ապահովագրութեան օրէնք» (Krankenversicherungsgesetz): 1892-ի ըմբռնումը այսօր էլ կազմում է օրէնքի հիմքը, չնայելով որ նա որոշ փոփոխութեան է ենթարկուել 1903-ի մայիսի 25-ի նոր օրէնքով (գօրութիւն ստացած 1904-ի յունուարի 1-ից): Այժմ գոյութիւն ունեցող օրէնքը պարունակւում է հետեւեալ կէտերը:

1. Ապահովագրուող անձերի շքը-

Ջանը: Պարտաւորիչ ապահովագրութեան օրէնքին ենթակայ են:

ա) Այն անձերը, որոնք ոռճկով կամ աշխատավարձով զբաղուած են մետաղահանքերում, աղահանքերում, ձուլարաններում, երկաթուղային, նաւագնացութեան, նաւահանգստի աշխատանոցներում, նաւագործարաններում և շինարարական ձեռնարկութիւններում:

բ) Առևտրական գործում զբաղուողներ, արհեստանոցներում և ուրիշ արդիւնագործական ձեռնարկութիւններում զբաղուողներ:

գ) Փաստաբանների, նոտարիոսների մօտ և դատաստանական ծառայութեան մէջ, հիւանդանոցների կասսաներում, պրոֆեսսիոնալ-միութիւններում և ապահովագրական հաստատութիւններում ծառայողներ:

դ) Այնպիսի ձեռնարկութիւններում զբաղուողներ, որտեղ մշտապէս գործադրուած են շոգեկաթսայ կամ ձեռքով շարժուող մեքենաներ:

ե) Պոստային և հեռագրական բոլոր վարչութիւններում, նմանապէս նաւատորմի և ցամաքային զօրքի տնտեսական մասը կառավարող բաժանմունքներում ծառայողներ:

Բացառութիւն կազմում են նրանք, որոնց զբաղմունքը տեղում է մէկ շաբաթից պակաս, դեպատան գործակատարներ և աշկերտներ, նաւատորմի զինուորներ և վերջապէս արդիւնագործական այնպիսի պաշտօնեաներ, վերակացուներ, և այլն, որոնց տարեկան վաստակը 2000 մարկից աւելի է: Պետական օրէնստութեան միջոցով կա-

րելի է պարտաւորիչ ապահովագրութեան ենթարկել նմանապէս հողային և անտառային աշխատանքներով զբաղուող բանուորներին. նաև՝ պետական կանցլերի կարգադրութեամբ՝ կայսերութեան և պետական ծառայութեան մէջ գտնուող այն ժարդկանց, որոնք դեռ ևս ապահովագրուած չեն, նաև՝ արհեստանոցներում զբաղուողներ:

2. Ապահովագրական կազմակերպութիւններ: Հիւանդների ապահովագրութիւնը հիմնուած է այն սկզբունքի վրայ, թէ՛ ապահովագրութեան ենթակայ անձերին պէտք է բաժանել ըստ կասսաների, որոնք և սահմանուում են ըստ զբաղմունքների:

ա) Հիւանդները տեղական կասսաները հանդիսանում են իբրև սովորական ձե հիւանդների ապահովագրութեան: Հիւանդների տեղական կասսայ պէտք է հիմնել ըստ օրէնքի այնպիսի արդիւնագործական ձեռնարկութիւններում, որտեղ ապահովագրուող անձերի թիւը ամենաքիչը 100-ի է հասնում: Արդիւնագործական մի քանի ճիւղեր կարող են միանալ և այդ նպատակով մի ընդհանուր տեղական կասսայ հիմնել միայն այն դէպքում, երբ առանձին առանձին ճիւղերում զբաղուող անձերի թիւը 100-ից պակաս է:

բ) Արդիւնագործական կամ գործարանական կասսաներ հիւանդներին համար: Քանի որ հիւանդների ապահովագրութեան օրէնքը պարտաւորիչ է դարձնում լոկ ապահովագրութիւնը որևէ շրջանի համար և չէ

պարտաւորեցնում ապահովագրութեանը ինչպէս կամ այն կասսայի անդամ գրուել, ուստի և պետական ապահովագրող կազմակերպութիւնների հետ միաժամանակ կարող են գոյութիւն ունենալ և գործել նաև մասնաւոր կազմակերպութիւններ, եթէ միայն սրանք կատարեն օրէնքի տրամադրած պահանջները: Ունէ արդիւնագործութեան մէջ հիւանդների կասսայ հիմնելու իրաւունք ունեն միայն այն գործատէրերը, որոնց մօտ աշխատում են առնուազն 50 բանուորներ:

դ) Շինարարական աշխատանքներով զբաղուող հիւանդ բանուորներին կասսաներ, որոնք հիմնուել կարող են խոշոր շինարարական գործատէրերի կողմից:

ը) Համբարական հիւանդներին կասսաներ, այսինքն այնպիսի յատուկ կասսաներ, որոնք հիմնուում են համբարութիւնների կողմից՝ իրենց բարգաճների և աշկերտների համար:

ե) Հանքագործական կասսաներ, որոնք հիմնուել և գործել կարող են լեռնային օրէնքների համաձայն:

Պետական կազմակերպութիւնների միջոցով հիմնուած կասսաների հետ միասին շարունակում են իրենց գոյութիւնը պահպանել նաև մասնաւոր նպաստամատոյց կասսաները. որչափ որ նրանք համապատասխան են օրէնքի պահանջներին: Վերջապէս այն անձերի համար, որոնք ոչ պետական և ոչ էլ նրան համապա-

տասխան կասսաների անդամ են գրուած, նրանց համար գոյութիւն ունէ համայնքի ապահովագրութիւնը: Այս դէպքում ապահովագրութեան ենթակայ անձերը կազմակերպուած են ոչ թէ կասսաներում, այլ ապահովագրում են ուղղակի համայնքի կողմից, որին և նրանք վճարում են իրենց տուրքերը կասսայի համար:

3. Ապահովագրութեան արդիւնքները:

ա) Ձրի բժշկական օգնութիւն, նաև դեղեր՝ հիւանդութեան սկզբից սկսած 26 շաբաթ շարունակաբար:

բ) Հիւանդներին տրուած է զբամական նըպաստ, սկսած հիւանդութեան երրորդ օրից: Հիւանդները ստանում են իրենց աշխատավարձի 50⁰/₀-ը: Որոշ դէպքերում հիւանդներին տրուող փողի փոխարէն կարելի է հիւանդին խնամել ունէ հիւանդանոցում:

գ) Նպաստ ծննդկան կանանց՝ վեց շաբաթ շարունակաբար, սկսած ազատուելու օրից:

դ) Թաղման փողը՝ օրավարձի 20-ից մինչև 40-ապատիկ չափով:

4. Եկամտի աղբիւրներ: Կասսայի անդամները վճարում են որոշ անդամավճար, նայած թէ անդամը ինչ տեսակի արդիւնագործութեան մէջ է զբաղուած: Անդամավճարի ²/₃-ը վճարում է բանուորը, իսկ ¹/₃-ը գործատէրը:

5. Ս տ ա տ ի

ա) Չանագան կասսաների և

Հիւանդների համայնական ապահովագրութիւն		Հիւանդների տեղական կասսաներ		Հիւանդների գործարանական կասսաներ		Հիւանդների կասսաներ շինարարական գործ.	
Կասսաներ	Անդամների տարեկան միջին թիւը	Կասսաներ	Անդամների տարեկան միջին թիւը	Կասսաներ	Անդամների տարեկան միջին թիւը	Կասսաներ	Անդամների տարեկան միջին թիւը
8457	1465124	4677	4550235	7563	2496743	64	15791

բ) Հիւանդների կասսաների

Քանակ կամ ընդհ. գումար.	Քանակ կամ ընդհ. գումար.		Հիւանդների համայնական ապահովագր.	Հիւանդների տեղական ապահովագր.
	Ցուցական	Հիւանդների համայնական ապահովագր.		
Անդամների տարեկան միջին թ.	1901	1 465 124	4 550 235	
Հիւանդութեան դէպքեր՝ վաստակազրկութեան հետեանքով . .	1901	365 885	17 16, 704	
Հիւանդութեան օրեր	1901	6 598 105	32 888 307	
		մարկ	մարկ	
Սովորական եկամուտներ . . .	1901	13 087 859	87 754 061	
Նպաստներ	1901	1239 710.9	82 570 111	
Սովորական ծախքեր	1901	13 532 987	85 340 403	
Թուաքը աւելի է ելբից	1901	70 666	6 9517 582	

ս տ ի կ ա յ:

Նրանց անդամների թիւը.

Հիւանդների կասսաներ համքարութիւնների մէջ		Արձանագր. նպաստամատոյց կասսաներ		Գերմ. առ. պետութիւնների նպաստ. կասսաներ		Հիւանդների բոլոր կասսաները միասին	
Կասսաներ	Անդամների տարեկան միջին թիւը	Կասսաներ	Անդամների տարեկան միջին թիւը	Կասսաներ	Անդամների տարեկան միջին թիւը	Կասսաներ ընդհ. թիւը	Միջին թիւ
636	203809	1439	864978	228	45062	23064	22584
						9641742	426, 9

ցոյց տուած արդիւնքները.

Հիւանդների կասսաներ գործարանների	Հիւանդների կասսաներ շինար. գործ.	Հիւանդների կասսաներ համքարութ. մէջ	Արձանագր. նպաստամատոյց կասսաներ		Հիւանդների կասսաները ընդհանրապէս
			Նպաստամատոյց կասսաներ	Հիւանդների կասսաները ընդհանրապէս	
2 496 743	15 791	203 809	864 978	45 062	9 641 742
1 110 690	9 554	72 559	328 062	13 568	3 617 022
19 228 341	146 052	306 927	6 248 981	285 775	66 652 488
	մարկ	մարկ	մարկ	մարկ	մարկ
60 068 581	369 058	3778833	17 849 075	781 167	183 688 628
54 800 611	349 211	3590859	16 972 669	672 703	171 353 270
56 756 644	384 052	3730655	17 600 158	794 300	178 039 195
71 917 355	285 932	2847154	16 526 105	1896 101	163 013 163

Բ. Ապահո ագրուլիւն գ ժբախտ պատահարն երի գէմ, որ մտցրուած է 1884-ի յուլիսի 6-ի օրէնքով և ձեւափոխութեան ենթարկուած 1900-ի յունիսի 30-ի օրէնքով: Այս տեսակ ապահովագրութեան մէջ մտնում են այն անձերը, որոնք ենթարկուել են գ ժբախտ պատահարներին՝ հետեւեալ տեսակի գործերում:

1. Արդիւնագործական ճիւղեր
2. Երկրագործական և անտառաբուծական աշխատանքներում:
3. Զինարարական գործերում.
- 4) Ծովային աշխատանքներում.

Սրան աւելանում է և գ ժբախտ պատահարների ենթակայ բանտարկեալներին ապահովագրող օրէնքը.

1. Դ ժբախտ պատահարն երի գէմ «ապահովագրուող» անձերի շրջանը.

ա) Երկրագործական և անտառաբուծական աշխատանքով զբաղուող բոլոր բանուորները:

բ) Շինարարական աշխատանքով զբաղուող բոլոր բանուորները:

գ) Ծովային և նման աշխատանք կատարող բոլոր բանուորները:

դ) Արդիւնագործական բանուորներից նրանք, որոնք աշխատում են 10 բանուորից աւելի ըզբաղեցնող ձեռնարկութիւններում, կամ այնպիսի աշխատավայրերում, որտեղ գործադրում է շոգեկաթսայ և ձեռքով կամ կենդանու ոյժով շարժուող մեքենայ: Ապանակ արդիւնագործական այն-

պիսի պաշտօնեաներ, որոնց տարեկան եկամուտը 3000 մարկից աւելի չէ:

2. Արդիւնքները: Ձեռնարկութեան մէջ գ ժբախտ պատահարի ենթարկուած ամեն մի աշխատաւոր իրաւունք ունէ հատուցում պահանջելու՝ հետեւեալ կերպով.

ա) Ձրի բժշկական օգնութիւն, դեղեր և ուրիշ բժշկական միջոցներ:

բ) Եթէ աշխատաւորը գ ժբախտ պատահարի շնորհիւ անընդունակ է դառնում փող վաստակելու՝ այդպիսին իրաւունք ունէ դրամական նպաստ ևս պահանջելու, սկսած գ ժբախտ պատահարի 14-րդ շաբաթից: Եթէ աշխատաւորը ըստ ամենայնի անընդունակ է դառնում վաստակի՝ նա իրաւունք ունէ պահանջելու 66²/₃₀ իր տարեկան եկամուտի (լիակատար հասոյթ). իսկ եթէ նա մասամբ միայն անընդունակ է դարձած վաստակի՝ ստանում է լիակատար հասոյթի միայն մէկ մասը, — նայած վաստեալի աշխատելու անկարողութեան չափին:

գ) Թաղման ծախք՝ տարեկան վաստակի 15-րդ մասը և ամենաքիչը 50 մարկ:

դ) ⁴ արբերական հասոյթ սպանուածի ժաւանգներին (20⁰/₀ տարեկան վաստակի՝ այրիի համար, 20⁰/₀ իւրաքանչիւր զուակի համար 15-տար. փոքր, սակայն ընդամենը ոչ աւելի քան 60⁰/₀): Այս հասոյթը հաշոււմ են համաձայն վաստեալ աշխատաւորի վերջին տարուայ ընթացքում ունեցած տարեկան եկամուտի այն ձեռնարկութեան մէջ, որտեղ նա ենթարկուել է գ ժբախտութեան: Սակայն, 1500 մարկից աւելի եկամուտ ունեցող-

ները ստանում են միմիայն նրա մէկ երրորդ մասը իբրև հասոյթ:

3. Միջոցներ հայթայթող կազմակերպութիւն: Այս ծախսերը ծածկելու համար անհրաժեշտ համարուած միջոցները տրւում են բացառապէս գործատէրերից, որոնք և այս նպատակի համար խմբերի են բաժանւում, նայած իրենց արդիւնագործութեան տեսակին:

4. Ս տ ա տ ի ս տ ի կ ա յ .

ա) Ապահովագրուածներ և վատուածներ 1892 թ. մինչև 1901 թ.

Պարտաւորիչ ապահովագրութեան ենթակայ արդիւնագործութիւններու վատուածներ	Մարտուածներ		Վնասուածներ		Ֆոյրը վատուածներին թիւը որոնց մասին հաշուետուութեան տեղեկութիւն է տրուած		
	Հատուցում պահանջելու տեղի ունեցողներու անհատներ		Մյուսներու անհատներ				
	1901 թ. առաջ եղած վիճակը	1901 թ. վնասուածները և վնասուածները	Մյուսներու անհատներ	Մյուսներու անհատներ			
Ապահովագրուած	18 866 712	536 485	117 336	1 446	8 501	17 321	476 260
անձեր	18 246 013	388 622	98 023	1 139	7 981	16 004	407 522
	17 605 190	288 282	86 403	1 547	7 101	13 953	351 789
	18 191 747	198 114	69 619	1 784	6 361	12 296	282 982
	18 014 280	123 439	55 654	2 664	5 911	11 835	236 265

դ տ կ տ ռ ս տ փ

բ) Պատահարների դեմ եղած ապահովագր. ընդհ. ծախքերը 1892-ից մինչև 1901 թ.

Պատահարները	Ընդամենը	Այդ բնագծանուր ծախքերից՝				1901 թ. հաշուետարուայ վերջում եղած ֆոնդը					
		Վնասուածներին հատուցում		Ծախքեր		Պահեստի ֆոնդերում մտցրած գումարներ		2	ն	ւ	ծ
		Պատահարների հետագօտուվեան համար	Միջորդ դատարանների համար	Պատահարների առաջը առնելու համար	Ընդհանուր վարչական կարիքն. համար	Պահեստի ֆոնդերում մտցրած գումարներ	հ				
1901	125 217,4	98 555,9	3 007,4	1 187,2	1 505,3	9 735,2	11 226,4	151 849,2			
1898	84 215,7	71 108,7	2 272,2	979,0	1 213,3	8 158,6	483,9	137 324,6			
1896	73 389,5	57 151,4	1 929,1	877,8	1 029,3	7 401,3	4 997,6	134 492,1			
1894	64 083,0	44 281,7	1 426,8	679,7	661,5	6 673,0	10 361,0	114 117,9			
1892	52 760,7	32 340,2	1 035,1	534,3	464,4	5 646,9	12 739,8	85 946,7			

Գ. Ի ն ու ա լ ի դ ն ե ր ի և ծ ե ր ե ր ի ա պ ա հ ո վ ա գ ր ու թ ի լ ն, որ մտցրուած է 1889 թուականի յունիսի 22-ի օրէնքով ե զօրութիւն է ստացել 1891-ի յունուարի 1-ից սկսած. նա ձևափոխութեան է ենթարկուել 1899-ի յուլիսի 13-ի օրէնքով (զօրութիւն ստացած 1900-ի յուն. 1-ից):

1. Ապահովագրուող անձերի շրջանը: Ապահովագրութեան ենթակայ է ամեն ոք, որ լրացրել է իր 16 տարին և զբաղւում է աշխատավարձով, այսինքն.

ա) Առանց ի նկատի առնելու ոտճիկը և աշխատավարձը՝ բոլոր բանուորները, գործակատարները, քարգահները աշկերտները, ծառաները և նաւի վրայ աշխատողները:

բ) Տարեկան մինչև 2000 մարկ ստացող հետեւալ տեսակի աշխատուորներ. դանազան պրոֆեսիաների պաշտօնեաներ, վերակացուներ և տեխնիկներ, մասնաւոր քարտուղարներ, նաժիշտներ, մասնաւոր ուսուցիչներ և դաստիարակներ երկու սեռի՝ չհաշուելով ուսանողներին և ըզհանրապէս նրանց, որոնք իրենց գիտական կրթութեան ընթացքում են դասեր տալիս:

Կ ա մ ա լ ո ր կ ե ր պ ո վ ա պ հ ո վ ա գ ր ու ե լ կ ա ր ո ղ է ամեն ոք, որ չէ լրացրել իր 40 տարին և հետևալ դասերից մէկն ու մէկին է պատկանում:

ա) Վերը 1. բ. կէտի տակ յիշուած անձերը, եթէ նրանց ոտճիկը աւելի է քան 2000, բայց ոչ աւելի քան 3000 մարկ:

բ) Այնպիսի ինքնուրոյն արդիւնահանողներ և գործատէրեր, որոնք մշտապէս աշխատեցնում են

ապահովագրութեան ենթակայ ոչ աւելի քան երկու բանուորներ, նմանապէս տնայնագործութեամբ զբաղուողները:

գ) Այն մարդիկ, որոնք ենթակայ չեն պարտաւրիչ ապահովագրութեան՝ 1. որովհետեւ նրանք միայն հացափորի են աշխատում, և 2. որովհետեւ նրանց ժամանակաւոր զբաղմունքը չէ համարուում ենթակայ պարտաւորիչ ապահովագրութեան:

2. Ապահովագրող կազմակերպութիւններն են տեղական ապահովագրական հիմարկուծիւնները, որոնց հետ գործում են նաև 9 «Թոյլատրած» կասսային հիմնարկութիւններ (հանրային բանուորների և երկաթուղային ծառայողների համար):

3. Ապահովագրութեան արդիւնքները:

ա) Միայն այն ապահովագրուած անձերը, որոնք առ միշտ անընդունակ ե գառնում վաստակի, առանց նայելու իրենց տարիքին, ստանում են ինուալիդային հասոյթ (Invalidenrente): Մրա համար անհրաժեշտ պայման է, որ հասոյթ ստացողը վաստակի անընդունակ գառնալուց առնուազն 200 շաբաթ առաջ ապահովագրուած ե վճարած լինի իր անդամավճարը:

բ) Այն ապահովագրուած անձերը, որոնք լրացրել են 70 տարին, ստանում են ծերութեան հասոյթ (Altersrente), եթէ նրանք ընդհանուր առմամբ 1891 թուականից սկսած մինչև իրենց 70 տարին լրանալը տարեկան առնուազն 40 շաբաթ տուել են ապահովագրութեան վճարը:

գ) Ամուսնացող կանայք, այրիներ և ապահովագրուած տղամարդու 15 տարեկանից փոքր երեխաներ (կամ հայր չունեցող և ապահովագրուած մօր երեխաներ), — եթէ մեռնողին իր մահից առաջ տրուած չէ եղել հասոյթ — յետ են ստանում վճարի կէսը, եթէ առնուազն 200 շաբաթ անդամավճար է տրուել: Հասոյթի քանակը կախուած է այն հանգամանքից, թէ ապահովագրուողը որչափ ժամանակ է տուել անդամավճար և ապահովագրութեան սր կարգի կասսային է պատկանել:

4. Միջոցներ ի հայթայթում:

ա) Պետական գանձարանից տարեկան 50 մարկ իւրաքանչիւր ապահովագրուած և հասոյթից օգտուող անձի համար:

բ) Ապահովագրութեան մասնակցողների, այսինքն գործատէրերի և գործաւորների վճարներ, վճարի կէս մասը տալիս է գործատէրը, կէսը գործաւորը ինքը: Վճարի քանակը որոշուած է համաձայն աշխատավարձի: Այս վճարը հատուցանում է ամեն շաբաթ մարկաներով, որոնք և կպցնում են դրանց համար սահմանուած թերթիկների վրայ: Հետեւեալ հինգ դասերի են բաժանուած ապահովագրուողները:

Դաս	Շաբաթական վճար մարկաներով	Ապահովագրուող անձի տարեկան վատակը
I	14 ֆեննիգ	մինչև 350 մարկ
II	20 »	351-ից մինչև 550 մ.
III	24 »	551-ից մինչև 850 մ.
IV	30 »	851-ից մինչև 1150 մ.
V	36 »	1151 մարկից աւելի:

5. Ս տ ա տ ի ս տ ի կ ա յ: 1891 թ. յունուարի 1-ից սկսած մինչև 1902-ի վերջը 31 ապահովագրական հաստատութիւններում և 9 մասնաւոր կասսաներում ընդամենը վճարուել են հասոյթներ այսպէս. ինուալիդների հասոյթներ 877,001 հոգու, հիւանդների հասոյթներ՝ 23,043 հոգու, ծերերի հասոյթներ 402,856 հոգու. ընդամենը 1,302,900 հոգու:

1902 թուականին վճարուել են ապահովագրուածներին ընդամենը 111, 2 միլլիոն մարկ, — այսպէս. 78,9 միլլիոն մարկ ինուալիդներին, 1, 8, միլլիոն մարկ հիւանդներին, 23,5 միլլիոն մարկ ծերերին և 7 միլլիոն մարկ միանուագ նպաստ: Գերմանական կայսրութեան գանձարանից տրուած յաւելեալ նպաստը 1901 թուականին հասնում էր 33,870,735 մարկի:

Ծերերի ապահովագրութեան ներմուծումից սկսած մինչև 1901 թւականի վերջը բժշկական օգնութեան համար տրուած է 23,5 միլլիոն մարկ: Նաո քաղաքներ սեփական հիւանդանոցներ կամ բուժարաններ ունեն:

ՆՕՐԾԵՐՈՐԴ ԳՂՈՒԵ

ԱՇԽԱՏԱԶՈՒՐԿ ԲԱՆՈՒՈՐՆԵՐԻ ՀՈԳԱՏԱ-
ՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԸ

I. ԱՇԽԱՏԱԶՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԸ.

Մենք գիտենք արդէն, որ ամեն անգամ,

երբ բանուորը այս կամ այն պատճառով չէ աշխատում, նա այլևս փող չէ վաստակում. հետևապէս՝ նա զուրկ է մնում ապրուստի միջոցներից:

Բանուորը կարող է զրկուել վաստակից այն դէպքում, երբ նրա մարմնական և հոգեկան ոյժերը ներում են աշխատել, բայց նա չէ կամենում աշխատել: Այսպէս է լինում ամեն անգամ, երբ բանուորները գործադուլ են սարքում: Սակայն բանուորը զրկուել կարող է ապրուստի միջոցներից նաև այն դէպքում, երբ նա աշխատել ցանկանում է, բայց որոշ անհատական պատճառներով, որոնց մասին նախընթաց գլխում խօսք եղաւ, աշխատել չէ կարող: Բայց կայ նաև մի երբորդ դէպք, երբ բանուորը զրկուում է եկամուտի միջոցներից. այս լինում է՝ երբ բանուորը ցանկութիւն ունէ աշխատելու, նրա ոյժերն էլ ներում են աշխատել, բայց և այնպէս նա աշխատանք չէ գտնում, պատճառ որ նրա աշխատանքի պահանջը չկայ: Այս դէպքը կոչում ենք «սոցիալական աշխատազրկութիւն»:

Բանուորի աշխատազուրկ մնալը ընթացակից երևոյթ է մեր տնտեսական կեանքի: Ստատիստիկական տեղեկութիւնները ցոյց են տուել, որ ժամանակակից ազգային տնտեսութեան մէջ երեւան եկող աշխատազրկութիւնը նախ համարեա միայն որոշ տեսակի աշխատանքներում է յայտնուում, այն ինչ ուրիշ աշխատանքներում նոյն իսկ կարիք է զգացւում բանուորների: Այսպէս օրի-նակ՝ կարիք է զգացւում հողագործական և կիւն բանուորների: Իսկ աշխատազուրկ դարձող աշխա-

տաւորները շարքին են պատկանում առևտրական գործակատարները և վարձու բանուորները—գործարանական պրոլետարիատը: Սակայն այս սպարէզներում էլ աշխատազրկութիւնը չէ ստանում այնչափ սոսկալի չափեր, ինչպէս որ սովորաբար կարծում են: Տնտեսական ամենածանր տագնապների ժամանակով անգամ հազիւ թէ գործարանական բանուորների 10⁰/₀-ը անգործ մնայ, այնինչ տնտեսական լաւ վիճակում՝ հազիւ 1⁰/₀ և ևեղի քիչ: Այսպէս օրինակ անգլիական տրեդ—իւնիոնների կազմած ստատիստիկական ցոյց է տալիս, որ 15 տարուայ ընթացքում—1888-ից մինչև 1902 թ.—աշխատազուրկ մնացած բանուորների ամենամեծ տոկոսը (7,5⁰/₀) տուել է 1893 թուականը, այն ինչ 1899-ին աշխատազուրկ բանուորների թիւը 2,4⁰/₀-է եղել: Գերմանիայում 1895 թուականին, համաձայն ստատիստիկայի, ամառը աշխատազուրկ են մնացել գործարանական բանուորներից 1,53⁰/₀, իսկ ձմեռը 4,18⁰/₀: Աշխատազուրկների թիւը ձմեռ ժամանակ բարձրանում է նրանով, որ այդ ամիսներին շինարարական ձեռնարկութիւններում աշխատազուրկների թիւը շատ խոշոր է լինում—12,6⁰/₀: 1895 թուի ղեկտեմբերի 2-ին աշխատազուրկ մնացած 479,000 մարդկանցից 145,000 հոգի շինարարական աշխատաւորներ էին, բացի զբանից 158,000-ը հողագործական աշխատաւորներ:

Զնայած որ այսպիսով աշխատազուրկ մնացող բանուորների թիւը ևեղի փոքր է լինում, քան առաջ կարծում էին, բայց և այնպէս կարև-

ւոր է սոցիալական քաղաքականութեան միջոցներով կռուել այդ չարիքի դէմ: Այս դէպքում սոցիալական քաղաքականութեան կողմնակից մարդու համար երեք տեսակ գործ կայ անելու:

1. Առձեռն եղած աշխատանքի առաջարկը և պահանջը յարմարեցնել և համակշռել:
2. Աշխատազուրկ բանուորների համար աշխատանք գտնել:
3. Աշխատազուրկներին օժանդակութիւն ցոյց տալ:

II. ԱՇԽԱՏԱՅՈՅՑ ՄԱՐՄԻՆՆԵՐ.

Բազմաթիւ դէպքեր են լինում, երբ բանուորը աշխատազուրկ է մնում այն պատճառով միայն, որ նա բաւականաչափ տեղեկութիւն չէ ունենում, թէ աշխատանքի շուկայում որչափ պահանջ կայ, կամ որտեղ է զգացւում աշխատաւոր ոյժի կարիք: Մենք կարող ենք այս տեսակ սոցիալական աշխատազրկութիւնը կոչել սուբեկտիւ աշխատազրկութիւն: Այս բանի դէմ կռուելու համար հարկաւոր է կազմակերպել աշխատացոյց մարմիններ: (Arbeitsnachweis)

Նա, ով որոնում է աշխատանք, կարող է ներկայումս հետևեալ միջոցներին դիմել:

1. Անձնական հարցուփորձ: Այս դէպքում աշխատանք որոնողը դռնէ դուռ, գրասենեակից գրասենեակ, գործարանից գործարան է շրջում և հարցնում, թէ արդեօք նրա համար տեղ չկա:

Այս, պարզ է, աշխատանք որոնելու ամենա-
 նախնական ձևն է, որի հետ կապուած են ծանր
 հետեւանքներ՝ աշխատանք որոնողի համար: Սա իր
 հարցութեան ժամանակ յաճախ դառն հիասթա-
 փութեան է մատնուած, ստիպուած է իր անձը ստո-
 րացնել:

2. Մի փոքր աւելի բարձր աստիճան է հա-
 մարուում լրագրական յայտարարութիւն-
 ների միջոցով աշխատանք որոնելը: Այս մի-
 ջոցն էլ ունէ իր անյարմարութիւնները. նախ՝ որ
 նա թանգ է նստում յայտարարողի վրայ, այդ
 պատճառով էլ սովորական բանուորի համար հա-
 մարեա թէ անմատչելի է. բացի գրանից գործա-
 տէրերը այդ ճանապարհով սիրով չեն վարձում
 բանուորներ, որովհետև յայտարարութիւնից գործա-
 տէրը տեղեկանալ չէ կարող, թէ որչափ արգա-
 սաւոր կլինի այդպէս վարձուող բանուորի աշխա-
 տանքը:

3. Մասնաւոր միջնորդութիւն: Սա
 որոշ դեր է կատարում մի քանի տեսակ աշխա-
 տաւորների համար գործ ձարելում, ինչպէս են
 հիւրանոցի սպասաւորների, ծառաների, նաւի վրայ
 ծառայողների համար, և այլն: Սրա ամենաթոյլ
 կողմը նմանապէս այն է, որ նա թանգ արժէ,
 ուստի և նրանից օգտուելը անհնար բան է դառ-
 նում բանուորների մեծ մասի համար:

Աշխատանքի միջնորդութեան ստորև յիշած
 ձևերը այն ընդհանուր կողմն ունեն, որ նրանք
 բոլորն էլ հիմնուած են աշխատանքի ցուցման կաղ-
 մակերպութեան վրայ և չեն հանդիսանում իբրև

եկամուտի միջոցներ մասնաւոր անհատների հա-
 մար: Սրանց թուին են պատկանում.

4. Բարեգործական աշխատացոյց
 մարմիններ, այսինքն երբ աշխատանք որոնող-
 ների համար միջնորդ են հանդիսանում հանրօ-
 գուտ և բարեգործական խմբակցութիւններ և ըն-
 կերութիւններ:

Սակայն սրանց գործունէութեան շրջանակը
 համեմատաբար նեղ է:

5) Աշխատանքի ցուցումն շահա-
 գրգռուած կողմերի միջոցով, որ ձեռ-
 նարկում է և կաղմակերպում համաքարութիւնների,
 որոշ տեսակի արդիւնագործական գործատէրերի
 կողմից և վերջապէս շատ բանուորական ընկե-
 րութիւնների մէջ՝ բանուորների կողմից: Համեմա-
 տաբար աւելի յաջողութիւն է ունեցել վերջին
 տեսակ միջնորդութիւնը:

Սակայն յիշած բոլոր տեսակներն էլ նպա-
 տակայարմար չեն և չեն կարող լիակատար ծառա-
 յութիւն ցոյց տալ գործին: Այս հանգամանքը ցոյց
 է տալիս, որ աշխատանքի շուկան կաղմակերպե-
 լու ամենակատարեալ ձևը հանդիսանում է այն
 տեսակը, որին և պատկանում է ապագան, այս-
 ինքն՝

6. Համարակալան աշխատացոյց
 կաղմակերպութիւնը: Այս տեսակ միջնոր-
 դութիւն Գերմանիայում գայութիւն ունէ 130-ից
 մինչև 140 տեղ, որոնց մեծագոյն մասը սակայն լոկ
 թղթի վրայ: Թէ ինչ նշանակութիւն կարող է ու-
 նենալ այս տեսակ միջնորդութիւնը, այդ երևում

է նրանից, որ օրինակ Միւնխեն քաղաքի կազմակերպութիւնը աշխատանք է դառել 1896-ին 25,000 հոգու համար, իսկ 1901 թուականին արդէն 45,100 հոգու համար:

Եթէ ցանկալի է, որ ապագայում աշխատանքի հասարակական կազմակերպութիւնը աւելի զարգանայ ամենտեղ, հարկաւոր է ըստ էութեան ի նկատի առնել հետեւեալ հայեցակէտը կազմակերպելու ժամանակ:—

Այդ միջնորդութիւնը պէտք է դառնայ քաղաքային համայնքի վարչութեան ֆունկցիաներից մէկը, քանի որ քաղաքի համայնքը ինքն է, որ ամենից աւելի շահագրգռուած է աշխատանքի շուկան յաջողապէս կարգաւորելու: Նա է նմանապէս ամենից աւելի յարմարը ստանձնելու այս գործը: Հասարակական աշխատացոյց կազմակերպութեան հետ միաժամանակ կարող են շարունակել իրենց գոյութիւնը նաև միւս տեսակները. սակայն սրանք ևս պէտք է կապ ունենան քաղաքային միջնորդութեան հետ: Գոյութիւն ունեցող բոլոր աշխատացոյց մարմինները պէտք է կենտրոնանան նախ ըստ քաղաքների, ապա ըստ նահանգների և վերջը ըստ ամբողջ պետութեան: Աշխատանքի միջնորդութիւնը պէտք է կրէ ըստ ամենայնի հասարակական բնաւորութիւն. այնպէս, որ դէպի նա վրաստանութիւն տածեն թէ գործաւորները և թէ գործատէրերը: Այս կազմակերպութիւնը պէտք է կենտրոնանայ որոշ պաշտօնեաների ձեռքում, որոնց հետ միաժամանակ և պիտի գործէ մի խոր-

հըրդատու մարմին՝ բազկացած գործաւորների և գործատէրերի ներկայացուցիչներին:

Աշխատանքի միջնորդութիւնը պէտք է տեղի ունենայ համարեա ձրի կամ բոլորովին ձրի:

III. ՄԻՋՈՑՆԵՐ ՕՐԲԵԿՏԻ ԱՇԵԱՏԱԶՐԿՈՒԹԵԱՆ ԵՒ ՆՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԻ ԴԷՄ.

Լաւ կազմակերպուած աշխատանքի ցուցումը այն ժամանակ միայն իդէալական կլինէր, երբ պարբերաբար ամեն մի բացուող տեղի համար մի բանուոր նշանակուէր: Աւելի գործ կատարել ինարկէ անկարող են աշխատացոյց մարմինները: Եւ եթէ բոլոր ազատ տեղերը բռնուելուց յետոյ դարձեալ պարագ պանուորներ մնան՝ այդ դրութեան դէմ արդէն ոչինչ անել չէ կարող ամենալաւ կազմակերպուած աշխատացոյց մարմինը անգամ: Այս դէպքում իշխող աշխատազրկութեանը մենք տալիս ենք օրեկ տիւ աշխատազրկութիւն անունը: Հարց է. ի՞նչ միջոցներ ձեռք առնել կարող է սրա դէմ ժամանակակից սոցիալական քաղաքականութիւնը:

Նախ: Ամեն ջանք պէտք է թափել, որ չըսկսուէ անգործութիւն: Այս կարելի է օրինակ մասամբ նրանով իրազործել, որ որոշ տեսակի աշխատանքներ, եթէ անհրաժեշտ չեն, փոխանակ աշխատանքի առատ ժամանակ կատարել տալու, կարելի է թողնել այնպիսի ժամանակի, երբ աշխատանք քիչ կայ բանուորների համար: Այս ճանապարհով էլ որոշ հաստատուն ծրագրով առաջ-

նորդուել կարող են անտարակոյս միայն հասարակական մարմինները իրենց գործերը կատարել տալու ղէպքում: Անտարակոյս մասամբ կառնուէր անգործութեան առաջը, եթէ պետական և քաղաքային իշխանութիւնները այս տեսակէտով առաջնորդուէին: Երբ աշխատազրկութիւնը արդէն անխուսափելի է դառնում, այն ժամանակ պէտք է դիմել նաև ուրիշ միջոցների՝ կարօտութեան առաջը առնելու համար: Համայնքը կարող է ձեռնարկել այնպիսի շինութիւնների և այլ աշխատանքների, որոնց նա գլուխ բերել է ուզում միմիայն եղած կարօտութեան առաջը գէթ մասամբ առնելու համար՝ պարապ բանուորներին գործ հայթայթելով: Այս ուղղութեամբ էլ արդէն որոշ չափով գործ է կատարուած:

Երբ արդէն ուրիշ միջոց չէ մնում կարօտութեան առաջը առնելու համար, պէտք է անհրաժեշտաբար աշխատազուրկ բանուորներին հասարակական միջոցներից նպաստ հայթայթել: Այս ղէպքում էլ պէտք է առաջնորդուել հետևեալ հայեցակէտերով:

1. Որ նպաստը տրուէ նախ կանանց և երեսնաների:

2. Որ նպաստը տրուէ բնական մթերքներով, ինչպէս են՝ քարածուխ, ուտեստ, զգեստ և այլն:

3. Որ նպաստը չունենայ աղքատների խնամատարութեան անպատուարեր հետևանքները:

Մակայն և այնպէս այս տեսակ միջոցները չեն կարող համարուել յարատև և հաստատուն: Հարկաւոր է խորհրդակցութեան առարկայ

դարձնել այն, թէ արդեօք ննարաւոր չէ՞ աշխատազուրկ բանուորներին էլ այնպիսի օժանդակութիւն ցոյց տալ, ինչպէս հիւանդներին, ինուսլիդներին, ծերերին և դժբախտ պատահարների ենթարկուող անձերին ցոյց տրուող օժանդակութիւնն է: Ուրիշ խօսքով՝ հարցը վերաբերում է այն բանին, թէ արդեօք ապահովագրութեան վերաբերմամբ գոյութիւն ունեցող պետական օրէնքներին կարելի չէ՞ աւելացնել աշխատազուրկ բանուորների ապահովագրութիւնը:

Այս ուղղութեամբ մինչև այժմ արուած քայլերը շատ համեստ են և հանդիսանում են իրրև սոսկ փորձեր:

Աշխատազուրկ բանուորների ապահովագրութիւնը ամենից աւելի առաջադէմ քայլեր է արել պրոֆեսսիոնալ ընկերութիւնների շրջանակում: Անգլիական տրեդ-իւնիոնները ապահովագրում են իրենց անդամներից մօտ $\frac{3}{4}$ միլիոնին աշխատազրկութեան դէմ, այն ինչ գերմանական պրոֆեսսիոնալ ընկերութիւնները վերջին տարիներում՝ մօտ $\frac{1}{4}$ միլիոն անդամ: Բանուորական միութիւնների հետ զուգընթացաբար բանուորներին աշխատազրկութեան դէմ ապահովագրում են այժմ նաև մի քանի քաղաքային համայնքներ — Բերն, Սէն-Գալլէն, Կէօլն և Գինստ:

ՈՒԹԵՐՈՐԿ ԳՒՈՒՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԵԱՅՔ.

1. Սոցիալական ռեֆորմի պաշտպանները և ներկայացուցիչները սկզբից հենց շեշտել են այն, թէ հասարակութիւնը անհրաժեշտաբար նախ հոգս պիտի քաշէ սոցիալական դրութիւնը պարզել՝ ստատիստիկական տեղեկութիւններով, հարցումներով և նման միջոցներով. քանի որ իրականութեան մասին կազմուող պարզ հասկացողութիւնը առաջին պայմանն է արգասաւոր ռեֆորմներին: Սոցիալական ռեֆորմի համակրողները շեշտել են միաժամանակ և այն, թէ այս նպատակով յատուկ մարմիններ պէտք է կազմակերպել, որոնց և բացառապէս պէտք է յանձնարարել սոցիալական աշխարհի ուսումնասիրութիւնը: Աշխատանքի ստատիստիկական պէտք է լինի, Գէորգ Փոն Մայր-ի ասելով, «ոչ թէ սոցիալական քաղաքականութեան պատահական աղախինը, այլ նրա մշտական ղեկավարը և խորհրդատուն»:

2. Ամենալայն գործարանական օրէնստուութիւնը, ամենալաւ պարտաւորիչ-ապահովագրութիւնը, ամենագօրեղ բանուորական պրոֆեսսիոնալ շարժումը անգամ, որոնք կոչուած են աշխատաւորների կեանքի պայմանները բարեփոխելու, բնաւ օգտակար չեն լինի, եթէ աշխատաւորը վստահ չէ, թէ իր

ունեցած պահանջը գործատիրոջից յերաւի գոհացում կստանայ: Այս պատճառով էլ ժամանակակից սոցիալական ռեֆորմի ծրագրի կէտերից մէկն էլ այն է որ հիմնուեն յատուկ դատարաններ, որոնց գործը պիտի լինի աշխատանքի պայմանների վերաբերմամբ ծագած վէճերի ժամանակ վճիռներ կայացնել: Այդ դատարաններում էլ դատավարութիւնը կենտրոնացած պիտի լինի գլխաւորապէս գործատէրերի և բանուորների ներկայացուցիչների ձեռքում:

3. Համարեա ժամանակակից բոլոր պետութիւնների մէջ գոյութիւն ունեն մնայուն մարմիններ գործատէրերի շահերի պաշտպանութեան համար. սրանք են՝ առևտրական, արդիւնագործական և գիւղատնտեսական խորհուրդներ: Պարզ արդարութիւնը իսկ պահանջում է, որ նրանց հետ միաժամանակ գոյութիւն ունենան նաև այնպիսի մարմիններ, որոնք իշխանութեան առաջ բանուորական շահերի ներկայացուցիչը լինեն:

4. Նպատակայարմար է նմանապէս, որ իշխանութիւնը հիմնէ այնպիսի կազմակերպութիւններ, որոնք գործատէրերի և բանուորների միջև ծագած վէճերի ժամանակ որպէս միջնորդ դատաբաններ ծառայեն. նրանք կարող են հրաւիրուել վիճող կողմերի քանկութեամբ (կամաւոր միջնորդ դատարաններ) կամ իշխանութեան կարգադրութեամբ (պարտաւորիչ միջնորդ դատարաններ):

II. ԻՐԱԻԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՆՁԻՆ-ԱՌԱՆՁԻՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՄ.

Եւրոպական երկիրներից շատերը արդէն որոշ չափով իրագործել են յիշած ծրագիրը, սակայն մեծ մասով իրարից բոլորովին տարբեր ձևերով. այնպէս որ տարբեր երկիրներում գոյութիւն ունեցող (կամ ծրագրած) հաստատութիւնները յաճախ չեն համապատասխանում իրար ոչանուամբ և ոչ էլ իրենց գործունէութեան շրջանակով:

Ա. Գ երմանիայում գոյութիւն ունեն.

1. «Յատուկ արդիւնագործական դատարաններ», ներմուծած 1890 թուականի յուլիսի 29-ի օրէնքով: Այսպիսի դատարաններ հիմնւում են մի համայնական շրջանի համար և բաղկացած են լինում մէկ նախագահից, աւելուազն մէկ փոխ-նախագահից—որոնք չեն պատկանում երկու կողմերից (գործատէրեր և գործաւորներ) և ոչ մէկին—նաև որոշ թուով դատաւորներից (առնուազն չորս), որոնց կէսը գործատէրերի դասակարգից են ընտրւում, իսկ միւս կէսը գործաւորների դասակարգից: Արդիւնագործական դատարանների գործն է «որոշումներ կայացնել մէկ կողմից՝ բանուորների և նրանց գործատէրերի մէջ ծագած գործարանական վէճերի ժամանակ, միւս կողմից էլ՝ միևնույն գործատիրոջ բանուորների մէջ ծագած վէճերի ժամանակ:

Օրէնքի 61-րդ յօդուածի համաձայն արդիւնագործական դատարանը կարող է «գործատէրերի և գործաւորների մէջ աշխատանքի պայման-

ներից ծագող վէճերի ժամանակ աշխատանքը շարունակելու կամ յանձն առնելու նպատակով» իբրև միջնորդ դատարան հրաւիրուել: Այս այն դէպքում, երբ երկու կողմերից էլ դրա համար ցանկութիւն արտայայտուէ եթէ շահագրգռուած գործաւորների և թէ գործատէրերի կողմից (եթէ վերջինների թիւը երեքից աւելի է):

Արդիւնագործական դատարանների թիւը Գերմանիայում հասնում է (1903 թուին) 313-ի (1900=300), որից 148-ը Պրուսիայում: Տեղի են ունեցել թուով 70,227 դատավարութիւններ գործատէրերի և գործաւորների մէջ ծագած իրաւարանական վէճերի պատճառով, իսկ 274-ը նոյն գործատիրոջ բանուորների մէջ:

2. Բանուորական ստատիստիկայի համար 1903-ի սկզբին հաստատուեց մի առանձին բաժանմունք կայսերական ստատիստիկական բւրոյին կից: Նրա նպատակն է.

ա) Ժողովել, կարգաւորել և պարբերաբար հրատարակել բանուորական վիճակագրութեան վերաբերող թուեր և այլ կարևոր տեղեկութիւններ:

բ) Չեռնարկել յատուկ ուսումնասիրութիւնների՝ գրաւոր և բանաւոր եղանակով, նաև տալ խորհուրդներ:

Կայսերական ստատիստիկական բւրոյին «օժանդակիչ» հանդիսանալու համար, բանուորական ստատիստիկայի սահմանում՝ սրանպատակները իրագործելու ժամանակ, կազմուել է բան-

ուորական ստատիստիկայի մի խորհուրդ, որ բաղկացած է մէկ նախագահից (որև նոյնն է կայսերական ստատիստիկական բիւրոյի նախագահը) և տասնուչորս անդամներից, որոնցից եօթին ընտրուած է դաշնակցական խորհուրդը (Bundesrath), իսկ մնացած եօթին՝ ռայխստագր:

Բ. Մեծ-Բրիտանիայում վերոյիշեալ հաստատութիւններից գոյութիւն ունէ միայն առևտրական միւնիստրութեան մէջ աշխատանքի դեպարտամենտ (բաժանմունք), որ էսպէս կենտրոնավայր է սոցիալական ստատիստիկայի: Աշխատանքի բաժանմունքը գոյութիւն ունէ 1886 թուականից և արդէն արել է մի շարք շատ գնահատելի հրատարակութիւններ բանուորական ստատիստիկայի վերաբերեալ: Նա հրատարակուած է նաև յատուկ օրգան՝ «Բանուորական թերթ» վերնագրով, որ օրինակ է հանդիսացել միւս երկիրների համար:

Գ. Ֆրանսիայում կան հետևեալ հաստատութիւնները.

1. Աշխատանքի բարձրագոյն խորհուրդ, որ կից է վաճառականութեան, արդիւնագործութեան և գաղութների միւնիստրութեան, և որին նախագահում է միւնիստրը ինքը: Խորհուրդը բաղկացած է 50 անդամներից: Դրանք ընտրուում են պատգամաւորների տան անդամներից և արդիւնագործողների, բանուորների, գործատէրերի և գործաւորների ընկերութիւնների շարքից, արդիւնագործական դատարանների ան-

դամների միջից և այլն,—բոլորն էլ տնտեսական և սոցիալական հարցերին լաւատեղեակ անձեր: Խորհուրդը կարող է միւնիստրի համաձայնութեամբ հարցումներ անել և բոլոր գործի տեղեակ մարդկանց խօսքին ուշադրութիւն դարձնել: Խորհուրդը հիմնուել է 1891-ի յունուարի 22-ի հրամանագրով:

2. Աշխատանքի բիւրոյ, որ հիմնուած է 1891-ի յուլիսի 21-ի օրէնքով և նոյն թուականի օգոստոսի 19-ի կարգադրութեամբ: Աշխատանքի բիւրոյի գործն է «հաւաքել աշխատանքի վերաբերեալ բոլոր տեղեկութիւնները, կարգի տակ դնել նրանց և հրատարակել: Այսպէս ուրեմն սահմանափակ «աշխատանքի դեպարտամենտ»-ին համապատասխան մի հաստատութիւն է և նրանք ման կազմուած է մի բաժանմունք վաճառականութեան միւնիստրութեան մէջ:

3. Արդիւնագործական դատարաններ, որոնք Եւրոպայում ամենահինն են իրենց տեսակում: Առաջինը բացուեց 1808 թուականի մարտի 18-ին Լիոնում, նպատակ ունենալով «ամեն օր գործարանատէրերի և բանուորների միջև ծագող մանր-մունք վէճերին խաղաղ ելք տալ՝ բազմաթիւ ճանապարհով» և կամ դատաւորի վճռին բեմիտ ճանապարհով» և կամ դատաւորի վճռին թողնել: 1901 թուականին Ֆրանսիայում գործում էին թուով 145 այդպիսի դատարաններ, իսկ 1900-ին 141-ը, որոնց վճռին ենթարկուել են 50,212 վէճեր: 21,456 վէճերի վերջ տրուեց հաշտութեան ճանապարհով:

4. Աշխատանքի խորհուրդներ,

մայրուած 1900-ի սեպտեմբերի 17-ի կարգա-
 գրութեամբ: Անդամներ ընտրուած են հաւասար
 չափով գործատէրերի և գործաւորների կազմա-
 կերպութիւններից: Նրանց գլխաւոր գործն է
 տեղային սոցիալական ստատիստիկայի մշակուածը:
 Նրանց գործն է նաև ցոյց տալ հասարակական
 իշխանութիւններին՝ աշխատազրկութեան դէմ կրո-
 ուելու և նրա առաջն առնելու միջոցներ, առաջարկ-
 ներ անել իրենց շրջանում գտնուող զանազան
 սոցիալ-վարչական հաստատութիւններին՝ դրա-
 մական նպաստներ բաժանելու գործում: Նրանք
 ամեն տարի տեղեկութիւն պիտի տան գործա-
 րանական օրէնստութեան կատարման մասին:
 Նրանք ունեն նաև միջնորդ-դատարանական
 ֆունկցիաներ:

5. Բանուորական բորսաներ: Սրանք
 հանդիսանում են իբրև կենտրոնավայրեր պրոֆես-
 սիոնալ-բանուորական շարժման, յատկապէս աշ-
 խատանքի ցուցման նպատակով: Սրանց տրուած
 է մասնական նպաստ քաղաքային համայնքների
 կողմից: Բարձր նշանակութիւն է ձեռք բերել
 Պարիզի բանուորական բորսան:

Դ. Իտալիան ընթացել է Ֆրանսիայի
 շաւղով և 1901-ին հիմնել է.

1. Աշխատանքի բիւրոյ, որ կազ-
 մուել է ըստ ամենայնի համապատասխան ֆրան-
 սիական «աշխատանքի բիւրոյին»: Նաև

2. Աշխատանքի բարձրագոյն խոր-
 հուրդ, որ համապատասխանում է ֆրանսիական

համանուն հաստատութեանը: Սրանց հետ գոյու-
 թիւն ունեն նաև

3. Արգիւնա գործական դատարան-
 ներ՝ միջնորդ-դատարանական ֆունկցիաներով,
 հիմնուած 1893-թուի յունիսի 15-ի օրէնքով:

4. Բանուորների խորհուրդներ,
 որոնք ծառայում են պրոֆեսսիոնալ բանուորա-
 կան շարժման համար իբրև շաղկապող և օժան-
 դակող հաստատութիւններ. սրանք նպաստ են
 ստանում համայնքների կողմից, նման են ֆրան-
 սիական բանուորական բորսաներին:

Ե. Աւստրիայում 1900-ից սկսած կան.

1. Աշխատանքի ստատիստիկական
 բիւրոյ՝ առևտրական միսիստրութեան մէջ:

2. Աշխատանքի խորհուրդ, նման
 գերմանականին:

3. Արգիւնա գործական դատարան-
 ներ (1869-ի մայիսի 14-ի օրէնքով), հետևողու-
 թեամբ ֆրանսիականին:

Զ. Շուեյցարիայի զանազան կանտոն-
 ներում կան.

1. Կիսապաշտօնական բանուորական
 սեկրետարիատներ, որոնցից ամենանշա-
 նաւորը Յիւրիխում է գտնուում:

2. Մի քանի կենտրոններում (ժընև, Նիւ-
 շատել, Բազել-քաղաք և ուրիշներ) գոյութիւն
 ունեն արգիւնա գործական դատարան-
 ներ միջնորդ-դատարանական ֆունկցիաներով:

Է. Բելգիայում կան.—

1. Աշխատանքի բիւրոյ.

2. Արդիւնագործական դատարաններ.

3. Աշխատանքի բորսաներ, ֆրանսիականին նման, որոնք 1902-ից սկսած կազմում են մի միութիւն:

Ը. Հոլլանդիայում մի քանի տարուց ի վեր (1897-ի մայիսի 2 օրէնքով) կայ մի շատ տարածուած սոցիալական կազմակերպութիւն, որ պարունակում է իր մէջ ստատիստիկական բիւրոյ, աշխատացոյց մարմիններ, գործարանատէրերի և գործաւորների ներկայացուցչութիւններ և միջնորդ դատարաններ:

ԻՆՆԵՐՈՐԿ ԳՂՈՒԽ

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՌԵՖՈՐՄ

I. ԸՆԳՀԱՆՈՒՐ ՀԱՅԵԱՅՔ.

«Բնակարանային հարցը», նեղ մտքով առած, իսկապէս չէ կազմում բանուորական հարցի մէկ մասը: Նա վերաբերում է նաև ազգաբնակչութեան ուրիշ, փոքր եկամուտ ունեցող խաւերին, — ինչպէս են մանր պաշտօնեաներ, բանուորներ և կապիտալիստական տնտեսութեան ճիւղերի ծառայողներ: Այս բոլորին վերաբերում է բնակարանային հարցը իսկապէս միայն այն դէպքում,

եթէ նրանք ապրում են մեծ քաղաքներում և գործարանական կենտրոններում՝ իրար վրայ թափուած:

Սակայն և այնպէս հարկաւոր է այստեղ շեշտել այն հանդամանքը, թէ որչափ մեծ նշանակութիւն ունէ բնակարանային պայմանների կարգաւորումը պրոլետարիատի համար: Եթէ բնակարանները վատ են և թանկ, ու հետզհետէ աւելի ևս թանգանում են, այդ դէպքում ոչինչ օգուտ բերել չեն կարող այն ռեֆորմները, որոնք հետևանք են գործարանական օրէնստուութեան. չէ որ մարդկային արժանապատուութեան վերածնունդը պրոլետարիատի մէջ, որի համար գործարանական օրէնստուութիւնը մանկաբարձուհու ծառայութիւն ունէ կատարելու, անհրաժեշտաբար կապուած է փոքրիշատէ անդորր բնատնական կեանքի հետ. իսկ այս էլ իր կողմից կախուած է փոքրիշատէ մարդավայել օթեանից: Այսպէս՝ աշխատավարձի բարձրանալով բանուորի դրութիւնը չէ կարող բարուժուել, քանի որ նա իր աւելի չափով վատակածը ստիպուած է անմիջապէս բնակարանի վարձ տալ:

Գործարանական բանուորի համար հիմնովին տարբեր նշանակութիւն ունէ բնակարանային հարցը, նայած թէ բանուորը որտեղ է աշխատանք զուտում: Գիւղում բնակարանի բանը հեշտ է: Այնտեղ առատ օդ և լոյս կայ բանուորի տրամադրութեան տակ. բնակարանն էլ շատ էժան է: Համեմատաբար մեծ չէ նաև փոքր քաղաքներում բնակարան ունենալու հոգսը: Իսկ մեծ քաղաքներում

արդէն զբուծիւնը ծանրանում է: Ուստի և վերջինովս պիտի զբաղուէ սոցիալական ռեֆորմը:

II. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐՅՈՒ ՄԵՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ.

Այս հարցով զբաղուած են շատ ժամանակից ի վեր թէորիտիկներ և պրակտիկներ, բայց նրանց թափած ջանքերը մինչև այսօր էլ որոշ արդիւնք չեն տուել:

1902—1903 թ. ձմեռուայ ընթացքում Բրեսլաւում գումարուած առաջադէմ սոցիալ-ռեֆորմականների ունեցած մի շարք ժողովներում քննութեան առարկայ դարձրին այդ հարցը, յանգելով հետեւեալ եզրակացութեանը.

Ա. Բնակարանային տագնապները պատճառները.

1. Ժամանակակից բոլոր մեծ քաղաքները ունեն բնակարանային անյարմարութիւններ, որոնք կարօտ են անհրաժեշտ բարեփոխութեան: Այս անյարմարութիւնները վերաբերում են մէկ կողմից բնակարաններ ռոպակութեան, որոնք, մանաւանդ քաղաքի հին մասերում, յաճախ գոհացում չեն տալիս մարմնական և բարոյական առողջութեան ամենահամեմատ պահանջներին անգամ. միւս կողմից էլ աչքի է ընկնում բնակարաններ թանգուծիւնը:

Բնակարանային քրոնիկական կարիքը հասնում է երբեմն սուր տագնապի, այնպէս որ եր-

բեմն պատահում է, որ մանաւանդ շատ երեխաների տէր պրոլետար ընտանիքներ ամենևին բնակարան չեն գտնում:

2. Ծղմարիա է նաև, որ բազմաթիւ դէպքերում տանտէրերը հնարաւորութիւն չունեն բնակարանի վարձը իջեցնելու, եթէ նրանք հաշուեն իրենց տան արժէքի տոկոսը, արած ծախքերը և որոշ վարձատրութիւն իրենց սեփական աշխատանքի համար: Այդպիսով բնակարանների չափազանց թանգ լինելը չէ բացատրում այն հիմունքով, թէ տանտէրերը վաշխառութիւն են անում, այլ նրանով, որ տները իրենք չափազանց մեծ գին ունեն:

3. Բնակարանների չափազանց թանգ լինելը հետեւանք է հետեւեալ պատճառների: Նախ, որ մեծ քաղաքներում բանուորներին տրուած է համեմատաբար մեծ աշխատավարձ. երկրորդ՝ տանտէրը ծանրաբեռնուած է ամեն տեսակ հարկերով: Ասկայն կան աւելի հիմնական պատճառներ, որոնք և կազմում են իսկապէս բնակարանային հարցը: Սրանք են.

ա) Տուն շինելու համար յարմարաւոր համարուող գետնի տէրը ձգտում է մեծ վաստակ ունենալ այդ գետնի վաճառելիս: Այսպիսի վաստակները արուեստական սպեկուլացիայի միջոցով աւելի ևս մեծանում են և կենտրոնանում որոշ թիւ մարդկանց ձեռքում, այդպիսով էլ ձեռնարկութիւնը ստանում է մոնոպոլիայի (մենաշընորհ) կերպարանք:

բ) Տներ կառուցանելու համար փող տը-

ւող մարդիկ էլ ուզում են իրենց վաստակը ունենալ: Այստեղ իշխում է շինարարական անասող կազմակերպութիւն: Այսպէս՝ բնակարաններ կառուցանում են ոչ թէ փողատէր, լուրջ ձեռնարկողներ, այլ մեծ մասով մանր և ոչ-հարուստ փողատէրեր: Այս մարդիկ ընկնում են միանգամայն իրենց փող տուողներին ազդեցութեան տակ և ստիպուած են լինում տունը գրաւ դնել, ծանրաբեռնել ծախքերով: Իսկ այս ծոխքերը աւելի մեծ են լինում, քան բնակարանների իսկական վարձը:

գ) Տուն գնողներն էլ իրենց կողմից են վաստակ ուզում: Այս պատահում է աւելի յաճախ, երբ աները շահագործութեան առարկայ են դառնում. այսինքն՝ երբ՝ մարդիկ դիտմամբ աներ են գնում, աւելի թանգ գնով ծախելու նպատակով: Բ. Առաջը առնելու միջոցներ.

Բնակարանային տագնապի սուղը առնել և համար անհրաժեշտ է ծրագրած ռեֆորմ:

1. Միջոցներ գոյութիւն ունեցող և կառուցանելի բնակարաններին ուսակական բարեփոխութեան համար:

ա) Հարկաւոր է կատարելագործել շինարարական ոստիկանութիւնը այն մտքով, որ օրէնքով որոշուէր, թէ իւրաքանչիւր բնակարան առ առաւելն որչափ բնակիչ պիտի ունենայ և առնուազն ինչ պահանջների գոհացում պիտի տայ, — նայած շինութեան մեծութեան և սենեակների թուին:

բ) Պէտք է հիմնել պետական վերահսկող

կողմութիւն բնակարանների վրայ, որպէսզի հըսկողութեան ենթարկուի, թէ արդեօք նրանց համար սահմանուած որոշումները գործադրուած են թէ ոչ. պէտք է նաև զրի առնել բնակարանների անյարմարութիւնները:

գ) Բնակարանների պլանը և կազմը պիտի կարգի տակ դնել:

2. Միջոցներ բնակարանների քանակական բարեփոխութեան համար:

ա) Հարկաւոր է ընդարձակել բնակարանների համար որոշուած գետնի տարածութիւնը: Ըստ այսմ էլ պէտք է գործ դնել որոշ ծրագիր քաղաքի համայնական գործերը շտկելու, հաղորդակցութիւնը կարգաւորելու, հարկային գործը սահմանելու համար և այլն

բ) Պէտք է հեշտացնել բնակարանների կառուցումը: Սրա համար հարկաւոր է հիմնական քաղաքային ընկերակցութիւններ, այդ նպատակով հասարակական միջոցներից պէտք է փոքր տոկոսով փող տալ. այս նպատակով էլ հարկաւոր կլինի հիմնել յատուկ բանկեր:

Պետութիւնը և քաղաքային վարչութիւններըն էլ իրենց կողմից պէտք է կառուցանեն բնակարաններ իրենց բնուորների և պաշտօնեաների համար: Քաղաքները պիտի հիմնեն նաև, անգլիական օրինակին հետևելով, քաղաքային օթեւաններ:





Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Օ

I.

Օտարագրի բառերի բացատրութիւններ.

Ա (է) նրեակեր — հարցումներ, տեղեկագիրներ: Երբ մի կառավարութիւն կամ մի հաստատութիւն ազգաբնակիւթեան վերաբերեալ տեղեկութիւններ է ուզում հաւաքել անմիջապէս հասարակութիւնից՝ նա սրան հարցումներ է տալիս, որոնց պատասխանները էլ նա օգտուելով ուսումնասիրում է ազգաբնակիւթեան կեանքը:

Աղիքի հարցոցից — տէրութեան գործադիր վարչութիւն:

Ատոմատ — ինքնաշարժ մեքենայ կամ գործիք:

Դնաւարտամետ — ճիւղբաժանմունք մի միջնորդութեան մէջ կամ որեւէ կառավարական հաստատութեան մէջ:

Թէնքետիկ — որեւէ գիտութեան կամ ուսմունքի տեսական կողմը, նրա օրէնքները և կանոնները ուսումնասիրած մարդ (տեսականագետ). (հնդկ. պրակտիկ. տ.)

Պնդուտրիայ — արդիւնագործութիւն կամ արդիւնահանութիւն. սնտեսութեան այն ճիւղը, որ զբաղուած է արտադրուած հում նիւթերը (արդիւնաբերութիւն) մշակելով, ազնուացնելով:

Պուալիդ — աշխատանքի անընդունակ դարձած անձ՝ ծերութեան, հիւանդութեան կամ զբոսաբար պատահարների շնորհիւ:

Պսպակտոր — վերահսկիչ. նա,

որի վրայ պարտականութիւն է դրուած հսկելու, թէ արդեօք մի հաստատութեան մէջ գործազրուում են նրա վերաբերմամբ արուած որոշումները:

Ղիբերալ — ազատական, ազատամիտ. լիբերալ է կոչուած նա, որը քաղաքացիական ազատ կարգերի և սնտեսական ազատ մրցման մէջ է տեսնում հասարակութեան ատաշարիմութիւնը:

Կոմպրոմիս — համաձայնութիւն՝ ձեռք բերած փոխադարձ զիջումների միջոցով:

Կոնգրես — ընդհանուր ժողով, համագումար (որեւէ կոչման կամ քաղաքական կուսակցութեան ներկայացուցիչների ժողով՝ ընդհանուր հարցեր խորհրդակցութեան առարկայ դարձնելու նպատակով):

Մասնայ — ժողովրդական խաւերի բազմութիւն:

Մարկ — գերմանական դրամ, որ անուամ է ուսական փողով մօտ. 48 կոպէկ:

Մարսիմալ — ամենամեծ, ամենաերկարատև. մ. աշխատանքի օր — էրբ որոշուած է լինում, թէ ամենաշատը օրուայ ընթացքում քանի՞ ժամ պիտի աշխատէ բանուորը:

Միտաֆիզիկայ — բնագանցութիւն. փիլիսոփայութեան կամ գիտութեան մէջ այն մասը, որ զբաղուած է իրերի և երևոյթների վերջնական պատճառների ուսումնասիրութեամբ, որոնք չեն կարող լինիլ փորձի և գիտողու-

թեան առարկայ:

Միստոր — (անգլ.) պարոն:

Տիլլիգ — անգլիական դրամ, որ անուամ է ուսական փողով 50 կւ. Ռոտտալիայ — ցնորք, անիրագործելի ձգտում, իրականութեան հետ ոչ մի կապ չունեցող հասկացողութիւն:

Պատրիարքալիզմ — նահապետականութիւն. այնպիսի ուղղութիւն, որի համաձայն ժամանակակից հասարակական-սնտեսական կարգերը հնարաւոր է նահապետական շրջանի կարգերին վերածել:

Պեննի — անգլիական դրամ, որ անուամ է ուսական փողով 8 1/4 կւ.

Պետրիցիայ — հանրագիր, հասարակութեան զանազան խաւերի կողմից բարձրագոյն իշխանութեան անունով դրուած խնդիր: Պերսպեկտիւ — հեռանկար, փոխապագայ:

Պլան — յատակագիծ (շինութեան):

Պրակտիկ — նա, որ իւր ծանօթութիւնները ձեռք է բերել անմիջապէս փորձառութիւնից, գործերից. կամ նա, որ զբաղուած է որևէ գիտութեան ոչ թէ տեսական (թէորետիկ), այլ գործնական կողմով (հնդ. թէորետիկ):

Պրոբլէմ — հարց, խնդիր, որ դեռ լուծուած չէ, այլ վիճարանութեան առարկայ է, որ կարօտ է գիտական ուսումնասիրութեան: Պրոլետար — սեփականագուրկ և օրավարձով ապրող բանուոր մարդ:

Պրոլետարիատ — ժողովրդական այն դասակարգը, որ գուրկ է սեփականութիւնից, օր աշխատում է օր ուտում. բանուորական (Գ-րդ) դասակարգ:

Պրոֆեսսիոնալ — արհեստակցա-

կան, գործակցական. միևնոյն արհեստին կամ դործին վերաբերող: Ռեֆորմ — բարեփոխութիւն կամ վերափոխութիւն իշխող կարգերի:

Սեկցիայ — բաժանմունք, մաս. (սով. գիտական ժողովների կամ ուղղութիւնների): Սոցիալական — բնկերական, հասարակական:

Սոցիալիզմ — սնտեսագիտական այն վարդապետութիւնը, որ աշխատանքի և աշխատուոր դասերի պաշտպան հանդիսանալով բարոյում է անձնական սեփականութեան վերացումը, հողի և արդիւնագործութեան միջոցների համայնացումը:

Սուբէկտիւ — անհատից՝ իրենից առանջացած սուբալյոտատգրութիւն — այնպիսի ա., որի պատճառը անհատական պայմանների մէջ պիտի որոնել:

Սպեկուլացիայ — շահգիտական ձգտում, շահահնդութիւն:

Ստատիստիկայ — վիճակագրութիւն. տուած թուերի հիման վրայ արուած ուսումնասիրութիւն:

Տերստիլ — մանուածեղէնի, չլէթեղէնի. տ. արդիւնագործութիւն — մանուածեղէն, չիթ պատաստող արդիւնագործութիւն:

Trucksystem — բանուորին գործարանի արտադրած ապրանքով (փոխանակ փողով) վարձատրելու եղանակ:

Փակտոր — գործոն, ազգակ. հասարակական ֆ. — հասարակութիւնը շարժող, առաջ մղող ոյժ, պայպիսար:

Փեննիգ — վերմանական դրամ, որ անուամ է ուսական փողով մօտ. 1/2 կոպէկ:

Փէոլոլակալ — աւատական:

Ֆեռոալիզմ — աւատականութիւն. հասարակ. — տնտեսական այնպիսի եղանակ միջին դարում, որով ասպետ-կալուածատէրերը տէր էին հողի, իսկ նրանց ձեռքի տակ հողագարծ-շինականները ձորտեր միայն:

որոշ շրջանակում կատարուող դործ:

Օրեկտիւ (հեղի սուրեկտիւ) — իրերի գրութիւնից և ոչ թէ անհատից կախուած (վիճակ, հասկացողութիւն):

Օպտիմիստ — լաւատես. ամեն բանի մէջ լաւ կողմը տեսնող մարդ:

II. ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՅՄՆԿ *)

Անգլիա (Մեծ-Բրիտանիա) — 86, 35, 66, 98, 101, 134.
Աւստրիա — 65, 137.
Բաղեն — 98.
Բաղել — 137.
Բաւարիա — 98.
Բելգիա — 65, 98, 137.
Բերն — 129.
Բոնապարտ — 12.
Բրեմեն — 78.
Բրիւսսել — 96, 97.
Գերմանիա — 20, 65, 76, 80, 87, 89, 101, 103, 132, 133.
Դանեմարք — 65, 98.
Եւրոպա — 64, 135.
Փրնկ — 137.
Իտալիա — 65, 98, 136.
Լիոն — 97, 135.
Լոնդոն — 9, 12, 13.
Վարլայլ, Թոմաս — 41.
Կէօն — 78, 97, 129.
Հիրշ-Դունկերեան բանու-

րական միութիւններ — 71, 74, 76.
Հոլլանդիա — 65, 138.
Հորն — 13.
Մայր, Գէորգ ֆոն — 130:
Մեծ-Բրիտանիա-տ. Անգլիա.
Միաց.-Նահանգ. 64, 65, 66.
Յիսուս — 12, 13.
Նելսըն — 12.
Նիւշատեղ — 137.
Նիւրնբերգ — 78.
Նորուեգիա — 65, 98.
Շեպպերգ, Չակ — 12.
Շուեդիա — 65, 98.
Շուեյցարիա — 65, 98, 137.
Ունգարիա — 65.
Պարիզ — 97, 136.
Պրուսիա — 98, 101.
Պօղոս առաքեալ — 12.
Ռուսիա — 98.
Սաքսոնիա — 98.
Սին-Գալլեն — 129.

*) Թւանշանները ցոյց են տալիս զրքի երկաններ.

Սոդոմոն թագաւոր — 12.
Սպանիա — 65.
Վելլինգտոն 12.
Վիլհելմ II. — 96.
Վիւրտեմբերգ — 98.

Տուրքին, Դիկ — 12.
Յիւրիխ — 96, 137.
Ֆրանկֆուրտ (Մայնի վրայ) — 78.
Ֆրանսիա — 36, 65, 134, 135.

III. ՆԻԹԵՐԻ ՅՄՆԿ

Անարոյականութիւն — 5, 13, 15, 16, 19.
Անգլ. անբեաններ — 1 — 16.
Աշխատադրկութիւն. (Arbeitslosigkeit, безработица).
Ինչ է աշխատադրկութիւնը — 120 — 121.
աշխատադրկութ. ծաւալը — 121, 122.
աշխատադրկ. առաջը առնելու միջոցներ — 127 — 129
Աշխատանք
աշխատանքը իբրև շուկայի սպրանք — 57.
աշխատանքի բարձրագոյն խորհուրդ (Conseil supérieur du travail — 1. Իտալ. 137, 138. 2. Ֆրանսիայում — 134.
աշխատանքի բիւրոներ. (Arbeitsbureaux, Office du travail, бюро труда).
1. Բելգիայում — 137.
2. Իտալիայում — 136.
3. Նիւ-Շորկում 64.
4. Ֆրանսիայում — 135.
աշխատանքի բորսաներ.

(Bourses du travail, Arbeitsbörsen, биржи труда)
1. Բելգիայում — 138.
2. Ֆրանսիայում — 136
աշխատանք. զեպարտամենտ Անգլիայում (Labour Department) — 134.
աշխատանքի խորհուրդներ. (Arbeitsrat, Conseils du travail, камеры труда).
1. Աւստրիայում — 137.
2. Ֆրանսիայում — 135, 136.
աշխատ. մասնականացում (Arbeitspezialisierung) — 25.
աշխատանքի միջազգ. բիւրոյ (Բաղելում) — 97.
աշխատ. ստատիստ. — 130.
աշխ. ստատիստիկ. բիւրոյ.
1. Աւստրիայում — 137.
2. Հոլլանդիայում — 138.
աշխ. տեղութիւն 5, 6, 8.
գիշերային աշխատանք — 9.
Աշխատանքի միջնորդութիւն կամ աշխատացոյց մարմիններ (Arbeitsnachweis priiskanie работы). 1. անձն. հարցու-փորձի միջոցով — 123, 124.

2. Լրագրական յայտարարութիւններով — 124—3.
մասնաւոր միջնորդութիւն — 124—4. բարեգործական աշխատացոյց մարմիններ — 125—5. աշխատանքի ցուցումն շահագրգռուած կողմերի միջոցով — 125—6. հասարակական աշխատացոյց կազմակերպութիւն — 125, 126—7. աշխատացոյց մարմիններ Հոլլանդիայում — 138.
Ապահովագրութիւն (բանուորական. Arbeiterversicherung, страхование рабочих) — 101—118.
ապահովագրութեան հախնական եղանակները.
ա. մասնաւոր ապահովագր. — 102, 103.
բ. գործատիրոջից ստացած հատուցում — 103.
գ. ազբատների խնամատարութիւն — 103, 104.
Բանուորների պետական ապահովագրութիւնը Գերմանիայում — 105—118.
1. ապահովագրութիւն հիւանդութ. դէմ — 105—111.
ա. ապահովագրուող անձ. շրջանը — 105—107.
բ. ապահովագրական կապակերպութիւն. — 107—109.
գ. ապահովագրութեան արգիւնքները — 109.

դ. եկամուտի ազդիւրներ — 109.
ե. ստատիստիկ. — 110, 111.
2. ապահովագրութիւն դրժրախտ պատահարների դէմ — 112—116.
ա. ապահովագրուող անձերի շրջանը — 112.
բ. ապահովագրութեան արգիւնքներս — 113.
գ. միջոցների հայթհայթում — 114.
դ. ստատիստիկայ — 115, 116
3. խնուարիդների և ծերերի ապահովագրութիւն — 117, 120.
ա. ապահովագրուող անձերի շրջանը — 117, 118.
բ. ապահովագրող կազմակերպութիւններ — 118.
գ. ապահովագրութեան արգիւնքները — 118, 119.
դ. միջոցների հայթհայթում — 119.
ե. ստատիստիկայ — 120.
4. ապահովագրութիւն աշխատազրկութեան դէմ (Անգլ.) — 129.
Արդիւնագործական գատարաններ (Gewerbegerichte, промышленные суды) — 132.
1. Աւստրիայում — 137.
2. Բելգիայում — 138.
3. Գերմանիայում — 132.
4. Իտալիայում — 137.

5. Շուէյցարիայում — 137.
6. Ֆրանսիայում — 135.
Բանուորներ.
տղամարդ, կին, պատանի և մանկահասակ բանուորներ. վարժուած և անվարժ բ. — 20.
կրեխայ. բանուորներ և նըրանց զրութիւնը — 3, 4, 8.
կրեխայ և կին բանուորների աճելը գործարաններում — 29.
կին-բանուորներ — 5.
բանուոր և մեքենայ — 25, 26.
Բանուորական հարց. Բնէյ և Նշանակում բ. հ. — 35.
բանուոր. հարցի ծագումը — 32—34.
բան. հարցը լուծելու փորձեր — 35.
բանուորական բորսաներ (Ֆրանս.) — 136.
բանուորական խորհուրդներ (Իտալ.) — 137
բանուորական սեկրետարիատներ — 77, 78.
բ. ս. Շուէյցար. — 137.
բանուորական ստատիստիկայ Գերմանիայում — 133, 134,
Բարեգործական հաստատութիւններ — 42.
Բնակարանային ռեֆորմ — 138—143.

Բնակ. ռեֆորմի կարեորութիւնը — 138, 139.
բնակ. տաղնապաների պատճառները — 140.
բնակ. տաղնապաների առաջը առնելու միջոցներ — 142, 143.
բնակ. սպեկուլացիայ — 141, պետական վերահսկողութիւն բնակարանների վըրայ — 142, 143.
բնակարաններ, պետակ. և և քաղաք. վարչութիւնների ձեռքով կառուցուող — 143.
Գործարանական օրէնստուութիւն կամ աշխատանքի պաշտպանութիւն (Arbeiterschutz կամ Fabrikgeselzgebung. охрана труда կամ фабричное законодательство) — 88—101.
գործար. օրէնստուութեան էութիւնը — 88.
գործ. օրէնստուութեան գլխ. կէտերը — 88—90.
գործ. օրէնստ. դէմ առջ բերած գլխ. պատճառաբանութիւններ — 90—95.
Բրիւսսելի և Յիւրիխի կոնգրեսներ միջազգային օրէնստուութեան համար — 96, 97.
«գործարանական օրէնստուութեան միջազգային դաշնակցութիւն» (Assoti-

ation internationale pour la
 legislation du travail—97.
 գործարանական օրէնստու-
 թեան ծագումը զանազան
 երկիրներում—98.
 Գործ. օրէնստ. Գերմանիայում
 —98—101.
 ընդհանուր որոշումներ—99.
 որոշումներ կին և փոքրա-
 հասակ բանուորների վե-
 րաբերմամբ—99, 100.
 «երեխաների պաշտպանու-
 թեան» (Kinderschutz) օ-
 րէնքը—100.
 գործար. ինսպեկտորներ—
 101.
 Բուրժուայ—19.
 դաստիարակութիւն — 12—
 15.
 լեռնային գործարաններ
 (Անգլիա)—3—7.
 հիւանդութիւն—7, 11.
 մանչեստրականութիւն. տես
 ուտոպիայ (լիրերայ).
 Մեքենայ և աշխատանք—24—
 29.
 Մեքենայի աշխատանք և
 ընտանեկան ու հասարա-
 կական կեանքի խախտում
 —30—32.
 Միջնորդ դատարաններ
 ա. Գերմանիայում—133.
 բ. Հոլլանդիայում—138.
 Շինարարական բանկեր—143.

շինար. ընկերութիւններ —
 143.
 շինար. ոստիկանութիւն —
 142.
 Ուտոպիայ
 լիրերայ ուտոպիայ—36—39
 սոցիալիստական ուտոպիայ
 —39—40.
 պահպանողական - յետադի-
 մական ուտոպիայ—40—
 45.
 Պրոլետարիատ
 ի՞նչ ենք հասկանում պրո-
 լետարիատ ասելով—18.
 պրոլետարիատ և կապիտա-
 լիզմ—19.
 պրոլետարիատի պատմա-
 կան անհրաժեշտութիւնը
 —18, 19.
 պ-ի կենցաղավարութիւնը
 —20.
 պ-ի գոյութեան անապահո-
 վութիւնը—21, 22.
 պ-ի կախումը գործատիրո-
 ջից—22, 23.
 պրոլետարներ—19.
 պրոլետարներ և արհեստ-
 ւորներ—20.
 Պրոֆեսսիոնալ բանուորական մի-
 ութիւններ (Gewerkschaften,
 профессиональные организа-
 ции)
 պրոֆեսսիոնալ միութիւն-

ների էութիւնը — 49 —
 50.
 պր. միութիւններ և միջնա-
 դարեան համբարութիւն-
 ներ—50—53.
 պրոֆեսսիոնալ-բանուորա-
 կան շարժում և սոցիալիզմ
 —54.
 պրոֆ. միութիւններ և նը-
 պաստամատոյց կասսան-
 ներ—55, 56.
 պր. միութ. և աշխատանքի
 պայմանների կարգաւոր-
 ում—57—61.
 պր. միութ. և աշխատազուրկ
 բանուորների հոգատարու-
 թիւն—59.
 պր. միութիւններ և գործա-
 դուլ—62, 63.
 պր. միութ. իբրև կուռի
 կազմակերպութիւններ—
 61.
 պր. միութ. և աշխատանքի
 խմբական պայմանադրու-
 թիւն—63, 64.
 պր. միութ. անդամների թի-
 ւը զանազան երկիրներում
 —65.
 պր. միութիւնները Անգլի-
 այում (Trade Unions) —
 66—69.

պր. միութ. Գերմանիայում
 (Gewerkschaften, Gewerk-
 vereine)—70—78.
 պր. միութիւնների գործու-
 նէութեան սահմանափակ
 լինելը—79—83.
 Սպառողական կազմակերպու-
 թիւններ (Konsumvereine,
 потребительные обще-
 ства)—84, 87.
 սպ. կազմակերպութեան է-
 ութիւնը—84.
 սպ. կազմակերպութիւննե-
 րից ծագող առաւելութիւն-
 ները—85, 86.
 սպ. կազմակերպութիւնների
 աճումը Անգլիայում—87.
 Մտունդ—10
 Սոցիալ.ոեֆորմականներ—45 —
 49, 140.
 «սոցիալական ոեֆորմի ըն-
 կերակցութիւն» Գերմա-
 նիայում (Gesellschaft für
 die soziale Reform)—47,
 97.
 սոցիալական բաղաբաղա-
 նութիւն—103.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՌՍՁԻՆ ԳՂՈՒՆ

Երև

Թէ ինչպէս ծագեց «բանուորական հարցը»

1. Անգլիական կապոյտ զբերից 3—18
2. Փամանակակից պրոլետարիատի գրութեան բնորոշ առանձնայատկութիւնները 18—32
3. «Բանուորական հարց»-ի ծագումը 32—35

ԵՐԿՐՈՐԳ ԳՂՈՒՆ

Բանուորական հարցը լուծելու փորձեր 35—49

ԵՐՐՈՐԳ ԳՂՈՒՆ

Պրոֆեսիոնալ-բանուորական շարժում

1. Պրոֆեսիոնալ կազմակերպութեան էութիւնը 49—64
2. Պրոֆեսիոնալ-բանուորական միութիւնների քանակը և գործունէութիւնը եւրոպական երկիրներում 64—79
3. Պրոֆեսիոնալ-բանուորական շարժման սահմանները 79—84

ՉՈՐՐՈՐԳ ԳՂՈՒՆ

Սպառողական կազմակերպութիւններ 84—87

ՀԻՆԳԵՐՈՐԳ ԳՂՈՒՆ

Գործարանական օրէնստուութիւն (աշխատ. պաշտպան.)

1. Գործարանական օրէնստուութեան էութիւնը և արդիւնք. 88—95
2. Միջազգային որոշումներ գործ. օրէնստ. վերաբերմամբ 95—97
3. Գործարանական օրէնստուութեան ներկայ վիճակը 98—101

ՎՅՅԵՐՈՐԳ ԳՂՈՒՆ

Բանուորական ապահովագրութիւն

1. Ընդհանուր հայեացք 101—104
2. Բանուորների պետական ապահովագր. Գերմանիայում 105—120

ԵՑԹԵՐՈՐԳ ԳՂՈՒՆ

Աշխատազուրկ բան. հոգատարութեան հարցը

1. Աշխատազրկութեան հարցը 120—123
2. Աշխատացոյց մարմիններ 123—127
3. Միջոցներ օրէկտիւ աշխատ. և նրա վնաս. հետևանք. դէմ 127—129

ՈՒԹԵՐՈՐԳ ԳՂՈՒՆ

Սոցիալական մարմիններ

1. Ընդհանուր հայեացք 130—131
2. Իրաւական գրութ. առանձին-առանձին երկիրներում 132—138

ԻՆՆԵՐՈՐԳ ԳՂՈՒՆ

Բնակարանային ռեֆորմ

1. Ընդհանուր հայեացք 138—140
2. Մեծ քաղաքների բնակարանային հարցը 140—143

Յ ա լ ե լ ո լ ա ծ

1. Օտարազգի բաների բացատրութիւններ 144—146
2. Յատուկ անունների ցանկ 146—147
3. Նիւթերի ցանկ 147—151



ԲՈՒԿ. ՆՈ 606
ԳՐԱԳԵՐ
Հ.Ռ. 4

Հրատարակող

ՎԱՃԱՌԻՈՒՄ ԵՆ

1. Թյուրս-Գալիք ժողովրդական—գիւցազնական վէպ. գինը 30 կոպ.
2. Պրոմ. Վ. Զամբարս. Տնտեսական և սոցիալ-քաղաքական հարցեր—գինը 10 կոպ.

պատրաստում է ազգային թեան համար

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ ըստ Գուժալովիչի (250—300 էր.)

Թարգմանչի և գրավաճառների մօտ կարելի է գնել նաև Մանուկ Աբեղեանի հետևեալ աշխատութիւնները

1. Հայ-ժողովրդ. առասպելները Մ. Խորենացու հայոց պատմ. մէջ գինը 1 ո. 50 կ.
3. Ժողովրդական խաղեր (ուսումնասիրութիւն) գ. 50 կ.
3. Der armenische Volksglaube . . . գ. 1 ո. 20 կ.

Գինը թիֆլիսի Գուտաներերգ և ժիւս հայ գրավաճառներին, նաև Թարգմանչին՝ այս հասցէով: Тифлисъ, армян. Семинарія Нерсесянъ, А. Аберіанъ.

Գուժարով գնողները ստանում են 200/0 զեղջ:

ՀՀ Ազգային գրադարան



NL0201189

